

17697

17698

17699

17700

17701

17702

17703

891.99

U-94

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

ԿՕՄԵԴԻԱ

Այս խաղի անգամ ներկայացրել են լատերատեները՝ Թեֆլերի Ալե-
քանական թատրոնում, 1890 թվ. Յունուարի 29-ին, յոթուր-
շայտ Գրամսթիկան ընկերություն:

uv

ԱՐՈՒՄԻՆԵՐ

ԿՈՄԵԴԻԱ ՀԻՆԴ ԵՐԱՐՈՒՄԺՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱՐՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՅԻ

Дозволено цензурою. Тифлисъ, 10-го февраля 1896 года.

$$\begin{array}{r} 995 \\ 1001 \end{array}$$


ԷԼԵՄԵՆՏԱՐԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(փոփոխած)

Типографія И. Мартиросіанца. Тифлісь, Орб. ул., д. 1—2.

ፊ ፋ ፍ ሊ ለ ፀ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ
1896

ՏԻԿԻՆ ՍՈՓԻԱ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻՆ

Անգուգական իմ Սօֆի.

«Ամուսիններ» կոմեդիայիս ընագիրը ես նուիրեցի Բեզ մեր ամուսնութեան քսանեւինգամնայ տարեդարձին:

Այժմ, հասարակաց սեպհականութիւն դարձնելով այս երկը, ես թոյլ եմ տալիս ինձ վերստին Բո անարատ անունով զարդարել սրան:

Թո՛ղ Բո մաքուր կենցաղը պաշտպանէ գրուածքիս իմաստն ու նպատակը եւ թող Բո բարեկրթութեան ճառագայթը լուսազարդէ այն սրտկերները, որ ես նկարագրել եմ սրա մէջ:

Բո Գաբրիէլ:

ԴՈՐԺՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐԿԱԴԻ ՍԱՄՍՈՆԵԱՆ, նշա-

նաւոր պաշտօնեայ Պ. Պ. ԳԱԼԱՆԹԱՐԵԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏ, նրա կենը Օր. Ե. ՆԱԶԱՐԵԿԵԱՆ

ԱՐԷԼ ՄԱՍՏԱԿԵԱՆ, Սամսոնեա-

նի ստորագրեալ Պ. Ա. ՄԱՆԴԻՆԵԱՆ

ԷԼԻՋ, սրա կենը Օր. Շ. ԽԻԹԱՐԵԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՐՎԱՌԵԱՆ, այ-

րի կեն Տ. Մ. ԽՈՍՐՈՎԵԱՆ

ՀԵՂԻՆԷ-ԱՆԹԱՌԱՄ, որը աղ-

ջիկ, վարժուհի Տ. Հ. ԱԻԹԱՆԴԻԼԵԱՆ

ԱՐՏԱՇԷՍ ԱՐԱՄԵԱՆ, սպայ Պ. Վ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԼԵՒՈՆ ՂԻՐԱԿԵԱՆ, զեւղա-

տանա Պ. Ն. ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԳԱՅԻԱՆԷ | մի խումբ Օր. Վ. ՂՈՒԼԻՋԱՆԵԱՆ

ԼՈՒՍԻԿ | որ խորհրդէր Օր. Ս. ՀԵՋՈՒԲԵԱՆ

ԱՍՏՂԻԿ | Օր. Ե. ՍՈՒՐԳՈՒՆԵԱՆ

ԱՆՈՒՇ | մի ուրիշ խումբ Օր. Մ. ԲՈՒՎԴԱՆԵԱՆ

ՆՈՒՆՈՒՇ | որ խորհրդէր Օր. Ս. Մ. ԱՍԻԼԵԱՆ

ՀՈՒՓՍՈ | Օր. Ն. ՂԱԼՈՒՄԵԱՆ

ՍԷՍԻԼ, աղախին Օր. Մ. Մ. ԱՍԻԼԵԱՆ

ԱՆԱՀԻՏ, մի ուրիշ աղախին Օր. Ս. ՀԵՋՈՒԲԵԱՆ

ՍՊԱՍԱՌ Պ. Գ. ՄԻՐԱՂԵԱՆ

Առաջին արարուածը կատարուած է «Փողովարանի» աջգում,
երկրորդն ու երրորդը Սամսոնեանի տանը, իսկ չորրորդն
ու հինգերորդը Մարգարտի և Հեղինէի կացարանում:

Անջըը պատահում է Թիֆլիզում:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՅ ՀԱՍՆԿԸ

Արկաղի՝ 42 տարեկան:

Մարգարիտ՝ 25 տ.

Աբէլ՝ 50 տ.

Էլիզ՝ 27 տ.

Վարդուհի՝ 30 տ.

Հեղինէ՝ 22 տ.

Արտաշէս՝ 30 տ.

Լևոն՝ 28 տ.

Գալիանէ՝

Լուսիկ՝ 20—22 տ.

Ասողիկ՝

Անուշ՝

Նունուշ՝ 18—20 տ.

Հռիփսօ՝

Սէսիլ՝ 20 տ.

Անահիտ՝ 30 տ.

Սպասաւոր՝ 45 տ.

Ամենքն էլ եւրոպական հագուստով:

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Բեմը ներկայացնում է «Թիֆլիսի ժողովարանի» այգին ընտանեկան երեկոյթի ժամանակ: Աջ ու ձախ, ծառերի տակ, նստարաններ. խորքումը ուտօնդ, ուր ժամանակ առ ժամանակ պարում են:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԷԼԻՋ, ԱՐԿԱՆԻ, Գալիէնէն Կալիէնէն:

ԷԼԻՋ

Ես ինչպէս տեսնում եմ, դու ոչ մեայն կնոջդ ես խաբում, այլ ինձ էլ ես խաբում, պարոն:

ԱՐԿԱՆԻ

Մեղք չէ հոգուդ, որ այդպէս ես խօսում:

ԷԼԻՋ

Ուղիղ խօսելը որ մեղք է, ուրեմն քո արարմունքը կը լինի արդար, հայ:

ԱՐԿԱՆԻ

Կարելի է շատ էլ մեղաւոր եմ, բայց քո առաջ, Էլիզ, Երկինք վկայ, միշտ արդար եմ եղել:

ԷԼԻՋ

Ինչպէս այսօր. գիտեմ, գիտեմ:

ԱՐԿԱԳԻ

Այսօր էլ, վաղն էլ, միշտ և յաւիտեան:

ԻԼԻՋ

Սո՛ւս, սո՛ւս. այսօր էլ, վաղն էլ, միշտ և յաւիտեան
էլ սուտ ես իմ առաջ, սուտ, միշտ սուտ:

ԱՐԿԱԳԻ

Հոգեանկս:

ԻԼԻՋ

Ճշմարիտն ասա, քանի անգամ ասացիր նրան այդ
խօսքն այս գիշեր... Դու կարծում ես չտեսնո՞յ...

ԱՐԿԱԳԻ

Ի՞նչ, ի՞նչ...

ԻԼԻՋ

Անիրան:

Նստում է չափ փոքր:

ԱՐԿԱԳԻ, նստելով մօտը:

Իլի՞ճ:

ԻԼԻՋ

Թե՛ւ-թե՛ւի տուած, որ գնում էիք այս ընկերս...

ԱՐԿԱԳԻ

Ի՞նչ կայ որ...

ԻԼԻՋ

Եթէ քաղաքավարի գնացիք, ի հարկէ ոչինչ. բայց
այնպէս կպել էիք մէկ մէկու, որ ձեր տեղը ես
ամաչեցի այսքան բազմութեան մէջ... Միայն մէկ
պաշն էր պակաս. էլ ինչի՞ն էիք սպասում:

ԱՐԿԱԳԻ

Ի՛հ, զարմանալի ես, ճշմարիտ:

ԻԼԻՋ

Հը՛մ, անօրէն, թող մէկ էլ տեսնեմ:

Հովարդը սպասում է:

ԱՐԿԱԳԻ

Լա՛ւ, լա՛ւ, դու ինձ այն ասա, ընթրիքը հօ միա-
սին ենք ուտելու այստեղ:

ԻԼԻՋ

Եթէ արժան կը համարես, պարոն:

ԱՐԿԱԳԻ

Հերիք է, խնդրում եմ:

ԻԼԻՋ

Ինչի՛, կարելի է նրա հետ աւելի անուշ է թվում
քեզ:

ԱՐԿԱԳԻ

Եթէ չես վերջացնելու, գիշեր բարի:

Կաճե՞նում է փոքր:

ԻԼԻՋ, բռնելով:

Լա՛ւ, լա՛ւ, այս մէկ անգամ ներում եմ. համեցէք
ընթրենք միասին... Բաց կինդ ինչ կ'ասէ:

ԱՐԿԱԳԻ

Ի՞նչ պիտի ասէ:

ԻԼԻՋ

Այս քանի ժամանակ է, հետս թթուած է, չզի-
տեմ՝ ինչ եմ արել:

ԱՐԿԱԳԻ

Ի՛հ, դու նրա կապրիզներին ինչ ես ուշք դարձնում:

ԻԼԻՋ

Ա՛խ, Արկաղի, այդ ինչ ես ասում: Ես նրան այն-
պէս եմ սիրում, ինչպէս իմ հարազատ քրոջս. երե-

խաչ ժամանակ միասին ենք մեծացել, ես չեմ ուզում վշտացնել նրան:

ԱՐԿԱԴԻ

Աստուած բարի վայելումն տայ:

ԷԼԻՋ

Դու աչդպէս ասա, բայց ես կարծում եմ, թէ մահապարտ եմ նրա առաջ, երեսին ուղիղ նայել անգամ չեմ կարողանում... Եւ այս ամենը քեզ համար, քո սիրոյ համար, իսկ դու այլ ես ինձ չես սիրում:

ԱՐԿԱԴԻ

Դարձեալ:

ԷԼԻՋ

Մի նեղանար, Արկադի, խնդրում եմ, մի նեղանար. ինչ անեմ, որ սիրտս վստահ չէ քեզ վրայ: Ասա, ասա, որ սիրում ես ինձ, էլի այնպէս ես սիրում, ինչպէս առաջ: Դու չգիտես, թէ ինչքան քաղցր է ինձ համար քո բերանից լսել այդ խօսքը:

ԱՐԿԱԴԻ

Ի հարկէ սիրում եմ. քեզ որ չեմ սիրում, հապա հումն եմ սիրում:

ԷԼԻՋ

Եւ բացի ինձանից էլ ուրիշ ոչ ոքի:

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ ոքի, ո՛չ ոքի, վկայ է Աստուած:

ԷԼԻՋ, նայում է այն ու այն կողմ:

Ա՛խ, Արկադի, հոգիս, իմ աստուածը ցու ես:

ԱՐԿԱԴԻ

Դէ, արի ու մի սիրիր... Ի՞նչպէս կարելի է քեզ չսիրել:

ԷԼԻՋ

Ջատ ես սիրում ի՛նձ, շատ:

ԱՐԿԱԴԻ

Ջատ, օ, շատ. արեւս վկայ, շատ:

ԷԼԻՋ

Արեւի մեռնի էլիդ:

ԱՐԿԱԴԻ

Ուրեմն թող իմ արեւը մեռնի, եթէ բացի քեզանից ես կարողանամ ուրիշին սիրել:

ԷԼԻՋ

Ա՛խ, ի՛նչպէս պիտի կը համբուրէի քեզ այժմ:

ԱՐԿԱԴԻ, վէր լաւէլով:

Սը՛ս, դալիս են:

ԷԼԻՋ, յետ նայելով:

Ա՛խ, ամուսինս...

Գնում է դէպի ԱՔԷԼԸ, որ գաւիտ է ու չորհրդի, իսկ Արեւի
ծածուկ դուրս է գնում չորհրդի:

ՏԵՍԻՆ Բ

ԷԼԻՋ, ԱՌԷԼ

ԷԼԻՋ

Այս հրտեղ ես, երանի դիտեմ. ճակներս թուլացան քեզ պարտելով:

ԱՌԷԼ

Վա՛, ես էլ քեզ եմ պարտում: Ո՛ւմ հետ էիր այստեղ:

ԷԼԻՋ

Բարեկամ աղջկերք կային. միասին ման էինք դալիս:

ԱՅԻԼ

Ո՛վ գիտէ քանիսի տունը շինեցիք, քանիսինը քանդեցիք:

ԻԼԻՋ

Ի՛հ, խօսում էինք էլի՛:

ԱՅԻԼ

Դուք ու ձեր խօսելը. մի քանի աղջկերք որ հաւաք-վում էք, էլ վերջ չի լինում ձեր ասա-կօսելին:

ԻԼԻՋ

Իսկ տղամարդիկդ հօ խօսել չգիտէք. խեղճեր, մեղքս գալիս էք:

ԱՅԻԼ

Մենք որ խօսում ենք, Իլիկ, բան ենք խօսում, ապրուստի միջոց ենք որոնում, ձեզ համար ենք մը-տածում... Իսկ ձեր խօսելն ի՛նչ է. բոլորը դատար-կաբանութիւն, միշտ ճօշալ ու բամբասել:

ԻԼԻՋ

Դէ, լաւ է հա՛, ոչ էլ դուք էք մի շատ բարի պտուղը, ձեզ էլ եմ ճանաչում... (Թշն առնելով) Արի մէկ ինձ ռօտօնդի կողմը տար, տեսնեմ աչնտեղ ի՛նչ կա:

ԱՅԻԼ

Աչնքան բազմութիւն կա՛ հաւաքուած աչնտեղ, Իլիկ, որ ասեղ գցելու տեղ չկա. մի ինչ որ վրացի իշխանուհի է եկել նոր, ասում են հիանալի լեզ-վերէն է պար գալիս:

ԻԼԻՋ

Դնանք, գնանք:

ԱՅԻԼ

Առանց ինձ չես կարող գնալ, ի՛նչ է. ես ուզում

եմ նորին վսեմութեանը տեսնեմ. ասացին աչս կողմն է ման գալիս... Հօ չես տեսել:

ԻԼԻՋ

Կարձեմ որ նա էր, աչքովս ընկաւ, մէկի հետ զը-նում էր շատ տաք-տաք խօսելով... Յետ էլ չնայեց նորին վսեմութիւնը, որ գլուխ տալիս:

ԱՅԻԼ

Հէնց միշտ քեզ վրայ է մտածում... Մարդն աշ-խարհքի դորժ ունի, ո՞վ է իմանում գլխումն ինչեր է պտոցա գալիս:

ԻԼԻՋ

Ձէ, ինչ ուզում ես ասա, Աբէլ, բաց նա էլ աչն չէ:

ԱՅԻԼ

Ախար, հոգիս, աչն մարդը հօ չի կարող միշտ մեր յետեւից ման գալ... Իլի փառք Աստուծոյ, որ ժամա-նակ է դանում երբեմն մեզ ես մտաբերելու. հազար դորժի տէր է, ասում եմ:

ԻԼԻՋ

Աստուած տա՛ իր բանն աջողաչ... Ահա նա է, աչս կողմն է գալիս:

ՏԵՍԻԼ Գ.

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԳԻ

ԱՅԻԼ, լռելով Իլիկին:

Սպասիր: (Աւելի) Ձերդ վսեմութիւն, մէկ ժամ է, ձեզ եմ որոնում:

ԱՐԿԱՂԻ

Ա՛, բարեւ, պ. Աբէլ: Ես էլ ձեզ էի որոնում...
Բարեւ ձեզ, յարգելի տիկին. այս ուր էք, չէք երեւում. նոր եկաք:

ԻԼԻՋ

Ձեզ ասացէք, պարոն. մօտիցս անցնում էք ու վրաս էլ չէք նայում:

ԱՐԿԱՂԻ

Այդ երբ:

ԻԼԻՋ

Ա՛յ, փոքր ինչ առաջ. չգիտեմ ում հետ էլ լսօսակցելով գնում էիք:

ԱՐԿԱՂԻ

Ձեմ տեսել, ճշմարիտ, եթէ ո՛չ ինչպէս չէի բարեւիլ ձեզ:

ԻԼԻՋ

Բայց և այնպէս, էլ առաջուկայ նման ուշադիր չէք դէպի մեզ: Առաջ շաբաթ չէր անցնիլ, որ մէկ անգամ գոնէ չհանդիպէիք մեզ, իսկ այժմ ամիսներ է անցկենում, շնորհ չէք բերում մեր տունը:

ԱՐԿԱՂԻ

Ի՞նչ անեմ, տիկին, ներեցէք, խնդրում եմ... Դուք գիտէք, որ ես ձեզ շատ եմ յարգում ու պատվում, միայն սաստիկ զբաղուած եմ. մի ներանաք, խնդրում եմ:

ԻԼԻՋ

Դուք գիտէք:

ԱՐԿԱՂԻ

Հաւատացէք, տիկին, ինչ եղել եմ, միշտ էլի նոյնն եմ ձեզ համար:

ԱՅԻԼ

Ձերդ վսեմութիւն, դուք էլ որ կինարմատի խօսքը բանի տեղ էք դնում, զարմանում եմ, ճշմարիտ... Միթէ կարելի է սրանց ասածին նշանակութիւն տալ:

ԻԼԻՋ, ԱՔԷԼԻ՜:

Չա՛տ շնորհակալ եմ, պարոնս:

ԱՐԿԱՂԻ

Ինչո՞ւ, պ. Աբէլ, տիկնոջը ես շատ եմ պատվում, դուք էլ լաւ գիտէք, և բնաւ չէի ցանկանալ, որ դուք տեղն ինձանից նեղանար:

ԱՅԻԼ

Ձերդ վսեմութիւն, մենք հօ աչսօրուկայ բարեկամներ չենք. թէ դուք մեր խաթրն ու պատիւն ունիք, մենք էլ ձերը պակաս չունինք՝ ոչ ես, ոչ էլ սա, հաւատացէք, և ինչ որ ասում է, այն էլ ձեզ յարգելուցն է ասում, լաւ իմանաք:

ԻԼԻՋ

Ի հարկէ սրտանց յարգում եմ, և հէնց դրա համար եմ նեղանում, որ ուշ-ուշ ենք հանդիպում:

ԱՐԿԱՂԻ

Չա՛տ շնորհակալ եմ, տիկին. կը գամ, կը գամ, մի նեղանաք:

ԻԼԻՋ

Կը տեսնենք... Առաջժմ մնա՛ք բարեւաւ, դուք էլ դուք այստեղ առանձին գործ ունիք, ես մի գնամ տեսնեմ այն կողմն ինչ կայ... Անշուշտ այս երեկոյ դարձեալ պատիւ կ'ունենամ ձեզ տեսնելու:

ԱՐԿԱՂԻ

Անտարակոյս, տիկին, անտարակոյս:

Ելելու քնո՛ւմ է, հաղորդութեամբ յէր նայելով Արքայիկին, յէրոյ
պատահելով ճի խո՛սք է՝ հոռոյ, նրոնց հէր հեռանում է:

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, հոռոյ ԷԼԻԶԻ

ԱՐԿԱՂԻ

Հրամայեցէք, Աբել-աղա:

ԱՅԻԼ

Հրամանքդ շատ... Աղան էլ դուք էք, ձերդ
վսեմութիւն, պարոնն էլ. ես միայն ձեր խոնարհ
ճառան եմ, միշտ պատրաստ ձեր հրամանները կա-
տարելու... Դուք ինչ էիք կամենում ասել:

ԱՐԿԱՂԻ

Ի՛նչ արիք, տեսնա՛ք. այն պարոններին. ժամա-
նակն անցնում է:

ԱՅԻԼ

Այո, ձերդ վսեմութիւն, այս օրերս բոլոր դործը
կը վերջացնեմ և ամբողջ գումարն անձամբ կը ներ-
կայացնեմ ձեզ... Միայն հիմա մէկ ուրիշ բան ու-
նիմ ասելու, բայց չնեղանաք, աղաչում եմ:

ԱՐԿԱՂԻ

Ի՛նչ է պատահել:

ԱՅԻԼ

Գիտէ՛ք ինչ է, ձերդ վսեմութիւն, ես ձեր լաւ
բարեկամն եմ և ձեզ էլ իմ լաւ բարեկամս եմ հա-

մարում... (Լաւելան:) Ներեցէ՛ք, աղաչում եմ... Ա՛յ,
լեզուիս ծալքին պտոցտ է գալիս, բայց չեմ համար-
ձակվում ասելու, սակայն (Ցոյց դառնալով դուրս) աչտեղ
է հասել:

ԱՐԿԱՂԻ

Վախեցնում էք ինձ, սիրելի բարեկամ:

ԱՅԻԼ

Ո՛չ, ո՛չ, ձերդ վսեմութիւն, դեռ վախենալու
բան չկայ և իմ ջանքն էլ հէնց այն է, որ վերջը
վախենալու չդառնայ:

ԱՐԿԱՂԻ Ժողովարար:

Բոլորովին շուարուեցայ:

ԱՅԻԼ

Ձեր արևը, ոչ ոք չէր համարձակուիլ այս բանը ձեզ
ասելու, բայց էլ ինչի՞ բարեկամ եմ, եթէ սե. օրին
պէտք չգամ և ուղղակի երեսիդ չասեմ ամեն բան:

ԱՐԿԱՂԻ

Դէ, ասացէք ու վերջացրէք էլի:

ԱՅԻԼ

Ասացէք ու վերջացրէք... Լեզուն էլ պիտի գօրէ
ախար թէ՛ ոչ... Արի ու ասա... Հեշտ բան է, կար-
ծում էք, մարդ մարդու կնոջ վրայ բան ասէ:

ԱՐԿԱՂԻ

Ո՛ւմ կնոջ, ինչ էք ասում:

ԱՅԻԼ

Ձեր կնոջ, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱՂԻ, զարհուրած:

Ի՛մ կնոջ... Ես կարծեցի դուք ձեր կնոջ մասին էք
ասում:

ԱՅԻԼ

Ի՞նչպէս թէ իմ կնոջ... Աստուած մի արասցէ, էլ մէկ օր տանը չէի պահել... Զգո՛յշ եղէք, ձերդ վրսեմութիւն: Մի ինչ որ նոր զինուորական է եկել, էլ պոկ չեն գալիս մէկ մէկուց. հա խօսում են ու խօսում... Այս գիշեր ամենքն էլ նրանց վրայ դարձրին իրանց ուշադրութիւնը. իսկ դուք, ով գիտէ, ինչ կարեւոր խնդիրների մասին էիք մտածում այստեղ... Զգուշացէք, ձերդ վսեմութիւն, ապա թէ ոչ, կին-արմատը եթէ մտքումը մի բան դնի, էլ ոչ ոք նրա հախիցը չի կարող գալ. նա իր ուզածը կ'անէ, անպատճառ կ'անէ... Այս էր, եղբայր, իմ բարեկամութիւնը, և յոյս ունիմ, որ ձերդ վսեմութիւնը չի նեղանալ ինձանից... Ես աւելի լաւ համարեցի աչքիցդ ընկնել, քան վաղը միւս օրը ձեր խաչտառակութիւնը տեսնել... Հիմա դուք գիտէք, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱՂԻ

Չա՛տ, շա՛տ շնորհակալ եմ, սիրելիս: (Ձեռքն առնելով): Յատուկ պարտաւորեցրիք:

Ձեռքով փնտռւմ է դէպի ափսոսանք:

ԱՅԻԼ, առանցիկ:

Ի՛նչդ մարդ... Ձեր կնոջ, ասում է... Նրա համար է ասած, որ մարդ իր աչքի գերանը չի տեսնիլ է...

Ի՛նչ-ի՛նչ շարժելով՝ փնտռւմ է խռովում մի խռով մարդուց հեռու:

Ես ամեն ինչ տեսնում եմ:

ՏԵՍԻԼ Ե

ՎԱՐԴՈՒՅԻ, ԱՐԿԱՂԻ

ՎԱՐԴՈՒՅԻ, փառք չա՛ն կոչեց, փնտռւմ է Արշալույսի, միջոցառում:

Ես Բարձրադաս է ափսոսանքի առիթներով:

Պ. Արկաղի, պ. Արկաղի... Սպասեցէք, սպասեցէք, ԱՐԿԱՂԻ

Ա՛խ, դուք էք... Բարեւ ձեզ, աննման իմ տիկին, ՎԱՐԴՈՒՅԻ

Այդ ուր էք շտապում այդպէս:

ԱՐԿԱՂԻ

Ուզում էի կնոջս գտնել:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ի՞նչ է պատահել... Ահա նայեցէք, նա այնտեղ կանանց շրջանի մէջ նստած խօսում է:

ԱՐԿԱՂԻ

Ա՛յ, ճշմարիտ էք ասում:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ի՞նչպէս թէ ճշմարիտ եմ ասում. ես երբ եմ սուտ խօսել:

ԱՐԿԱՂԻ

Ո՛չ, հրաշալի տիկին, ինձ այնպէս ասացին, որ իբր կինս շարունակ մի զինուորականի հետ է խօսում, և յանկարծ զարմացալ, երբ կանանց մէջ տեսայ նրան:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ի՞նչ կա այնտեղ զարմանալու... Հէնց ասեք թէ շարունակ մի զինուորականի հետ է խօսում, ձեզ

կուրի, գոնէ այն ժամանակ կը խղճաք ինձ: (Վարդա-
հիմն ծիծաղում է:) Ծիծաղեցէք, ծիծաղեցէք, տիկին,
իսկ ես հաւատացած եմ, որ դուք այն ժամանակ
դառնապէս լաց կը լինիք, թէ ինչո՞ւ ինձ այսքան
տանջեցիք:

ՎԱՐԴՈՒՆԻ, աւելի է ծիծաղում:

Սև' էլ կը հագնեմ, այնպէս չէ:

Ծարսանում է ծիծաղել:

ԱՐԿԱԴԻ

Ի հարկէ կը հագնէք:

ՎԱՐԴՈՒՆԻ

Լաւ, լաւ, վերջ դնենք այս կատակներին... (Թու-
նաւոր) Բարեհաճեցէք ինձ ռօտօնդի կողմը տանել:
Ի դէպ, դուք կամենում էիք ձեր կնոջը տեսնել:

ԱՐԿԱԴԻ

Ա՛խ, տիկին, խելքից հանում էք մարդու և դար-
ձեալ ինձ էք մեղադրում:

ՎԱՐԴՈՒՆԻ, ընդհանրապէս լինում է:

Ուրեմն ցտեսութիւն:

Ծիծաղելով դուրս է գնում չափ հոգեկոյ:

ԱՐԿԱԴԻ

Տիկին, տիկին... Այլաչում եմ, լսեցէք... (Առանցիկ):
Այս կինը խելագարութեան կը հասցնէ ինձ:

Ծարսանում է ծիծաղելով Վարդա-հիմն յետեւից:

ՏԵՍՈՂ 2

Յըրուզնէր՝ ԳԱՅԻԱՆԵՒ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, 4-

չի՞ էն աջ հոգեկոյ:

ԳԱՅԻԱՆԵՒ, ծիծաղելով:

Ի՛նչպէս քաշ ընկաւ յետեւից:

ԼՈՒՍԻԿ

Տղամարդիկ ամենքն էլ այդպէս են:

ԱՍՏՂԻԿ

Ա՛րի ու մարդ ուզիր:

ԳԱՅԻԱՆԵՒ

Խեղճ Մարգարիտ, յետոյ ինչ աղջիկ է:

ԼՈՒՍԻԿ

Որ իմանայ, սաստիկ կը վշտանայ:

ԳԱՅԻԱՆԵՒ

Ոչինչ չասես, Լուսիկ, մեղք է:

ԼՈՒՍԻԿ

Ո՛չ, ո՛չ, Գարօ ջան, հօ չեմ գժուել:

ԱՍՏՂԻԿ

Ես անպատճառ կ'ասեմ. ինչո՞ւ ճաճկենք... Օ՛, ես
մարդկանց վրայ շատ եմ բարկացած... Այստեղ՝ Աս-
տուած, Երկինք, քեզ շատ եմ սիրում, իմ շունչս ու
կենդանութիւնը դու ես, իսկ այնտեղ՝ մի ուրիշի
յետեւից զլխապատառ վազում են... Ո՛հ, մէկ թող
սպասեն:

ԼՈՒՍԻԿ

Բոլորի վրէժը դու հօ չես կարող հանել:

ԱՍՏՂԻԿ

Ումից էլ որ վրէժս հանեմ, ան էլ մի բան է:

ԳԱՅԻԱՆԵՒ

Ո՛ւմ ինչ կը պակասացնես, Աստղիկ. էլի պէտք է խեղճ կնկաչ սիրտը կոտրես անմեղ տեղը:

ԱՍՏՂԻԿ

Օ՛, անպիտաններ... Իմ օրումը ես մարդ չեմ ուզելու:

ԼՈՒՍԻԿ

Էլի լաւ է մարդ ունենալ, քան թէ անմարդ պառաւել:

Այ՛, ճիշդիւն երեւ ղբանող երկրաստրդներ խորհում էմքնում, խոսում են:

ԳԱՅԻԱՆԵՒ

Յետոյ ինչո՞ւ չես ուզում:

ԼՈՒՍԻԿ

Ախ, Գարօ ջան, ես ուզում եմ, բալց ինձ ոչ ոք չէ ուզում:

ԳԱՅԻԱՆԵՒ

Ինչո՞ւ, ինչո՞ւ է պակաս:

ԼՈՒՍԻԿ, հեգնաբէն:

Փողը...

Բալլրեւեոն բարչրայն ծիծաղում են: Սրկաստրդները խոսելով գնում, ոնկեղանում են:

ՏԵՍԻԼ Է

ՆՐԱՆՔ, ՀԵՂԻՆԻ

ՀԵՂԻՆԻ, գաւառ ոչ էրա՛յն:

Ձեր ծիծաղի ձայնից իմացայ, որ դուք էք լինելու: ԳԱՅԻԱՆԵՒ, շարժացած:

Ախ...

ԼՈՒՍԻԿ, հայնդէն և ճիւղայն ժամանակ:

Վա՛...

ԱՍՏՂԻԿ, հայնդէն:

Հեղինէ՛... (Շարժանալէլով) Այդ դու ես, հոգիս:

ՀԵՂԻՆԻ

Այո, ես ինքս, անգլին իմ Աստղիկ... (Ամենայն յետադարձ) Բարեւ, բարեւ ձեզ...

ԳԱՅԻԱՆԵՒ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, ճիւղայն:

Բարեւ, բարեւ...

ԳԱՅԻԱՆԵՒ, շարժանալէլով:

Ձատ ուրախացայ, Հեղինէ ջան...

ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, ճիւղայն:

Մենք ևս...

ՀԵՂԻՆԻ

Նոյնպէս և ես, իմ թանկագին բարեկամուհիք... Ի՛նչպէս էք, ի՛նչպէս է ձեր առողջութիւնը:

ԳԱՅԻԱՆԵՒ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, ճիւղայն:

Լաւ, լաւ. իսկ դու ի՛նչպէս ես:

ՀԵՂԻՆԻ

Ինչպէս տեսնում էք, փառք Աստուծոյ:

ԼՈՒՍԻԿ

Այս երբ ես եկել. այսպէս յանկարծ զրտեղից
բուսար:

ՀԵՂԻՆԷ

Այսօր առանձնակալ գնացքով եկաց: Այցելութիւն-
ների գլուխ չունիմ, ներեցէք, թող ոչ ոք չսպասի:
Ասացի՛, այս գիշեր ամենքիդ միասին այստեղ կը
տեսնեմ:

ԳԱՅԻԱՆԷ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, Տիտան:

Մենք կը դանք քեզ մօտ...

ԱՍՏՂԻԿ, շարունակելով:

Քո այցելութիւնները դու քեզ համար պահիր:

ԳԱՅԻԱՆԷ, ԼՈՒՍԻԿ, Տիտան:

Այո, այո...

Իբրեւէ երեւոյթութիւն, որ ցած շարունակ շարունակ է Տիտ-
ան այս փոխի վերջը:

ՀԵՂԻՆԷ

Զատ շնորհակալ եմ... Հանգիստ եղէք, ձեզ մօտ
գալու ժամանակ ևս կը գտնեմ:

ԳԱՅԻԱՆԷ

Ուրեմն երկար ես մնալու այստեղ:

ՀԵՂԻՆԷ

Այո, այո, Գարօ ջան, իմ հացն այժմ պիտի այս-
տեղ ճարեմ:

ԳԱՅԻԱՆԷ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, Տիտան:

Օ, այ ուրախութիւն:

ԳԱՅԻԱՆԷ

Այստեղ մենք քեզ համար լաւ պաշտօն կը գըտ-
նենք, հեղինէ ջան:

ՀԵՂԻՆԷ

Անչափ շնորհակալ եմ... Մի վախենաք, քաղցած
չեմ մեռնիլ:

ԳԱՅԻԱՆԷ

Ի հարկէ որ... Բաց մէկ ասան, տեսնենք, գնալդ ինչ
էր, գալդ ինչ. ինչ պատահեց:

ՀԵՂԻՆԷ

Օ, պատմութիւնս երկար է. կ'ասեմ ձեզ, կ'ասեմ,
մէկ օր կ'ասեմ: Միայն ասացէք ինձ՝ Մարգարտին
հօ չէք տեսել. այստեղ է, որ կողմը որոնեմ նրան:

ԳԱՅԻԱՆԷ

Արի, արի, հեղինէ ջան, հէնց այս րոպէիս քեզ
ցոյց տամ նրան. ես գիտեմ, նա որտեղ է նստած:

ԼՈՒՍԻԿ

Ո՛րչափ կ'ուրախանայ, քեզ որ տեսնի:

ԱՍՏՂԻԿ

Էլ ինչ ասել կ'ուզի:

ՀԵՂԻՆԷ

Այո, մենք իրար շատ ենք սիրում:

ԳԱՅԻԱՆԷ, Հեղինէ լին առեւտր:

Անգին մեր հեղինէ:

ՀԵՂԻՆԷ

Անգին քոյրերս...

Ահա, ել ուրախ - ուրախ և լի լի իրաւունքով եմ գնում
այս փոխի վերջը: Երեւոյթութիւնը դադարեց է:

ՏԵՍԻԼ Ը

Օրիորդներ՝ ԱՆՈՒՂ, ՆՈՒՆՈՒՂ, ՀՌԻՓՍՕ, Գալիս

էն սօսաբարէն:

ԱՆՈՒՂ

Օհ, յոգնեցայ:

Նորում է եւ հոգեպաշտ:

ՆՈՒՆՈՒՂ

Իմ օրումն այսքան չեմ պարել:

ՀՌԻՓՍՕ

Ես էլ... Ի՛նչ հիանալի է պարում:

ՆՈՒՆՈՒՂ

Եւ որչափ գեղեցիկ է:

ԱՆՈՒՂ Տօթենալով:

Ո՛վ է գեղեցիկ. իմ մասին էք խօսում:

ՆՈՒՆՈՒՂ

Պ. Լեոնի, որ մեզ հետ պարում էր այժմ:

ԱՆՈՒՂ

Այո, նա բաւականին գեղեցիկ է, միւսնոյն ժամանակ լաւ երիտասարդ եւ շատ էլ գործունեաց:

ՆՈՒՆՈՒՂ

Դու նրան ճանաչում ես, Անուշ:

ԱՆՈՒՂ

Ի՞նչպէս չէ, Նունուշ ջան, նա մեզ ազգական է:

ՄԻՒՄՆԵՐԸ, Գիտէն:

Միթէ:

ԱՆՈՒՂ

Այո:

ՀՌԻՓՍՕ

Ինչո՞վ է պարապում նա:

ԱՆՈՒՂ

Գիւղատնտես է:

ՀՌԻՓՍՕ

Ի՛նչ ես ասում... Ո՛վ կը կարծէր:

ԱՆՈՒՂ

Այո, այո, Հռիփսօ ջան, դու պէտք է տեսնես նրան աշխատելիս, որ հիացած մնաս: Այստեղ, մէկ մօտիկ գիւղում... Եթէ, անուշը մոռացայ... Հողեր ունի վարձած: Ի՛նչ վար ու ցանք, արտեր, այգիներ. գիւղացիք բոլորն էլ նրա արեւովն են երգիւմ: Միշտ նրանց մօտ է, նրանց սովորեցնում է իր գիտութիւնը... Մէկ րոպէ հանգիստ չէ մնում. փորում է, կտրում է, յետոյ գալիս՝ կարդում, գրում. մէկ խօսքով՝ հազար ու մէկ բան է շինում, եւ երբ այստեղ է լինում, այդպէս էլ գեղեցիկ պարում է:

ՆՈՒՆՈՒՂ

Իրաւ որ հիանալի երիտասարդ է եղել... Իսկ այն միւսն ո՞վ է, Անուշ ջան, որ նրա հետ խօսում է, արդեօք չգիտես:

ԱՆՈՒՂ

Ո՛րը, այն գինուորակներ:

ՆՈՒՆՈՒՂ

Այո. ես առաջին անգամ եմ տեսնում նրան այստեղ:

ԱՆՈՒՂ

Միթէ դեռ չգիտես, Նունուշ. նա մեր յայտնի

վիպասան Արտաշէս Արամեանն է, որի գրուածքները մենք այնքան սիրով կարդում ենք:

ՆՈՒՆՈՒՂ

Միթէ նա է, ի՞նչ ես ասում, Անուշ. երևի դու սխալվում ես, հոգիս:

ԱՆՈՒՂ

Ո՛չ, ո՛չ, Նունուշ, նա ինքն է, հաւատա՛ւ. ինձ կէտնն ասաց. նրա սրտակից բարեկամն է:

ՆՈՒՆՈՒՂ

Զարմանալի բան, զինուորական ու աշգլէս գեղեցիկ գրող:

ԱՆՈՒՂ

Ի՞նչ կաջ, սիրելիս, զարմանալու, ո՛ւմ տուած է, տուած է:

ՆՈՒՆՈՒՂ

Ի հարկէ, բայց այնուամենայնիւ ինձ համար անսպասելի էր:

ՀՈՒՓՍՈ

Կացիր, Անուշ, չի՛նք թէ դա այն Արամեանն է, որի համար մի քանի տարի առաջ ասում էին, իբր թէ պատերազմում սպանել են:

ԱՆՈՒՂ

Այո՛, հէնց նա է, հռիփսօ ջան. մի գիտնական յանձնաժողովի ղեկավար է նշանակուած այստեղ:

ՀՈՒՓՍՈ

Միթէ:

ԱՆՈՒՂ

Այո՛, ինձ կէտնը պատմում էր, լաւ չհասկացայ...

Աշխարհագրական թէ ազգագրական ինչ որ հետազոտութիւններ, չգիտեմ:

ԳԻՏԱՆ Է ԶԱՊԻՏԱՆ:

ՀՈՒՓՍՈ

Ափսոս չէր, որ դրան սպանած լինէին... Ահա գեղեցիկ, թէ ուզում ես, Նունուշ ջան, դա է:

ՆՈՒՆՈՒՂ

Ես պ. Կեոնին աւելի եմ հաւանում:

ՀՈՒՓՍՈ

Պ. Կեոնը որտեղ, նա որտեղ:

ՆՈՒՆՈՒՂ

Ո՛չ, ո՛չ, նրան միայն զինուորականի զգեստն է փալ տալիս:

ՀՈՒՓՍՈ

Ա՛խ, ի՞նչ ես ասում, Նունուշ, գեղեցիկ մարդուն ինչ էլ հազցնես, նա դարձեալ գեղեցիկ կ'երևայ:

ՆՈՒՆՈՒՂ

Դու ինչ ուզում ես, ասա, հռիփսօ, պ. Կեոնն աւելի գեղեցիկ է:

ՀՈՒՓՍՈ

Ո՛չ, ո՛չ, զինուորականն է գեղեցիկ:

ԱՆՈՒՂ, ճօղիւստով:

Ի՞նչ էք կովում. եկէ՛ք ես ձեզ հաշտեցնեմ:

ՆՈՒՆՈՒՂ

Անուշ ջան, թէ արեւդ կը սիրես, ուղիղն ասա. ո՛վ է աւելի գեղեցիկ՝ պ. Կեոնը թէ՛ այն նոր եկած զինուորականը:

ՀՈՒՓՍՈ

Տես, Անուշ, առանց կողմնապահութեան:

ԱՆՈՒՂ

Ի հարկէ... Ասեմ՝ ով է աւելի գեղեցիկ:

ՄԻՒՍՆԵՐԸ, ճիշդն:

Այո, այո:

ԱՆՈՒՂ

Ասեմ...

ՄԻՒՍՆԵՐԸ, ճիշդն:

Խնդրում ենք:

ԱՆՈՒՂ

Ուղիղը:

ՄԻՒՍՆԵՐԸ, ճիշդն:

Յատուկ խնդրում ենք:

ԱՆՈՒՂ

Այն երկուսից աւելի գեղեցիկը նա է, ով որ...

ՆՈՒՆՈՒՂ

Ով որ...

ՀՈՒՓՍՈ

Ով որ ինչ...

ԱՆՈՒՂ

Ով որ... ով որ մէկն ու մէկիդ ուզէ:

Փախում է:

ՆՈՒՆՈՒՂ, յարջանաւոր:

Ախ, փուչ փչանալու:

ՀՈՒՓՍՈ, նայե՛ք:

Թող քեզ ուզէ, անպիտան...

Բոլորէ՛ք ծիծաղելով վաղում էն. Անուշը մտնում է սպանալը,
 ինչ Նուշուշն ու Հախիւսն, պարտաւորով մի խումբ էրիտա-
 սարդների, նրանց հետ խոսուցելով իմաց-լիմաց պարսն էն գը-
 նում աջ խղճից:

ՏԵՍԻԼ Թ

ՄԱՐԳԱՐԻՏ, պարանոցին հարգարարաշար հանեալ, ԱՐ-
 ԿԱԴԻ, գաշխ էն չախ իշխից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա իմ վաղեմի ծանօթն է:

ԱՐԿԱԴԻ

Վաղեմի ծանօթ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, դեռ քեզ չէի էլ տեսել, որ նրան ճանաչում
 էի:

ԱՐԿԱԴԻ

Ինձ զարմացնում ես, սիրելիս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Միամիտ եղիր, այստեղ զարմանալու ոչինչ չկայ...
 Պ. Արամեանը մեզ դրացի էր, երեխայ ժամամակ
 միասին ենք մեծացել և ես դեռ տասնուհինգ տա-
 րեկան հասակում ուսումս շարունակում էի, որ նա
 իր ուսման ընթացքն այստեղ աւարտելով՝ գնաց հա-
 մալսարան...

ԱՐԿԱԴԻ, ընդհեղձ:

Եւ չկարողանալով շարունակել համալսարանական
 ուսումը, հարկաւ վճարուեցաւ այնտեղից և մտաւ
 զինուորական ծառայութիւն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Սխալվում ես, պարոն, սխալվում, դու միայն քեզ
 ես ընդունակ կարծում... Եթէ դու փոքրիշատէ

ընթերցասէր լինէիր ու մէկ անգամ գոնէ աչքի անց-
նէիր նրա գեղեցիկ հեղինակութիւնները, էլ այդպէս
չէիր խօսիլ... Ինչուիցէ, տասը տարի կը լինի, որ
մենք բաժանուել ենք և ահա այսօր առաջին ան-
գամն ենք տեսնում միմեանց:

ԱՐԿԱՂԻ

Ջատ բարի, բայց ի՞նչ էիք խօսում իրար հետ ծանր
ու բարակ այսքան բազմութեան մէջ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Առանձին ոչինչ, ես իմ անցկացրած օրերն էի
պատմում նրան, նա էլ իրանը: Նա շատ ազնիւ
մարդ է:

ԱՐԿԱՂԻ

Հաւատում եմ, բայց այնքան երկար խօսելով նրա
հետ, դու ամենքի ուշադրութիւնը քեզ վրայ դարձրիր:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛ւմ ինչ գործն է, որ ես իմ բարեկամի հետ խօ-
սում եմ:

ԱՐԿԱՂԻ

Բարեկամ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, բարեկամ. զարմանում ես թէ նախանձում,
չգիտեմ:

ԱՐԿԱՂԻ

Ո՛չ զարմանում եմ, ո՛չ նախանձում. ես նեղանում
եմ միայն, որ հասարակութեանն ի զուր առիթ ես
տալիս վրադ խօսելու:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛վ է ինձ վրայ խօսողը:

ԱՐԿԱՂԻ

Երևի խօսողներ կան, որ ասում եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛վ, ո՛վ. ասա, խնդրեմ, ո՛վ է խօսում:

ԱՐԿԱՂԻ

Ես քեզ ասում եմ, որ խօսում են. իսկ եթէ ինձ
չես հաւատում, կարող ես բարեկամիս հարցնել, տես
ինչ է ասում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այսինքն:

ԱՐԿԱՂԻ

Պ. Աբէլին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խնդրեմ, խնդրեմ, նա թող իր գլխին տէրութիւն
անէ:

ԱՐԿԱՂԻ, փոքր հեղուկ:

Դրանով ի՞նչ ես ուզում ասել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ...

Աչքի արդիւնը հայտնի է ամենուրեք:

ԱՐԿԱՂԻ, աստիճան:

Միթէ կասկածում է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ ինչ կը վերաբերի քո նախանձելուն, կամ ա-
ւելի ճիշդն ասած՝ նեղանալուն, ինչպէս ինքդ ես
ասում, այդ, չիրաւի, ինձ զարմացնում է... Որպէս
թէ ես քեզ համար որեւէ նշանակութիւն ունիմ և
կամ սիրելի եմ քեզ:

ԱՐԿԱԴԻ, ուրախ դէմք սրտաշունչ:

Ի հարկէ որ սիրելի ես:

ՄԱՐԳԱՐԻՏ, հեգնուհի:

Եւ շատ ես սիրում ինձ:

ԱՐԿԱԴԻ

Չանտ, աչո, շատ:

ՄԱՐԳԱՐԻՏ, դառն ժողովուրդ:

Եւ բացի ինձանից էլ ուրիշ ոչ ոքի չես սիրում
ի հարկէ:

ԱՐԿԱԴԻ

Ոչ ոքի, վկայ է Երկինքը:

ՄԱՐԳԱՐԻՏ, շատ շարժում է գլուխը և խորին դառնութեամբ:

Նայիր վերև. նայիր և տես, թէ քանի վկայ կայ
այնտեղ... Նայիր, նայիր, մի վախենար, ասողերը
ձայն չունին. նրանց լեզուն ամեն մարդ միայն ինքն
է հասկանում, և եթէ մի բան ասեն այժմ, մենակ
քեզ կ'ասեն:

ԱՐԿԱԴԻ

Ինչեր ես ասում, ես ոչինչ չեմ հասկանում: Եթէ
բան գիտես, կամ մի մարդ սուտ լուրեր է հաղորդել
քեզ իմ մասին, այն ասա:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչ ոք ինձ բան չէ ասել և ոչ էլ ես ուրիշի խել-
քով կամ խօսքով եմ ման գալիս: Ինչ որ գիտեմ, ինձ
ու ինձ գիտեմ և հաստատ էլ համոզուած եմ, որ
դու իմ մասին այնքան ես մտածում, որքան Ձինաս-
տանի մասին:

ԱՐԿԱԴԻ

Ուրիշ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ուրիշ ոչինչ... (Նշագլուխ քեմի խորհում է - բայց արհեստ
օրհորդներին, որոնցից Պաշտենկա շատ է՝ Աննա Մարգարիտը):
Ես այն օրհորդների հետ կը լինիմ... (Առանցիկ և հեգ-
նուհի) Ես քեզ սիրում եմ, ասում է...

Գնում է դեպի օրհորդները, բայց արհեստով շեղվելով, որ շատ
է վաղուհի, դարձապես ինքի է ասում:

ՏԵՍԻԼ Ժ

ՆՐԱՆԻ, ՀԵՂԻՆԷ և ՋԵՄ ՕՐԻՈՐԴՆԵՐԸ

ԱՐԿԱԴԻ, ասանցին:

Այսքան էլ ջանդգնութիւն...

Ընդունում է հրաժանարար ճշմարտ:

ՀԵՂԻՆԷ

Մարդարիտ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Հեղինէ...

ՀԵՂԻՆԷ

Հոգիս...

Օրհորդները շրջապատում են նրանց: Մեծ ուրախութեամբ, օրհորդներ
աղջկաներ և ինքնին խոսակցութեամբ ցած շայնով:

ԱՐԿԱԴԻ, հրաժանարար ուղիղութեամբ և ասանցին:

Արկադի, Արկադի, աչքերդ բաց արա և տես, որ քո
պլիսին չգայ այն, ինչ որ դու ուրիշներին ես անում:

Դառն է գնում ու ինչն է. ինչ օրհորդները, որ արդեն հեռա-
ցել են Մարգարիտի և Հեղինէից, պարտադրով ճիշտ են երե-
րապարհներին, նրանց հետ խոսակցելով անհրաժեշտ է:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԷ

ՄԱՐԳԱՐԻՏ, Հեղինէի զեռնէն Բանտ և առաջ Ժամէ:

Այս ինչպէս, այս երբ:

ՀԵՂԻՆԷ

Այսօր, հէնց այսօր եմ եկել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Առաւօտուայ գնացքով, ի հարկէ:

ՀԵՂԻՆԷ

Այո:

ՄԱՐԳԱՐԻՏ

Յետոյ միթէ չէիր կարող իմաց տալ, որ գայի քեզ Ղիմաւորելու:

ՀԵՂԻՆԷ

Հէնց ղրա համար էլ չուզեցի իմաց տալ, որ քեզ անհանգիստ չանեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչէր ես ասում, հեղինէ, ինչպէս թէ անհանգիստ չանես: Միթէ այդպէս է:

ՀԵՂԻՆԷ

Գիտեմ, զիտեմ, անգին իմ Մարգարիտ, որ դու էլ ինձ այնպէս ես սիրում, ինչպէս ես քեզ և պատճառն էլ հէնց այդ մեր սէրն էր, որ ես չուզեցի առաւօտեան անուշ քունդ խանդարել... Այո, իմ հրեշտակ Մարգարիտ, վերջապէս նորից արժանացայ

տեսութեանդ և այս անգամ յոյս ունիմ մէկ օր էլ չմնամ առանց քեզ տեսնելու:

ՄԱՐԳԱՐԻՏ

Միթէ... Այո, հեղինէ, Աստուած քեզ ինձ համար է ուղարկել... Ուրեմն այնտեղ պաշտօնդ թողել ես:

ՀԵՂԻՆԷ

Այո, ընդմիջտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց վերջին նամակումդ հակառակն էիր գրում:

ՀԵՂԻՆԷ

Ուղիղ է, բայց այնպիսի մի անակնկալ հանդամանք պատահեցաւ, որ պաշտօնս էլ թողի, քաղաքն էլ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ ես ասում, հեղինէ. ի՞նչ պատահեցաւ արդեօք:

ՀԵՂԻՆԷ

Ոչինչ, մի շատ սովորական բան... Նոր հոգաբարձուք մտան ուսումնարան, մենք միմեանց չհասկացանք, և հաճախ ես այստեղ եմ... Ես կը պատմեմ քեզ, Մարգարիտ, բոլորը կը պատմեմ, առ այժմ թող մնայ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Թող մնայ, հոգեակս... Բայց ուր էիր այսօր ամբողջ օրը, որ առաջին անգամ այստեղ ենք տեսնուում... Ո՞ւմ մօտ ես իջել, ում գերադասեցիր ինձանից: (Դժգոհ): Սպասիր դեռ:

ՀԵՂԻՆԷ

«Կովկաս» հիւրանոցում... Մի փոքրիկ սենեակ եմ վարձել, մինչև տեսնեմ՝ գործս ինչպէս է գնում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչ ասացիր, ինչ. ինչպէս թէ հիւրանոցում...

Ուրեմն ես ալեւս քո Մարգարիտը չեմ: Իսկոյն, իսկոյն, հէնց այս գիշեր տեղափոխուիր ինձ մօտ:

ՀԵՂԻՆԷ

Որ մենակ լինէիր, իմ անգին Մարգարիտ, ինչո՞ւ չէ, մեծ ուրախութեամբ, բայց կարելի է ամուսնուդ հաճելի չթուի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ կողմից դու բոլորովին հանդիստ եղիր: Ես ինձ համար իմ առանձին սենեակներն ունիմ: Մի վախենար, ես քեզ այնպէս կը պահեմ, որ դու կարողանաս լիովին վաշելել քո ազատութիւնը:

ՀԵՂԻՆԷ

Հաւատացած եմ, հոգիս, բոլորովին հաւատացած եւ շատ շնորհակալ եմ, միայն թէ... բայց...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ չեմ ընդունում, ոչինչ ոչ քո միայն թէ-ն եւ ոչ էլ բայց-ը. ես քեզ հիւրանոցում թողնողը չեմ... Ե՛կ, ե՛կ, չատուկ խնդրում եմ, ե՛կ, հետս ընկերութիւն արա՛, կեանքս էլ այնպէս ծանր չի երևալ... Դու չգիտես, Հեղինէս, թէ ինչ մեծ բարութիւն արած կը լինիս ինձ. անչափ, անչափ կը պարտաւորես:

ՀԵՂԻՆԷ

Եթէ այդպէս է, ի հարկէ պէտք է դամ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այսօր միանգամից ես երկու ուրախութեան արժանացաւ: Այս գիշեր մինչև քեզ տեսնելս, հէնց այստեղ ձեռք պատահեցայ, ինչ ես կարծում. մեր վիսպան Արտաշէս...

ՀԵՂԻՆԷ

Արտաշէս Արամեանի՛ն...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո:

ՀԵՂԻՆԷ

Քո մանկութեան ընկերոջը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Հէնց նրան:

ՀԵՂԻՆԷ

Միթէ: Ի՛նչ ուրախութիւն... Քանի-քանի անգամ մենք խօսել ենք նրա մասին: Նա հիմա հասուն տղամարդ կը լինի դարձած:

ՄԱՐԳԱՐԻՏ

Աւելացրու նաև՝ կտրիճ գօրական... Գնանք, գը-նանք, ես քեզ ծանօթացնեմ նրա հետ:

(Թիւ լեւի պատճառով դուրս են գնում մը իողմից:)

ՏԵՍԻՆԱ ԺԲ

ԱՐՏԱՂԷՍ, զինուորական ղեկավար, հրժեշտ հաշտ-
լետան պատահան, ԼԵՒՈՆ, հասարակ ղեկավար-
Քաջի եւ հաշտանի իշխից:

ԱՐՏԱՂԷՍ

Այո, Լեւոն, ես քեզ մեծ ապագայ եմ գուշակում:

ԼԵՒՈՆ

Չնորհակալ եմ, Արտաշէս, ես այժմ էլ գոհ եմ իմ վիճակից, եւ ճշմարիտն ասեմ, ես լիովին երջանիկ կը լինեմ, եթէ ունենայի կեանքիս մի լծակից, որ իր

բարեմասնով թիւններով կարողանար նեցուկ լինել
ինձ իմ աշխատող ժեանս ժամանակ:

ԱՐՏԱԳԷՍ, ԳԼՈՒԽ:

Որոնիր, եղբայր, գուցէ գտնես:

ԼԵԻՈՆ

Այո, բայց մինչև այսօր դեռ ևս չպատահեց մինը, որի մասին կարողանալի ասել՝ ահա՛ նա, առանց որի կեանքը կեանք չէ ինձ համար:

ԱՐՏԱԶԷՍ

Միայն թէ ընտրածիդ ուրիշը չառնէ, կամ, որ ա-
ւելի վատն է, ուրիշի կինը չիմնի քո սիրածը:

ԼԵՒՈՆ

Ի՞նչ ես ուզում ասել... (Արտաշէսը խորը յոդուր է հանում): Դու տխուր ես, Արտաշէս, փոքր ինչ առաջ արգպէս չէիր:

ԱՐՏԱԳԷՍ

Այո, ես շատ պղծում եմ, որ այս երեկոյ Փողովա-
րան եկայ:

ԼԵԻՈՆ

Հղցում ես:

ԱՐՏԱԳԻՄ

Սաստիկ, թէև միևնույն ժամանակ ուրախութեանս
սահման չկայ: (Լսողի): Այո, կարծում եմ շուտով
ճանապարհ եմ ընկնելու կրկին:

ԼԵԻՈՆ

Ի՞նչ ես ասում, եղբայր, և դէպի ո՞ւր:

ԱՐՏԱԺԷՍ

Դէպի գաւառները:

ԼԵԻՈՆ

١٤٧٢:

ԱՐՏԱԳԷՍ

Ես բեզ պատմել եմ արդէն. Աշխարհադրական Բն-
կերութեան չանձնարարութեամբ...

ԼԵԻՈՆ

Այո, այո, գիտեմ: Ռաչց դու կամենում էիր դեռ
ևս մի քանի ամիս մնալ այստեղ:

ԱՐՏԱԳԷՄ

Չատ անգամ հանգամանքներն շտապեցնում են գործը: Ես հենց վաղը կը գրեմ գործակիցներիս, որ ինձ սպասեն... Այո, պէտք է. զնալ, ուրիշ կերպով սխալվուել անկարող եմ:

ԼԵԻՈՆ

Ես քեզ չեմ հասկանում. ասա, ի՞նչ է պատահել:

ԱՐՏԱԳԷՍ

Ո՛ր, ԼԼՈ՛ն, դու չգիտես, թէ՛ որքան անբաղդ եմ:

ԼԵԻՈՆ

Անբանդդ... Դժու...

ԱՐՏԱԳԷՄ

Թողնենք, խնդրեմ:

ԼԵԻՈՆ

Ռաչց ի՞նչ կաչ վերջապէս:

ԱՐՏԱԳԷՍ, ԳՐԻԳ ԼՈՒԻՍԻ Ի Կ յ Ե ԿՐԿ:

Ես... սիրում եմ...

ԼԵԻՈՆ

Միրժև Էս:

ԱՐՏԱԳԷՄ

Այո՛, և անշուշտ:

ԼԵՒՈՆ

Ի՛նչ... Միթէ ճնողները...

ԱՐՏԱՂԻՍ

Ո՛չ, ո՛չ, բոլորովին ուրիշ արգելք... Նա ամուսնացած է:

ԼԵՒՈՆ

Ամուսնացած... Ո՛չ, թշուառ... Եւ նա էլ փոխադարձաբար...

ԱՐՏԱՂԻՍ

Այո՛, բայց ինչպէս իր եղբորը... Հրեշտակային անմեղ սիրով է սիրում նա ինձ... Իսկ զգացմունքների մասին ոչինչ չգիտէ:

ԼԵՒՈՆ

Նա Թիֆլիզումն է:

ԱՐՏԱՂԻՍ

Այո՛, և այժմ իսկ այս ժողովարանում... Դու տեսար ինձ նրա հետ խօսելիս:

ԼԵՒՈՆ

Նրա հետ...

ԱՐՏԱՂԻՍ

Այո՛... Տիկին Սամսոնեանի:

ԼԵՒՈՆ

Տիկին Սամսոնեան...

ԱՐՏԱՂԻՍ

Այո՛:

ԼԵՒՈՆ

Պ. Արկադիի կի՛նը:

ԱՐՏԱՂԻՍ

Այո՛:

ԼԵՒՈՆ, երբ լսում է իր սիրտը:

Արտաշէս, Արտաշէս, դու խելքդ կորցրել ես բոլորովին:

ԱՐՏԱՂԻՍ

Տասը տարի էր, Լեւոն, ո՛, տասը երկար տարիներ, հասկանում ես դու, մենք բաժանուած էինք, և բաւական էր այս գիշեր մէկ անգամ տեսնել նրան, որ սրտիս մէջ անթեղած կրակը նորից բորբոքուէր իր բոլոր ոյժով... Պիտի իմանաս, թէ փոքր ինչ առաջ ինչ պատահեցաւ ինձ, երբ որ չանկարձ նրա ձեռքն զգացի իմ ձեռքիս մէջ... Զնամրտութիւնը վկայ, Լեւոն, ես երբէք այնպէս չեմ ցնցուել... Կարծես ինքն էլ նկատեց այդ և իսկոյն յետ քաշեց ձեռքը... Օ՛, աղնիւ Մարգարիտս, անգին Մարգարիտս...

ԼԵՒՈՆ

Իրաւ, շատ աղնիւ կին ես ասում:

ԱՐՏԱՂԻՍ

Հաւատա՛ ինձ, Լեւոն, եթէ գրուածքներիս մէջ պատահում է մի բարի, աղնիւ, առաքինի, վեհ կին, ես միշտ նրան եմ ունեցել աչքիս առաջ... (Լսում է նա): Այո՛, այո՛, պէտք է շուտով կորչեմ այստեղից... Այդ կինը կեանքիս մէջ միշտ վճռական դեր է խաղացել և, երևի, պիտի խաղայ, քանի շունչ կայ բերանումս... Նրա սէրն էր, որ ինձ մղեց դէպի կրակը, դէպի գոռ պատերազմները:

ԼԵՒՈՆ

Ի՛նչպէս:

ԱՐՏԱՂԻՍ, փոքր լսում է իր սիրտը:

Իմ սէրը դէպի այդ աննման էակը սկսվում է այն

օրերից, երբ ես դեռ ուսանում էի այստեղ... Մենք միևնույն տանն էինք կենում, համարեա միասին ենք մեծացել... Չգիտեմ ինչպէս եղաւ, ես նրան սիրեցի, սիրեցի, եղբայր, որպէս մի խելագար, ինչպէս և սիրում եմ մինչև այսօր... Ես ուխտեցի վերջապէս կեանքս չաւիտեան կապել նրա հետ. նրա համար ապրել, նրա համար մեռնել... Սկսեցի աշխատել, անդուլ աշխատել, որ թէ գիտութեամբ և թէ դիրքով կարողանամ արժանի գտնուել իրան... Եւ ահա սնուցանելով ինձ քաղցր յոյսերով ես վերջացրի ուսումս այստեղ և գնացի համալսարան... Նա այն ժամանակ տասն և հինգ տարեկան էր... (Խոչը յոգնոյ հանելով) Այո...

ԼԵՒՈՆ

Յետոյ:

ԱՐՏԱՂԻՍ

Չորս տարի անցկացրի համալսարանում չուսոյ և երկիւղի մէջ... Ես աշխատում էի գիշեր և ցերեկ... Աեանքի դժուարութիւններից և սրտումս փառուող սիրոյ կրակից հանգստութիւն չունէի. միայն Մարգարտիս հրեշտակային պատկերն էր, որ ոչ թ և զօրութիւն էր տալիս ինձ... (Դուռը): Ես աւարտում էի ուսումս... Վերջին քննութեանս նախընթաց օրը չանկարճ լուր եմ ստանում, որ իմ աննման Մարգարտին մարդու են տալիս... Ա՛խ, Լեւոն, որպիսի ծանր, որպիսի զարհուրելի բոպէ էր այդ ինձ համար...

ԼԵՒՈՆ, չե՞ք բանել:

Հասկանում եմ, Արտաշէս, քո դրութիւնը... Այո, զարհուրելի է:

ԱՐՏԱՂԻՍ

Յուսահատութիւնս քիչ էր մնում անձնասպանութիւն գործել տար ինձ. բաց դիմացայ, եղբայր, դիմացայ... Մեռնել, գոնէ այնպէս մեռնել, ասացի, որ մէկ բանի նման լինի... Ես վճռեցի... Ես ձգեցի ամեն ինչ և անմիջապէս մտալ գինուորական ծառայութիւն, մահը պատերազմի դաշտումը որոնելու: Ի՞մ բաղդից պատերազմի տաք ժամանակն էր, երբ ամենքն էլ ոգևորուած էին ազգերի ազատութեան դադափարով...

ԼԵՒՈՆ

Ահա, թէ որտեղ պէտք էր որոնել քո կատաղի չաղթանակների շարժառիթը:

ԱՐՏԱՂԻՍ

Այո, այդ պատերազմը մեծ դարման էր բորբոքուած սրտիս, բանալով աչքիս առաջ մի նոր ասպարէզ... Դու երեւակացել անգամ չես կարող, թէ ի՞նչ զգացմունք է տիրապետում քեզ պատերազմի դաշտում, երբ չանկարճ դիմացդ կանգնած ես տեսնում... դարաւոր թշնամուդ, որ չափշտակել է քո հայրենի երկիրը, որի համար քո պապերն ու նախնիքը իրանց բրտինքն ու արիւնն են թափել, ուր ամեն մի քար, ամեն մի աւերակ պատմում է քեզ անցեալի փառքը... Ո՛հ, այն ժամանակ, Լեւոն, բոլորը մոռացվում է, բոլորը, և ամբողջ գոյութիւնդ միայն մի տենչով, մի ցանկութեամբ է համակվում՝ կամ մահ, կամ կեանքիդ հետ քո հայրենի երկիրը... Դու ինձ հասկանում ես, Լեւոն...

ԼԵՒՈՆ

Լիովին, եղբայր:

ԱՐՏԱՂԻՍ

Մահն ինձ համար արդէն խաղալիք էր, բայց մր-
նացի ողջ և առողջ, ինչպէս տեսնում ես... Պատե-
րազմը վերջացաւ, ես հաշտուեցայ կեանքի հետ. իսկ
Մարգարտի սէրը մնաց սրտիս խորքում որպէս մի
թանկագին դանձ, որ հետո ման եմ ածում անբա-
ժան, ուր որ գնում եմ:

ԼԵՒՈՆ

Ապաքնող Արտաշէս:

ԱՐՏԱՂԻՍ

Սը... Նա ինքն է, այս կողմն է գալիս:

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԷ, որոնք վերադառ-
նում են չափ հողմից:

ՄԱՐԳԱՐԻՏ, Հեղինէի հէք լեւ լեւի դուռը և առջ փախչի:

Թոյ տուէք, պ. Արտաշէս, ծանօթացնել ձեզ բա-
րեկամուհուն հետ. օրիորդ Հեղինէ - Անթառամ:

ԱՐՏԱՂԻՍ

Մեծ ուրախութեամբ: (Աշտնաւելով Հեղինէին:) Պա-
տիւ ունիմ, օրիորդ. Արտաշէս Արամեան:

Միմեանց չեմք էն դուռ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Օրիորդն էլ ինձ պէս զմայլունա՞մ է, պ. Արտաշէս,
ձեր գրուածքներից:

ՀԵՂԻՆԷ

Այո, պարոն, ուրախ եմ, որ ծանօթանում եմ ձեզ
հետ:

ԱՐՏԱՂԻՍ

Մեծապէս պատվում էք ինձ, օրիորդ... (Մարգարի-
տին:) Տիկին, թոյ տուէք և ինձ ներկայացնել ձեզ
իմ մտերիմ բարեկամիս. Լեւոն Զիրակեան:

ՄԱՐԳԱՐԻՏ

Զատ ուրախ եմ: (Ձեռք է հանում Լեւոնին:) Ես ձեզ
արդէն փոքր ինչ ճանաչում եմ, պ. Լեւոն: Պ. Ար-
տաշէսը խօսում էր ձեր մասին, երբ դուք պա-
րում էիք մեր օրիորդների հետ: (Մարգարիտին
Հեղինէին:) Խնդրեմ ծանօթանաք... (Հեղինէին:) Պ. Զի-
րակեան... (Լեւոնին:) Օրիորդ Հեղինէ - Անթառամ: (Հե-
ղինէին և Լեւոնը չեմք էն դուռը միմեանց:) Դուք հիանալի
պարում էք, պարոն: Հեղինէս էլ լաւ պարող է:

ԼԵՒՈՆ

Եթէ կը բարեհաճէք, օրիորդ, հետեւեալ կադրիլը
միասին պարենք... Ինձ շատ կը պարտաւորէք:

Հեղինէն գլուխ է հանում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ առ այժմ նստենք, պարոններ, ինչո՞ւ եմք
կանգնած մնացել: (Մարգարիտին և Հեղինէին
միասին, իսկ Արտաշէսն ու Լեւոնը նրանց հետքից:) Պ. Լեւոն,
ուրեմն դուք մեծ մասամբ գիւղումն էք անցկա-
ցնում, ինչպէս պատմեց ինձ պ. Արտաշէսը:

ԼԵՒՈՆ

Այո, տիկին, ես ինձ լիովին նուիրել եմ հողին և
հողագործներին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Լսել եմ, լսել, պ. Լևոն... Պէտք է մէկ օր գալ տեսնել ձեր աշխատութիւնները, եթէ թոյլ կը տաք. ամուսինս ուրախ կը լինի ձեզ հետ ծանօթանալու:

ԼԵՒՈՆ

Տիկին, ես ինձ երջանիկ կը համարէի ձեզ պէս հիւրեր տեսնել իմ աղքատիկ ազարակում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ, դուք շատ բարի էք, պ. Լևոն... Ուրեմն այդպէս, այս օրերս գնանք միասին, եթէ կը կամենաք, պ. Արտաշէս: (Արտաշէսը լռու ողջունում է): Եւ դու, հեղինէ:

ՀԵՂԻՆԷ

Մէծ ուրախութեամբ:

ՄԱՐԳԱՐԻՏ, հրաշայտ:

Ես սաստիկ սիրում եմ բնութիւնը:

ԱՐՏԱՋԷՍ

Այո, տիկին, լաւ չիշում եմ, որ դուք գեղեցիկ տեսարաններ էիք նկարում բնութիւնից: Արդեօք այժմ էլ շարունակում էք նկարչութիւնը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչպէս չէ, այդ ինձ համար մեծ սփոփանք է:

ԼԵՒՈՆ

Օ, տիկին, եկէք, եկէք, խնդրում եմ, դուք այնտեղ սքանչելի նիւթեր կը գտնէք ձեր վրձինի համար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Անպատճառ, պ. Լևոն, և առաջին պատկերը, որ կը նկարեմ ձեր գիւղի տեսարաններից, ես խոստանում եմ ձեզ նուիրել:

ԼԵՒՈՆ, ողջունելով:

Այդ անմոռանալի չիշատակ կը լինի ինձ համար, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ, խորհուրդ:

Չատ շնորհակալ եմ... (Լևոն է հաշտելի բեղմնաւոր): Ահա ձեզ են հրաւիրում: (Լևոնը հարկ է հանգստանալ): Այս օրերս կը սպասեմ ձեզ... Պ. Արտաշէսը խոստացել է գալ մեզ տեսութեան, միասին շնորհ բերէք, խնդրեմ:

ԼԵՒՈՆ, ողջունելով Մարգարիտին:

Առանձին պատիւ էք անում ինձ, տիկին: (Հեղինէն է): Թող սուէք, օրհորդ...

Այս անգամ լինի, ինչպէս էր հին միասին և հարգանքով:

ՏԵՍԻԼ ԺԴ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐՏԱՋԷՍ

ՄԱՐԳԱՐԻՏ, փոքր եղբայր լուսնային:

Ո՛րքան ուրախ եմ, որ ձեզ կրկին տեսնում եմ... Ի՛նչքան գեղեցիկ չիշողութիւններ են գալիս միտս մեր մանկութիւնից... Այն ժամանակ ես այնպէս էի հաւատացած, թէ մենք միշտ նոյնը կը մնանք, մինչդեռ այժմ անցած օրերն ինձ թվում են որպէս երանգ... Մտաբերում էք, պ. Արտաշէս, ինչպէս մենք խաղում էինք, ինչպէս վազվզում մեր փոքրիկ պարտիկում... Մտաբերում էք և իմ խեղճ մօրը, թէ

ինչպէս էր նա ձեզ գուրգուրում... Օ՛, խեղճ կինը շատ էր սիրում ձեզ, շատ...

Աչքերը սքեռած է:

ԱՐՏԱՃԻՍ

Միթէ կարող եմ ես մոռանալ այն բարի կնոջը երբ և իցէ... Ես ևս սիրում էի նրան ինչպէս հարազատ մօրս... Ամեն ինչ, ամեն ինչ միտս է. մեր խաղն էլ, մեր ուրախութիւններն էլ, մեր գուարճութիւններն էլ... Հաւատացէ՛ք տիկին, օր չի եղել, որ այդ ամենը չմտաբերէի, և շատ անգամ, նոյն իսկ պատերազմի դաշտում, թշնամու գնդակների դէմ կանգնած՝ ձեր պատկերը սաւառնել է աչքիս առաջ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ջնորհակալ եմ, բարեկամ, ես ևս միշտ մտաբերել եմ ձեզ. մանաւանդ ձեր հեղինակութիւնները կարգալիս շատ անգամ պատահել է ինձ, որ մտքիս հետ գնալով, ամբողջ ժամեր եմ անցկացրել միևնույն թերթի վրայ... (Արտաշէսը խորը յոգնույ է հասնում. երկար շունչ է առնում): Գնանք, պ. Արտաշէս, մեր բարեկամներին գտնենք... (Գնալով): Ինձ թվում է, թէ մենք դարձեալ մեր պարտիզոնն ենք ման գալիս...

ԱՐՏԱՃԻՍ

Այո, երջանիկ օրեր էին...

Խորհում եմ... Եւ ինչու և Արտաշէսը լին լինի որո՞ւմ, ինչ ինչին Արտաշէսը և ինչ որին իմե՞ս վարդապետ:

ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆԻ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, առջ փառէ:

Մարգարիտ, ժամանակ է. ընթրիքն արդէն պատրաստ է:

ՄԱՐԳԱՐԻՏ, Արտաշէսին:

Պ. Արտաշէս, ամուսինս է, խնդրում եմ ճանօթ լինիք: (Արտաշէսին): Պ. Արտաշէս Արամեան, մանկութեանս ընկերը:

ԱՐԿԱԴԻ, իրան ասէլով:

Չատ ուրախ եմ, պարոն:

Տալիս է յետին:

ԱՐՏԱՃԻՍ

Պատիւ եմ համարում, պարոն:

ԱՐԿԱԴԻ

Չատ ուրախ եմ ձեզ հետ ճանօթանալու... Ամբողջ հասարակութիւնն այս գիշեր ձեզ վրայ է խօսում, ձեր քաջութեան մասին պատմում:

ԱՐՏԱՃԻՍ

Օ՛, խնդրեմ:

ԱՐԿԱԴԻ

Յոյս ունիմ, որ այսուհետեւ ինձ ևս ձեզ չարդողներից մինը կը համարէք:

ԱՐՏԱՃԻՍ

Չափազանց բարի էք, պարոն:

ԱՐԿԱԴԻ

Իմ սլարտքս է, սլարոն... Միայն այժմ կը ներէք,
լսնդրեմ. մեզ սպասում են:

ԱՐՏԱՂԻՍ

Ա, լսնդրեմ, սլարոն:

ԱՐԿԱԴԻ, Մարտիրոս:

Գնանք, տիրելիս:

ՄԱՐԳԱՐԻՏ, Արքայի, ցածր և յանդիմանալի հայտնի:

Բայց հիւրը... (Բարձր) Պ. Արտաշէսը ևս այն կողմն
է գալու, մենք խոստացանք բարեկամուհու: (Արքայի-
չեմն:) Գնանք, պ. Արտաշէս, օրիորդ հեղինակն մեզ
սպասելիս կը լինի:

ԱՐՏԱՂԻՍ, աստիճանով լինու:

Խնդրեմ, տիրելի:

ՄԱՐԳԱՐԻՏ, աստիճանով լինու:

Ջնորհակալ եմ... (Արքայի) Գնանք, Արկադի...

Գնում են:

ԱՐԿԱԴԻ, աստիճան, բարձրացած:

Անիճեալ...

ՎԱՐԴԱՆԻՏ, հեղինակ, Արքայի:

Խեղճ Արկադի:

Ճիշտապէս է: Մայն ճիշտիկն լսում է երաժշտութիւն, որ նուա-
զում է հարբել, նա յանդիմանալի երաժշտութեան լեզուներն ունի
եղանակ: Ժողովուրդն շրջապատում է ինչպէս արքայի, ինչ
Արքայի, Վարդանի և խորհում է ինչպէս որ Արքայի ճիշտ
էն անշարժ: Պարտի:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Սամսոնեանի տանը մի փարթամ դահլիճ՝ չորս դռնով, որոնցից
երկուսը ձախ կողմը, մինը աջ եւ մինն էլ խորքումը: Ձախ
կողմի առաջին կարգի դռնը տանում է Մարգարտի սենեա-
կը, երկրորդ կարգինը՝ Հեղինէի սենեակը. աջ դռնը, որ
գտնվում է երկրորդ կարգում, Արկադիինն է, իսկ վերջինը
բացվում է դէպի նախասենեակը, որի լուսամուտներից երե-
ւում է մի գեղեցիկ պարտէզ: Աջ կողմի առաջին կարգում
մի լուսամուտ կայ: Դահլիճը զարդարուած է ամենաշքեղ
դրապիրներով եւ կահ-կարասիքով՝ զանաւոր, հայելիներ,
ժամացոյց, պատկերներ եւ այլն: Մի պատկեր, որ պար-
տէզ է ներկայացնում, դրած է սենեակի աջակողմեան ան-
կիւնում ոսկեղոծ պատկերակալի վրայ: Ձախ կողմը՝ արմաւե-
նիք, լիմոնի ծառեր եւ ծաղիկներ ծածկում են երկրորդ դռնը:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏ, Ջեյմ Ռեյնոլդս ճանաչում, ՍԷՍԻԼ

ՄԱՐԳԱՐԻՏ, նորա, ասում է պարտադրում:

Ո՛ր ժամն է:

ՍԷՍԻԼ, աստիճանով ասում է Վարդանի:

Վէս օրից մէկ քառորդ պակաս է, տիրելի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ, գնացէք, տեսէք թէ օրիորդը տուն է եկել՝
ասացէք որ սուրճը պատրաստ է:

ՍԷՍԻԼ

Իսկոյն, տիկին. իսկ պարոնին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա տանն է:

ՍԷՍԻԼ

Այո, տիկին, նոր է վեր կենում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դարձեալ, այս ինչ սովորութիւն է ընդունել:

ՍԷՍԻԼ

Առաւօտեան ժամի չորսն անց է եղել, տիկին, որ
շնորհ է բերել:

ՄԱՐԳԱՐԻՏ, առանձին:

Հետզհետէ աւելի ուշ և ուշ... Արդեօք զրտեղ է
անցկացնում նա իր ժամանակը:

ՍԷՍԻԼ

Ի՞նչպէս կը հրամայէք, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ, գնացէք, պարոնին էլ խնդրեցէք. եթէ կա-
մենում է, թող գալ... Միայն դարձեալ խնդրում եմ,
Սէսիլ, որ օրիորդի սենեակի վրայ առանձին ուշք
դարձնէք... Ամեն բան իր տեղը լինի, խնդրեմ,
բոլորը մաքրած, սրբած լինի. փոշի չնկատուի և ոչ
մի տեղ:

ՍԷՍԻԼ

Հրամե՛ք էք, տիկին:

Ապահուորը քերած է արծալեայ սփռնակով մի ծրար:

ՄԱՐԳԱՐԻՏ, վերջում է ծրարը:

Օրիորդինն է: (Ապահուորը) Լաւ: (Ապահուորը դուրս
է գնում: Սէսիլին:) Գնացէք, իմացէք՝ պարոնը սուրճ
կամենում է:

ՍԷՍԻԼ

Այս րոպէիս, տիկին... Բաց ան ինքը պարոնը:

Սարգսի ճշմարիտ դուրս է գնում նախանշանով:

ՏԵՍՈՂ Բ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐԿԱԴԻ, գնացող գետի:

ԱՐԿԱԴԻ, յարմարեալ գետն է եր անշուշտ:

Ի՞նչքան քնել եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ ի՞նչ կարգ է, աստ, խնդրեմ. մի՞թէ չգիտես,
որ տանը օտար աղջիկ կայ. նա իսկոյն դուրս կը
գալ, նրա մօտ էլ պէտք է այդպէս երևամ:

ԱՐԿԱԴԻ

Եթէ որ մեր տանն է կենում, էլ ի՞նչ օտար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խնդրեմ, խնդրեմ, զնա իսկոյն հագնուիր. այդ ի՞նչ
քաղաքավարութիւն է:

ԱՐԿԱԴԻ

Գնում եմ, գնում եմ:

Նստած է աջ խոշոր և արջեալ յարմարում:

ՄԱՐԳԱՐԻՏ, չեւոյն գնացող:

Այո:

ԱՐԿԱԴԻ

Իսկոյն, իսկոյն... Թող մէկ ձգձգուեմ:

ձառնորդում է:

ՄԱՐԳԱՐԻՏ, որդիս Վեր լեռնում:

Անտանելի է... Ես կ'երթամ, եթէ դու չգնաս:

ԱՐԿԱԴԻ, Վեր չգնա:

Սարսափելի կ'ին ես, մարդ իր տան մէջ էլ հանգստանալ չկարողանայ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Գնա քո սենեակում հանգստացիր, ինչքան կամենում ես: Ել ուր էիր այդպէս վաղ զարթուում:

ԱՐԿԱԴԻ

Լաւ, լաւ, բաժակս տո՛ւր, ես իմ սենեակում կը խմեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ, ածելով ինչ բան: Կարծի:

Ահա, վեր առ:

ԱՐԿԱԴԻ, Վերցնելով բան:

Այս ինչ հիանալի պարսիմատ է... Ո՛րտեղից են գընել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Յետոյ, յետոյ, դնա շուտով հագնու՛ր, խնդրում եմ:

ԱՐԿԱԴԻ

Գնում եմ, գնում: (Գնալով ինչ-որ բան) Բայց ինչ գեղեցիկ ես դու աչօր, Մարգարիտ: (Մտախօս): Կարելի է մէկ համբու՛ր ստանալ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Հեռացէ՛ք, խնդրեմ:

ԱՐԿԱԴԻ, առնելով ինչ-որ բան:

Ճշմարիտ, այսօր շատ ես դուր գալիս ինձ:

ՄԱՐԳԱՐԻՏ, գնալով հանգու՛մ: Ինչ:

Կատարեալ պատիժ է:

ԱՐԿԱԴԻ, Բա՛նջ: Դնելով սեղանի վրայ:

Փանգո՛տ...

Սու՛րբ: Կրե՛ն: Եղբայրս ինչ է ասում, գնա՛նք է ինչ-որ:

ՄԱՐԳԱՐԻՏ, հե՛ն:

Այս մարդը հետզհետէ անտանելի է դառնում: (Ներշնչած նորո՛ւմ է): Ա՛խ...

Վերցնում է ինչ-որ բան: Եւ լաւ: Ինչ-որ է, յետոյ գնա՛նք: Յետոյ ինչ-որ, արեւելք, յետոյ է սեղանին:

ՏԵՄԻՆ Գ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԷ

ՀԵՂԻՆԷ, Գնա՛նք է գնալով ինչ-որ:

Չուշացայ արդեօք, Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ո՛չ, հոգիս. նստի՛ր, խնդրեմ... (Սու՛րբ ածելով): Ի՛նչ արիւր, ի՛նչ շինեցիր, պատմի՛ր, տեսնեմ:

ՀԵՂԻՆԷ, Վերցնելով գնալով:

Իսկոյն, Մարգարիտ... Միայն ասա՛նք ինձ, ինչո՛ւ ես այդպէս տխուր:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ:

ՀԵՂԻՆԷ

Այսօր առաւօտեան արդէն նկատեցի, որ դու մի բանից վշտացած ես:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ուշադրութիւն մի գարձնիր, խնդրեմ, դու քո գործերի մասին պատմիր:

Հնչեցաւ... է հեղինակի վրայ դրած լսողական:

ՀԵՂԻՆԷ

Օ, գործերս հիանալի են գնում առ ժամանակ. մօղա եմ ընկնում ինչպէս վարժուհի. շատ գիմովներ եղան... Կարծեմ ժամանակ չպիտի ունենամ ամենքին հասնել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Չատ ուրախ եմ, շատ, հեղինէ... Ես հաւատացած էի, որ գործերդ լաւ կ'երթան: (Տալով ծրարը:) Ահա, կարծեմ, մի հրաւեր ես: (Սեղանին, որ մօտ էր նստած նստած:) Պարոնի բաժակը տարէք:

Սեղանը առաջին վայր լսողական, դուրս է բաժանել արձակուրդի փոքրիկ սեղանի վրայ եւ դուրս է Արարիկի սեղանը:

ՀԵՂԻՆԷ, նստելով խորհուրդի յետոյ:

Այո, չիրաւի մի նոր հրաւեր... Բաց ես տասը կրտոր չեմ կարող լինել... Աշտարիտ, զարմանալի մարդիկ են. կամ ամենեւին ոչ ոք չէ հրաւիրում, կամ հէնց որ մէկը հրաւիրում է թէ չէ, այնուհետեւ ամենքն էլ աշխատում են միմեանց առաջը կտրել... Այս ինչ տեսակ բան է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դու էլ դրանց միջից ընտրութիւն արա... Աւելի լաւ է ընտրելու ունենալ, քան թէ ամենեւին չունենալ:

ՀԵՂԻՆԷ

Բաց ժամանակը կորչում է ի գուր... Այն ինչ որ

կարողանում էի դասատան մէջ բազմաթիւ աշակերտների հետ մի ժամում կատարել, այժմ ամբողջ օրեր է պահանջում միայն երեք-չորս աշակերտի համար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, քեզ ուսումնարան է հարկաւոր:

ՀԵՂԻՆԷ

Այո, ուսումնարան: Այնտեղ ես իմ տեղումն եմ, այնտեղ ես զգում եմ, թէ արդարեւ գործ եմ կատարում. ես իմ պաշտօնիս վսեմութիւնը դասատան մէջ եմ միայն հասկանում... Ախ, Մարգարիտ, երբ ես կանգնած եմ երեսուն-քառասուն աշակերտների առաջ, երբ նրանց վառվուռն աչքերն ինձ են նայում, երբ նրանց ուշքն ու միտքը ինձ վրայ է դարձրած, երբ հարցովորձ անելով ես համոզվում եմ, որ մի ժամուկայ միջոցում նրանք ամենքն էլ մի բան սովորեցին ինձանից, ես ինձ երջանիկ եմ համարում այն ժամանակ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստուծով կրկին կը հասնես այդ երջանկութեանը:

ՀԵՂԻՆԷ

Այո, իմ կոչումը ուսումնարանի մէջ է... Ինչպէս լաւ էի իմ պաշտօնում, որչափ երջանիկ էի ես այն ուսումնարանում... Բաց ինչ արած, ուրիշ եւք չկար՝ պէտք է կամ գաղափարներիցս հրաժարուէի, կամ պաշտօնիցս... Երեք տարուկայ աշխատանքս ի գուր անցաւ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ափսոս, ափսոս...

ՀԵՂԻՆԷ, «ԵՆԵՆԷ»

Ափսոս իմ հրեշտակի նման աշակերտներս... Ես բոլորին այնպես էի սիրում, և այնպես սիրուած էի նրանցից, որ կարծում էի թէ նրանք ամենքն էլ իմ հարազատ քույր ու եղբայրներս են... Չէ, ես պէտք է իմ սեպհական ուսումնարանն ունենամ, որ կարողանամ առանց ուրիշի միջամտութեան իմ ուղած ձևն ու կերպարանքը տալ նրան:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի սրտէ ցանկանում եմ քեզ, որ այդ օրին արժանանաս:

ՀԵՂԻՆԷ

Ձնորհակալ եմ, հոգիս. այսպէս թէ այնպէս ես կը հասնեմ նպատակիս... հանգիստ եղիւր... Միայն դու մէկ պատմիր ինձ, թէ քեզ ի՞նչ է պատահել... Քանի օր է արդէն ես նկատում եմ, որ դու թէև աշխատում ես միշտ ուրախ երևալ ինձ, բայց հետք-հետէ աւելի ու աւելի ես տխրում... Դու ծածկում ես ինձանից քո տխրութեան պատճառը, դու երջանիկ չես, Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛հ, թանկագին իմ Հեղինէ, այո՛, դու քո առաջ տեսնում ես ամենաթշուառ մի կին:

ՀԵՂԻՆԷ

Ի՞նչպէս... Միթէ հշմարիտ դու տարաբաղդ ես:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո՛, տարաբաղդ եմ... (Լաւաւ) Օ՛, եթէ հնար լինէր ճանաչել մարդկանց, ինչպէս որ են նրանք իսկապէս, այն ժամանակ, ես կարծում եմ, աշխար-

հիս երեսին մի կին անգամ տարաբաղդ չէր լինիլ... Կարող էի արդեօք մտքովս անգամ անցկացնել, թէ այն բարի, ազնիւ, համեստ երիտասարդը, որ մի քանի տարի առաջ ներկայացաւ ինձ իբրեւ իմ փեսացու, այս անառակ, խաբեբայ մարդն է, որին դու տեսնում ես այժմ որպէս իմ ամուսին:

ՀԵՂԻՆԷ, «ԵՆԵՆԷ» և «ԴՐՈՒՄ»:

Մարգարիտ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Մի՛ զարմանալ, հոգիս, խօսքերիս մէջ չափազանցութիւն չկայ... Ահա, պարոնը նոր է զարթում. առաւօտեան ժամի չորսից յետոյ է տուն եկել: Ես չեմ կասկածում, որ նա ամբողջ գիշերն անառակութեամբ է անցկացրել... Այո՛, այո՛:

ՀԵՂԻՆԷ

Եւ դու չես սխալվում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛հ, ո՛չ, ես լաւ գիտեմ, թէ ի՞նչ եմ ասում. պարոն ամուսնուս ես լաւ եմ ճանաչում... (Լաւաւ) Գուցէ ինձ պատիւ չէ բերում այսչափն էլ ասել, բայց եթէ քեզ ևս չասեմ, Հեղինէ, էլ ի՞նչ եմ ասում, էլ ի՞նչ բանամ սիրտս... (Ձեռքը չքշելով) Էլ հատաւ այստեղ... (Լաւաւ) Եթէ ամբողջ աշխարհն անգամ ինձ տան, էլ աչքիս ոչինչ չի երևալ... (Արտասուքով) Կարծես թէ ես ինձ ծախած լինիմ այս փառքին, այս հարստութեանը...

Այնպէս «ԵՆԵՆԷ» է:

ՀԵՂԻՆԷ

Խեղճ իմ Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՛, հեղինէ, թէ ինչ տանջանքներ եմ կրել այս տանը և ինչքան արցունք թափել այս ոսկէ պատերի մէջ, այդ միայն Աստծուն է յայտնի...

ՀԵՂԻՆԷ

Իսկ ամբողջ հասարակութիւնը քեզ երջանիկ է համարում և շատերը մինչև անգամ նախանձում են քո վիճակին:

ՄԱՐԳԱՐԻՏ, հառաւելեա՛մ:

Նախանձում են... Հը՛մ... հասարակական կարծիքի ստրուկ եմ դարձել, հեղինէ, և ոչ մի կողմից փրկութիւն չկայ... Սո իմ թշնամուս էլ չէի ցանկանալ իմ զրութեան մէջ լինել...

Լուսին:

ՀԵՂԻՆԷ

Քաց մէկ բան շատ է զարմացնում ինձ, Մարգարիտ. ամուսինդ, որքան կարողացա՞ց նկատել այս մի քանի օրս, միշտ քաղցրութեամբ է վարվում հետդ... Եթէ նա քեզ չսիրէր, հազիւ թէ այդպէս քնքուշ վարուէր հետդ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դիմակ, դիմակ, սիրելիս, բոլորը դիմակ է... Նա ինձ հետ աչդպէս վարվում է միայն քո ներկայութեամբ, ուրիշների առաջ, հասարակութեան մէջ, թէև ինքն էլ լաւ գիտէ, որ ես իրան չեմ հաւատում... Ա՛խ, նրա բարութեան և ազնուութեան այդ դիմակն էր, որ ինձ մոլորեցրեց:

ՏԵՍԻՆ Դ

ՆՐԱՆԻ, ԷԼԻԶ, ԱՌԷԼ, պաշտօնական հասարակ նշանակութեամբ, պարտաւոր շահագործ:

ՍՊԱՍԱՆՈՐ, ծանուցանելով:

Տիկին և պարոն Մաստակեաններ:

ՄԱՐԳԱՐԻՏ, Հեղինէն, ցածր և բժէր:

Ամուսնուս մտերիմ բարեկամները (Առաջ փառով և հառաւելութեամբ:) Համեցէք...

Սպասուողը դուք է փոստ:

ԱՌԷԼ, չեմ ինքն լինելու պահ:

Քարի օր ձեզ, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ, չեմ փառով:

Քարև ձեզ, պարոն:

ԷԼԻԶ, նշանակ:

Քարև, սիրելի Մարգարիտ, ինչպէս ես:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ձնորհակալ եմ, դու ինչպէս ես:

ԷԼԻԶ

Ինչպէս տեսնում ես, լաւ եմ:

ԱՌԷԼ

Ինչի՞ լաւ չենք լինիլ, փառք Աստուծոյ. ջաններս առողջ, քէֆներս քօք, հացներս բօլ, հա լաւ ենք ու լաւ էլի:

ՄԱՐԳԱՐԻՏ, հառաւելութեամբ:

Համեցէք, խնդրեմ: (Մեղեւիտ չեմ քէֆ Հեղինէն):
Օրիորդ հեղինէ:

ԱՌԷԼ

Գիտեմ, գիտեմ, ճանաչում եմ: (Ձեռքս դնելով ձեռքիս, բայց խոսելու ուղղությամբ Մարգարիտին:) Այն գիշերը չէր, այն պարահանդեսի գիշերը, որ ժողովարանում միասին ընթրիք էլ վաղեցեցինք: (Հեղինեն:) Ապրիս, շատ ապրիս, գաւակս:

Թերլեւանդը դուռն է մը իրենի հեղանի վրայ:

ԵԼԻՋ, Կոմբուրեշու՛՛՛՛ Զեշնեշն:

Իսկ մենք նույն դիշեր բարեկամացանք արդէն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նստեցէք, խնդրում եմ: Մի մի բաժակ սուրճ,
էթէ թոյլ կը տաք:

ኪኩዳ

Ո՛չ, շատ շնորհակալ եմք, մենք արդեն խմել եմք:

ԱՌԷԼ

Ես իմ սուրճն էլ, իմ թէյն էլ վաղուց խմել-պրծել եմ:

ՀԵՂԻՆԷ, Մարտիրոսէն, Էմբրան:

Ես գնամ, տեսնեմ ի՞նչ են ուզում: (Հե-րեհի:) Նե-րողը թիւն են խնդրում, ես ստիպուած եմ գնալու:

ԱՌԷԼ

Վա՛, մեր գալը ձեզ դուր չեկա՞ւ, ի՞նչ է:

ՀԵՂԻՆԻ

Այս, ինչ էք հրամայում, պարոն, ես արդէն զընալու էի, երբ դուք շնորհ բերիք:

ՄԱՐԳԱՐԻՏ, նահապետ Կառլով Հեղինեի:

Այո, օրիորդին ահա հրաւիրել էն:

ԱՌԵԼ

Քնն, գնն, զաւակս, շատ ապրիւս. գործիդ միշտ
աչդպէս արի եղիր:

ՀԵՂԻՆԻ

Ըստ շնորհակալ եմ, պարոն: (Զեւ: Կառլ:): Մնաք
բարեաւ: (Էլիէն, Նոյն): Յտեսութիւն, տիկին, նե-
րեցէք, խնդրում եմ: (Մարտիրոս): Ես շուտով կը
վերադառնամ, Մարգարիտ:

Գլխավորը չէ-ն-ի-ն փռ-ն է իր աշխատը:

Stuhl *t*

ՆՐԱՆԻ, — ՀԵՂԻՆԷԻ

ԱՌԷԼ

Այս ի՞նչ է նշանակում. մինչև այժմ տանն է մեր
սխեմաշուք պարոնը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս դիմելի շատ ուշ է տուն եկել:

Հնչեցումս է արժանիք:

ԱՐԷԼ

Զարմանում եմ... Գիշերս նա մեզ մօտ էր և դեռ
Ժամը տասնումէկը չկար, փախաւ. պէտք է տուն
դնամ, ասաց... Ձատ խնդրեցի, բայց չկացաւ...

ከጌዳ

Ո՛վ գիտէ՛ ճանապարհին ում պատահեցաւ. դու
էս ասո՛ւմ, որ գործ շատ ունի:

ԱՐԷԼ

Մի պատճառ կը լինէր էլի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի հարկէ առանց պատճառի չէր լինիլ: (Նրանց
հանգանակէն եւս հարկէն չէր հանուած ընդհանուր իրաւունքն էր):

Հեռուէն Կոնստանտին [Զախ կողմի երկրորդ կարգի դուռը:] Սէնէլը:
Այս ուր էք, Սէսիլ, այսքան կանչում եմ ես ձեզ:
(Սպասողով Կոնստանտին և Գրեյսը): Հաւարեցէք այս ամենը:

Աճիլ, Սէնէլը, Գրեյսը... Կոնստանտին և Գրեյսը
Կոնստանտինը:

Չգիտեմ, սիրելիս, կարելի է պարոնին տեսնել:
Հարկաւոր գործ ունիմ:

Սէսիլ, նախ:

Չգիտեմ, պարոն:

ՄԱՐԳԱՐԻՏ, Սէնէլը:

Ասացէք, որ չպտտեն պարոնին:

Սէսիլ, յիշ:

Իսկոյն, տիկին:

Սէնէլը չէ՛հին Կոնստանտին և Գրեյսը: Աճիլը, Կոնստանտինը, Կոնստանտինը և Գրեյսը Սէնէլը վերաբերմամբ:

Էլիք, որ Կոնստանտինը չէ՛հին Սէնէլը:

Այս աղախնին նոր էք վարձել... Անցեալ անգամ
որ այստեղ էի, կարծեմ դա չկար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛հ, կար. մէկ ամսից աւելի է մեկ մօտ է:

ՏԵՍԻԼ 2

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱՌԻ, պաշտօնական հասարակ նշանակութեամբ
այն, ինչպէս ասարակ նշան, ինչ պաշտօնային նշան:

ԱՐԿԱՌԻ

Ա, բարով, հազար բարի էք եկել:

Տալիս և չէ՛հին Սէնէլը և Կոնստանտինը:

ԱճԻԼ

Բարով, ձերդ վսեմութիւն... Այս օրն անց է և
դուք դեռ տանն էք: Երեկոցեան մեկ մօտ ընթրի-
քի էլ չմնացիք. պէտք է տուն դնամ, կինս մեզք
է, ասում է... Այդ է:

ԱՐԿԱՌԻ

Հաւատացէք, չարդելի բարեկամս, ես ինքս էլ չէի
սպասում... Հէնց ձեր տանից մի տասը քաջ հազիւ
էի անցել, որ իմ լաւ բարեկամներիցս մէկը պատա-
հեցաւ, արտասահմանից նոր էր եկել... Կամենում էի
հետո տուն բերել նրան, բայց որովհետեւ մի փոքր
ուշ էր արդէն, մտածեցի անհանգիստ չանել կնոջս...
(Մարգարիտ չէ՛հին Կոնստանտինը): Այս, բարի լոյս, անգիմս, ինչ-
պէս ես: (Մարգարիտը չէ՛հին Կոնստանտինը): Խօսելով գնա-
ցինք հիւրանոց, ուր նա իջել էր... Դէհ, գիտէք
էլի, երկու լաւ բարեկամ որ միմեանց պատահում
են, էլ վերջ չի լինում նրանց քաղցր խօսակցութեա-
նը... (Սպասողով Կոնստանտին և Գրեյսը): Եւ ինչ վերջ, որ Լաւին
նախ ծածկում է բերանը: ժամը չորսն անց էր, որ հա-
զիւ բաժանուեցանք:

Եւ ինչ Լաւինն է բերանը բռնած հաղած է:

ԱճԻԼ

Տեսէք, խնդրում եմ. ուղիղ ժամը չորսն էր, որ
սա էլ ինձ զարթացրեց իր աղմուկով... Թրը'սիկ,
թրը'սիկ... Գնացին, եկան, վաչր գցեցին, կարծեցի
զողեր են եկել... Դուրս նայեմ, ինչ տեսնեմ. աղջիկ-
պարոնս մենակ բոլթա է տալիս դահլիճում... Ինչ
է, ինչ է պատահել. սա թէ՛ վախեցաց, գետինը ժաժ-
եկաւ, ասում է.. Դուք իմացա՞ք գետնի ժաժ գա-

լը... Ը՛մ, ի՛նչ գետին ժած գալ, ի՛նչ Ֆրան, ի՛նչ Ֆրստան... Մի ասիլ, երազումը վախեցել է աղջիկ-սարոնս, վեր է թռել յանկարծ, քնաթաթալս դուրս է ընկել դահլիճ, ես հօ միւս ծալրին եմ քնած, դիպել է աթոռին, աթոռն էլ միւսին ու երկուսը միասին՝ շրջակ, թրքակ, վայր են թափվում յատակի վրայ... Գետինը ժած եկաւ, ասում է... (Ծեծ-ռո՛ւ՛ է:) Այդպէս որ ամեն ժամանակ գետինը ժած գաց, աչդ ուր կ'երթայ, ձեզ եմ հարցնում... Ի՛յ քարը քարի վրայ չի մնաց, Աստուած է վկայ:

ԻԼԻՋ, ամառու:

Վա՛, ես ի՛նչ անեմ, որ վախեցայ:

Խորհրդաւոր հայտն է չե՛ում Արեւելի վրայ. այդ հիւսիս է Մարտիրոսը, որ սփռւ է հեղուկէրէ պէշի և առէլի յառաջ:

ԱՐԿԱՂԻ, զսպելով ծիծաղը:

Չատ բնական է, որ մարդ երազի մէջ վախենայ, ի՛նչ կայ որ:

ԱՏԻԼ

Ի՛հ, ձերդ վսեմութիւն, վախենալն էլ իրանից է... Այնքան ասում եմ՝ մենակ մի քնիր. գիշերն առանձին սենեակ հարկաւոր չէ քեզ... բայց ում կը հասկացնես. կինարմատի հալսիցը ով կարող է գալ... Այս ամենը ձեր շնորհիւն է, ձերդ վսեմութիւն. չէ որ դուք ևս առանձին-առանձին սենեակ ունիք... Նաչեց կինս և սրվորեց:

ԱՐԿԱՂԻ

Ի՛հ, պ. Արեւ, նոր ժամանակ, նոր սովորութիւններ...

ԱՏԻԼ

Դուք գիտէք, ձերդ վսեմութիւն... Քնելն էլ որ մօղաչի տակ զցեցիք, էլ ի՛նչ բարիքի սպասի մարդ... Տեսնենք վերջն ի՛նչ է լինելու... Ես միայն այսքանը կ'ասեմ, որ եթէ սրա հաւատարմութեան մասին բոլորովին վստահ չլինէի, մի ըստէ էլ կողքիցս չէի հեռացնիլ, հաւատացէք ինձ:

ԻԼԻՋ

Դու հօ չես կարող փոխել աշխարհի սովորութիւնը...

ԱՏԻԼ

Նորից մի սկսիր, խնդրեմ:
ԱՐԿԱՂԻ, Էլիէն, որ խորհրդաւոր լինող հայտն է եր չե՛ում
դաշտաւորին:

Այդ ի՛նչ հիանալի պաշտօնակ է, տիկին:

Ասում է չե՛ում:

ԱՏԻԼ, Էլիէն:

Մեր տատերը որ աչդ չէին գործ ածում է, դրա համար էլ հարկը տարեկան հասակի չէին հասնում, չէ:

ԻԼԻՋ

Զարմանալի դատողութիւն... Չգիտեմ թէ պաշտօնակի գործածութիւնը ում ինչ վնաս կարող է տալ:

ԱՐԿԱՂԻ, իբր Էն հիւսիս է դաշտաւորին:

Հիանալի է, հիանալի:

ԱՏԻԼ, Էլիէն:

Ով իմանայ, հոգիս, կարելի է մեծ վնասը հէնց դրա մէջն է: (Մարտիրոս, ճիշդէն աս և Էլիէն պարբեր)

յուզմանով նայում էն Արեւիկին, որ այն ճիշդին պայտասնից ճի
 փոքրիկ լուռը է հասնում ծածկաբար։) Կատակ չեմ անում,
 տիկին, այնպիսի բաներ մօղա եկան, որ էլ մարդ
 չէ իմանում թէ ինչիցն է մեր կեանքը կարճանում։

ԱՐԿԱՂԻ, լուռը ծոցումը պահելով։

Ջարմանալի լաւ ճաշակ ունիք, տիկին։ (Պայտասնը
 վերադարձնելով էլեւէն։) Բարով վայելէք։

ԷԼԻԶ

Միթէ այդքան հաւանում էք։

ԱՅԻՆ, Մարգարիտն, որ հարձքը բանած եւ բոլորովին գունդ-
 լառի որդէն որսի է նստնել։

Տիկին... (Էլեւէն հրեւել։) Այս կողմը նայիր։

ԱՐԿԱՂԻ, էլեւէն։

Հիանալի է, հիանալի... (Մարգարիտն։) Ի՞նչ եղաւ,
 սիրելիս, ի՞նչ պատահեցաւ։

ՄԱՐԳԱՐԻՏ, սասնիկ յուզւած։

Ո՛չ, ո՛չ, ո՛չ... (Սէւէն։) Ներողութիւն, պարոն,
 ես տկար եմ։

ԱՅԻՆ

Խնդրում եմ, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ, սիրով բանած փնտռում է. յետոյ, առանցին, դառն
 հեղինակեմէ։

Հիանալի է, հիանալի...

Գնում է իր սենեակը. բոլորեւեմն շուրջում էն։

ԱՐԿԱՂԻ, անձնապէս։

Ապէք, դուք կացէք։

Շրտալով հեղինակում է Մարգարիտն։

ԷԼԻԶ, առանցին։

Արդեօք բան նկատեց։

ԱՅԻՆ

Այս ի՞նչ է նշանակում։

Էլեւէն շանթաբ լաւում է դեղի Արեւիկն, որ վերադառնում է։

ԱՐԿԱՂԻ, դառնալով։

Ո՛չ, ո՛չ, ո՛չ, հանգիստ եղէք։

ԷԼԻԶ, Արեւիկն, ցածր։

Կարելի է տեսնաւ։

ԱՐԿԱՂԻ, նայողէն։

Ո՛չ, դրան այդպէս երբեմն պատահում է։ (Բարձր։) Նե-
 րեցէք, ես իսկոյն կը վերադառնամ։ Նստեցէք, խնդրեմ։
 Յե՛ք է փնտռում։

ՏԵՍԻՆԷ Է

ԱՅԻՆ, ԷԼԻԶ

ԱՅԻՆ

Յաւազար է եղել խեղճը։

ԷԼԻԶ

Ոչ թէ ցաւազար, այլ խտերիկա ասն։

ԱՅԻՆ

Ում ինչ պատահի, քեզ համար բոլորն էլ իստե-
 րիկա է։

ԷԼԻԶ

Ո՛ր բժշկին կամենաս հարցրու։

ԱՅԻՆ

Խտերիկան ի՞նչ բան է, ասն, խնդրեմ... Ի՞նչ չի-
 մար անուն ասես բժշկները կը հնարեն... Յաւը
 ցաւ է, հիւանդութիւնն էլ հիւանդութիւն։ Հետը

խօսելիս էլ պարզ տեսնում էի, որ դունաթափվում էր... Ինչի՞ դու չես դունաթափվում այդպէս կամ ինչի՞ դու չունիս այդ իստերիկան, եթէ լաւ բան է:

ԵԼԻՋ

Աստուած մի արասցէ:

ԱՅԻԼ

Այո, ես քեզ ասում եմ, մօղնի բաներից ձեռք վերցրու, եթէ ոչ մէկ օր քեզ էլ կը պատահի այդ իստերիկա է, ինչ զահրումար է:

ԵԼԻՋ

Վաչ, անիծում ես ինձ:

ԱՅԻԼ

Հնգհաւառակը, իմ սիրուն թռչնակս, ես քեզ խրատում եմ. այդ իմ պարտաւորութիւնն է... Օրինակ՝ ինչ է աւելանում քեզ, որ անունդ դրել ես Ելիզ... Մկրտութեանդ անունը Եղիսաբէթ է, Եղիսաբէթ էլ կ'աց քեզ համար. եթէ ոչ, ինչ է՝ Ելիզ, Ելիզ... Քաղցրութիւն ես ուզո՞ւմ, ահա քեզ՝ Եղսօ, կամ Սաբէզ... Ա՛րի Սաբէզ դառիր, եթէ ուզում ես:

ԵԼԻՋ

Լուացարար եմ, ինչ է:

Գնում է եւ Մարգարիտի սենեակի դռնից ծածուկ հայտնւմ:

ԱՅԻԼ, առաջին:

Ինչիցն է, որ կանաչք այսպէս հետաքրքիր են:

Հետեւում է քնոյլ օրհնակին:

ԵԼԻՋ, երկրորդ:

Նա բոլորովին առողջ ման է գալիս:

ԱՅԻԼ

Ե՛հ, փառք Աստուծոյ... Երանի մի շուտով այն

մարդը դուրս գար, (Թէրեւորայից մի ծրար հանելով) մէկ այս ցաւից ազատուէի:

ԵԼԻՋ

Սպասիր մի փոքր, ինչ եղաւ քեզ:

ԱՅԻԼ

Ինչպէս որ կը հրամայես, իմ սիրելի Սաբէզ:

Առաջին, ծիծաղելով երեսը ծածուկում է:

ԵԼԻՋ

Ես քեզ հրամայում եմ, որ այսուհետեւ էլ չհամարձակուես Սաբէզ. ասել ինձ:

ԱՅԻԼ

Լաւ, լաւ, ներիր, մի բարկանար, իմ անդին Ելիզ, մա շէր Ելիզ... Դու գիտես, որ ես քեզ շատ եմ սիրում և ոչինչ չեմ խնայիլ քեզ համար... Ես պատրաստ եմ գլուխս քեզ մատաղ անել:

ԵԼԻՋ

Ի հարկէ գիտեմ և հէնց դրա համար էլ քո մէկ մագըր ամբողջ աշխարհի հետ չեմ փոխիլ:

ԱՅԻԼ, երկրորդ:

Իմ աղաւնեակս... իմ հրեշտակս...

ԵԼԻՋ, աղաղակելով:

Գալիս են, գալիս...

ՏԵՍՈՒԼ Ը

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, ծածուկաւ:

Ապրիլ, ապրիլ, կեցցէք:

ԷԼԻՋ, ԱՔԷԼԷՆ, ԿԺԲ:

Խաչտառակեցիր:

ԱՐԿԱՌԻ

Ո՛րչափ հաճելի է սիրով ամուսիններ տեսնելը:

ԱՖԷԼ, ԺԻՅԵ ԵՆԶ ԶՈՒՄՈՒՄԺ:

Է՛հ, ի՛նչ անե՞նք, ձերդ վսեմութիւն, շատ մարդ սովորութիւն ունի՝ ուրիշի կնկան է գրկում, այս մէկն էլ իմ կնկան ես ինքս լինիմ գրկած, ի՛նչ կաշ ուր:

ԱՐԿԱՌԻ

Կատարելապէս իրաւունք ունիք, բարեկամս:

Յոնիսթանա՛ն հայեացք է չէ՞ր Էլիճ Վրայ:

ԷԼԻՋ, հայեացքով հոնէստացիո՛ւմ է Արքաթիւն:

Խոնչապէս է Մարգարիտս:

ԱՐԿԱՌԻ

Փառք Աստուծոյ... Մի քիչ կողքը ցաւում էր, բայց անցաւ: Երևի մըսել է: (ԱՔԷԼԷ ԶԱՐԺԱՆԺԻՆԻ յԷՆԵՅԻՆԻՄ Ե ԷԼԷՅԻՆ, որ ինչն ուղիղ էր նշողէլ, ԲԵ Մարգարիտը Հիւանդ է:) Միայն ներողութիւն է խնդրում, որ չէ՛ կարող դուրս գալ... Ես ինքս առաջարկեցի, որ փոքր ինչ հանդստանայ:

ԱՖԷԼ

Մենք հօ օտարներ չենք, ձերդ վսեմութիւն, թող հանդստանայ, աւելի լաւ:

Մօնէնում է Էլիճին և ՂԵՐՈՂԻՄԻՄ Ե ԺԻՅԵՐԻՄ:

ԷԼԻՋ, Արքաթիւն, ԿԺԲ:

Ուրեմն ոչինչ չէ՞ նկատել:

ԱՐԿԱՌԻ, ԿՅՆՊԷՆ:

Հանգիստ եղիր... (ԱՔԷԼԷՆ, Բարչե:) Այդ ի՛նչ է, սիրելիս:

Էլիճ ծի չորսը շաշաւէլով, ՂԵՐՈՂԻՄԻՄ Ե ԽԵՅԻՄԻՄ:

ԱՖԷԼ

Ձեր վսեմութեանը յայտնի բարեգործութեան համար հաւաքած...

ԱՐԿԱՌԻ, ԷՆԴԻՆԷԼԻՄ:

Գիտեմ, գիտեմ...

ԱՖԷԼ, ԺԻՅԵ ԿԱՆՈՒՄ Արքաթիւն, ԿԺԲ:

Բոլորն այդտեղ է՝ փողն էլ, հաշիւներն էլ:

ԱՐԿԱՌԻ, ԺԻՅԵ ԿԱՆՈՒՄ ԺԻՅԵ:

Լաւ, լաւ...

ԱՖԷԼ, Արքաթիւն, ԺԺԲ:

Ես իմ մասն արդէն վերցրել եմ:

ԱՐԿԱՌԻ

Չատ բարի... Ես այսօր եթէ կը հրամայեմ, որ բոլոր գործերը վերջացնեն... Ուրիշ ի՛նչ կաշ այդտեղ թերթապահում:

ԱՖԷԼ

Ամենահարկաւոր պաշտօնական թղթեր են, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱՌԻ

Թողէք այստեղ, ես շուտով կը վերադարձնեմ... Այդպէս, այդպէս թերթապահով:

ԱՖԷԼ

Եթէ թոյլ կը տաք, ձեր սենեակը կը տանեմ:

ԱՐԿԱՌԻ

Ա՛խ, դուք ինչի՛ էք նեղութիւն կրում:

ԱՖԷԼ

Ի՛նչ էք հրամայում, ձերդ վսեմութիւն, այս ի՛նչ նեղութիւն է:

Թերթապահը չէ՞սին ԿԱՆՈՒՄ Ե ԺԺԲԻՄ Ե ԺԺԲԻՄ:

ԷԼԻՋ, վաղէտը Գեղի Արեւիկին, ցածք:

Ես կարծում եմ որ բռնուեցանք:

ԱՐԿԱՂԻ

Ո՛հ, ասում եմ. միամիտ եղիր... (Ձեռքը դնելով ծոցը):
Այս ի՞նչ ես գրել:

ԷԼԻՋ

Կը կարդաս, կ'իմանաս...

ԱՐԿԱՂԻ, ծոցից հանելով լուսնը:

Ի՞նչ գաղտնիք է:

ԷԼԻՋ

Ա՛, խնդրեմ...

Վաղուհի է Գեղի ալբոմը եւ առաջուայ դերձն ընդունում:

ԱՐԿԱՂԻ, վերադառնալով:

Բոլորը կարգով դարսեցի սեղանի վրայ:

ԱՐԿԱՂԻ, պահելով լուսնը:

Չատ շնորհակալ եմ:

ԱՐԿԱՂԻ

Չարժէ շնորհակալութեան, ձերդ վսեմութիւն:

ՏԵՍԻՆ Թ

ՆՐԱՆՔ, ՀԵՂԻՆԷ

ԱՐԿԱՂԻ, Հեղինէին, որ հարս է իր սենեակից:

Ա՛, օրիորդ Հեղինէ, բարեւ ձեզ... Ի՞նչպէս էք, այսօր դեռ չենք տեսնուել:

ՀԵՂԻՆԷ

Չատ շնորհակալ եմ, պարոն. դուք ինչպէս էք:

ԱՐԿԱՂԻ

Ինչպէս տեսնում էք, օրիորդ, ես միշտ լաւ եմ, միշտ առողջ, միշտ էլ ուրախ... Կարծեմ, տիկնոջը և բարեկամիս ճանաչում էք:

ՀԵՂԻՆԷ

Այո, պարոն, փոքր ինչ առաջ մենք արդէն տեսնուեցանք այստեղ:

ԱՐԿԱՂԻ, ԱՐԵՎԻԿ:

Չատ լաւ բան էք արել, ձերդ վսեմութիւն, որ օրիորդին ձեզ մօտ էք ընդունել: Այսպիսի վտանգաւոր ժամանակ, երբ ամեն մի քայլափոխում մի մի գալիս է հանդիպում մարդ, ձեզ պէս տէր ունենալը մեծ բաղդ է: (Հեղինէին): Այո, օրիորդ: (Էլիէին): Ի՛հ, գնանք, հոգիս, ժամանակ է: (Արեւիկին): Ներողութիւն:

ԱՐԿԱՂԻ

Իսկոյն, իսկոյն: (Հոգ է առնում Էլիէինին հանգիստ տալու): Մեր կառքով գնացէք, խնդրում եմ:

ԷԼԻՋ, Գեղին:

Ինչի՞ էք նեղութիւն քաշում, պարոն, շատ շնորհակալ եմք, այնպէս էլ կ'երթանք, հեռու չենք:

ԱՐԿԱՂԻ

Յատուկ խնդրում եմ:

ԱՐԿԱՂԻ

Ճշմարիտ, ի դուր նեղութիւն էք կրում, ձերդ վրսեմութիւն. չէ՞ որ դուք ևս գնալու էք շուտով:

ԱՐԿԱՂԻ, սենեակի ծածկուցից հանելով:

Օ՛, ես դեռ բաւական ժամանակ ունիմ... (Ներքէն):

ճորձը պատահեցին:) Տիկնոջը և պարոնին մեր կառքով տանեն:

Սպասուհին գլուխ էր հարկում և դուրս էր գնում:

Ի՛նչ, առանցիկ չէ՞ր ելնու:

Չատ շնորհակալ ենք, որ այդպէս պատվում էք մեզ... (Ձեռք հարկում) Մնաք բարեալ. մեզ մի մոռանաք, խնդրում եմ: (Հեղինէին, համբուրելով) Յտեսութիւն, օրիորդ...

ՀԵՂԻՆԷ

Յտեսութիւն, տիկին:

ԱճԻ՛, չե՞ս հարկում:

Մնաք բարեալ, օրիորդ... Ո՛ղջ և առողջ լինիք, ձերդ վսեմութիւն:

Ի՛նչ, առանցիկ չէ՞ր ելնու, Հեղինէին:

Մարդարտիս լաւ պահեցէք: (Արեւելին) Յոյս ունիմ՝ այս անգամ երկար սպասել չէք տալ մեզ:

ԱՐԿԱՂԻ, առանցիկ:

Անչափ բարի էք, տիկին:

Ի՛նչ, ու՝ Աբէլը դուրս էր գնում:

ՏԵՍԻՆԷ

ՀԵՂԻՆԷ, ԱՐԿԱՂԻ

ՀԵՂԻՆԷ

Մարդարտիս ուր է:

ԱՐԿԱՂԻ

Իր սենեակումն է: (Հեղինէին համբուրելով) Սպասեցէք, օրիորդ:

ՀԵՂԻՆԷ

Ի՛նչ կը հրամայէք:

ԱՐԿԱՂԻ

Ասացէք, խնդրեմ, օրիորդ, արդեօք գոհ էք ձեր սենեակից:

ՀԵՂԻՆԷ

Ես շատ գոհ եմ, պարոն, իմ սենեակից և անչափ շնորհակալ եմ ձեր հիւրասիրութիւնից:

ԱՐԿԱՂԻ

Ի՛նչ էք հրամայում, օրիորդ, այդ իմ պարտականութիւնն է: Դուք այնպիսի սուրբ գործի էք ծառայում, որ մարդ ինչ էլ կառարի ձեզ համար, դարձեալ քիչ է... Տարածել լոյս և գիտութիւն մատաղ սերնդի մէջ, պատրաստել հասարակութեան համար բարոյապէս զարգացած մաշտեր... միթէ սրանից էլ աւելի վսեմ աշխատանք կայ աշխարհիս երեսին... Օ՛, ես սաստիկ ջարդում եմ լուսաւորութիւնը և, հաւատացէք, գիտեմ գնահատել ձեզ նման աշխատաւորներին... Ձեր կոչումը, օրիորդ, վսեմ է և սուրբ. ես խոնարհվում եմ այդ կոչման առաջ և երջանիկ կը լինէի, եթէ կարողանայի մի կերպ հաճելի զրտնուել ձեզ:

ՀԵՂԻՆԷ

Դուք չափից դուրս բարի էք, պարոն, շատ շնորհակալ եմ:

ԱՐԿԱՂԻ

Օ՛, օրիորդ, իմ կնոջ սրտակից բարեկամուհու համար ես ոչինչ չեմ խնայիլ, հաւատացէք... Ես շատ եմ սիրում կնոջս, շատ, և այդ պատճառով սիրում և

յարգում եմ ամենին, ով որ նրան սիրում է... Խեղ-
ճը հիւանդոտ է, տեսնում էք. միշտ տխուր, միշտ
սիրտը ծածկում... Չգիտեմ, ինչ անեմ, ինչպէս ու-
րախացնեմ... ոչինչ չէ չառողվում ինձ... Այս մի քանի
օր է միայն որ ես նրա երեսին երբեմն ժպիտ եմ
նշմարում... Ուրեմն դուք ինքներդ կարող էք դա-
տել, թէ որքան պիտի ես գոհ լինիմ, որ դուք մեզ
մօտ էք բնակվում... Աստուած կը վարձատրէ ձեզ
ձեր բարի, ազնիւ սրտի համար: (Ժամացոյցն հայելով):
Սակայն ժամանակ է... (Տալով չեւառ): Յատուկ ներո-
ղութիւն եմ խնդրում, օրիորդ, պաշտօնական դոր-
ձերս ստիպում են ինձ ձեզ թողնելու: Յետեւութիւն,
օրիորդ:

Թողնում է չեւառ:

ՀԵՂԻՆԷ

Յետեւութիւն, պարոն:

ԱՐԱՄԻ, ԳԵՂԵՂԻԿ:

Օ, որալիսի գեղեցիկ աչքեր...

Դուք ե զնոս:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՀԵՂԻՆԷ, ԳԵՂԵՂԻԿ:

Ես այլևս ոչինչ չեմ հասկանում... Միթէ Մար-
գարիտը սխալվում է... (Ամսօրն է հոնէլ Մարգարի-
տին): Դուռը փակած է: (Ամսօրն բողբոսում է դուռը.
լսվում է Մարգարիտի ձայնը՝ Ո՛վ է...) Ես եմ: (Դարձեալ
Մարգարիտի ձայնը՝ Իսկոյն:)

ՏԵՍԻԼ ԺԲ

ՀԵՂԻՆԷ, ՄԱՐԳԱՐԻՏ

ՄԱՐԳԱՐԻՏ, շէնքի մէջէն դուրս հայելով:

Դու մենակ ես:

ՀԵՂԻՆԷ, աղաւթ:

Այո:

ՄԱՐԳԱՐԻՏ, աչքերը հրէշլով:

Ամէնքը գնացին:

ՀԵՂԻՆԷ

Այո, ամենքը: (Մարգարիտը հոգում է և իրեն աչքերը «ըն-
քում»): Բաց դու ինչո՞ւ ես լաց լինում... Արկին մի նոր
վիշտ: (Լսում է): Ինչո՞ւ ոչինչ չես խօսում: (Նայելով
հեղինէի առջև): Ասա, հոգիս, ասա, ինչ է պա-
տահել. չէ՞ որ ես քո հեղինէն եմ, դու ինձանից ո-
չինչ չունիս ծածկելու... (Թողնելով չեւառ): Բաւական է,
Մարգարիտ, բաւական. հանգստացիր, աղաչում եմ...
Երեւի քեզ վշտացրել են:

ՄԱՐԳԱՐԻՏ

Հատ, շատ...

ՀԵՂԻՆԷ

Ո՛վ... ամուսինդ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ամուսինս... Վաղուց է որ ես նրան ճանաչել եմ.
նրա արարմունքն ինձ չի վրդովեցնում այլևս... Բաց
երբ քեզ խաբում է քո ընկերուհին, որի հետ դու
երեսաց մեծացել ես, որին դու քոյր էիր համարում

միշտ... Ա՛խ... (Ըսածուած էր ինչ որ ասացաւ ինչ
յոսահայրուիւնէն:) Ի գուր չէր կասկածս... (Հէղինէն աշ-
շու է:) Թողնենք, թողնենք, խնդրում եմ... Ես այժմ
ոչինչ չեմ կարող ասել... Ես սաստիկ անպատուած
եմ... բոլոր ցաւս արտայայտել անկարող եմ... Ես կը
խեղդուեմ պատմելիս... Ինձ չիմարի տեղ են ընդու-
նում... Ինձ կոյր են համարում...

ՀԵՂԻՆԷ

Հանգստացիր, Մարգարիտս, աղաչում եմ, հանգըս-
տացիր:

ՄԱՐԳԱՐԻՏ, Հէղինէն չէր բռնել:

Այո, այո, քոյրիկ, այո, հոգիս, ես բոլորը կը պատ-
մեմ քեզ, բոլորը. այժմ ներիր:

ՀԵՂԻՆԷ

Լաւ, լաւ, հանգստացիր միայն, խնդրում եմ, յետոյ
ի հարկէ կը պատմես. այժմ ուրիշ բան խօսենք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, ուրիշ բան, ուրիշ բան... Թող մտքիցս հե-
ռանան այն զգուելի տեսարանները... (Բռնելով Հէղի-
նէն չէր զրոյս, որո հետ իրան լաւ մտն է գալիս ծանր չայլերով
և արտաբերէ. չէրոյ բռնած շայտով:) Դու ի՞նչ արիր:

ՀԵՂԻՆԷ

Չատ խիտտ պահանջներ են առաջարկում, Մար-
գարիտ. երեք երեխայ, առաւօտները դասեր զա-
նապան առարկաներից, նրանց հետ միասին ճաշել,
խսկ երեկոյեան՝ զբօսանք: Այդ շատ ծանր է ինձ հա-
մար... Ուրեմն պէտք է ամբողջ օրս նրանց նուիրեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Յետոյ համաձայնեցիր:

ՀԵՂԻՆԷ

Ո՛չ, մերժեցի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛րքան դո՛հ եմ, Հէղինէ, որ մերժել ես... Այլևս
անկարող եմ առանց քեզ ապրել... Քեզանից աւելի
էլ ոչ ոք չունիմ:

ՀԵՂԻՆԷ

Իսկ ես ո՞վ ունիմ բացի քեզանից:

ՍՊԱՍՆԱՌ

Տիկին, մի անձանօթ զինուորական է:

Արծաթէ փայլէ ոչնչեղով առաջընդէմ է ինչ այնպիսին:

ՄԱՐԳԱՐԻՏ, յոգուելով, վերցնում է այնպիսին:

Արտա... շէս Արա... մեան... (Սպասարկէն:) Խնդրիր:
(Սպասարկէն դուրս է գնում:) Ա՛խ, Հէղինէ, ես այսպէս...

ՀԵՂԻՆԷ

Ի՛նչ պատահեցաւ քեզ, Մարգարիտ. դու բոլորո-
վին դունատուեցար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛վ, ես... Միթէ...

ՀԵՂԻՆԷ

Այո, այո, հոգիս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, նա բարձրանում է:

ՀԵՂԻՆԷ

Իսկ ես փախչում եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Սպասիր, սպասիր, խնդրում եմ:

ՀԵՂԻՆԷ

Ես գործ ունիմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՛, աչդ մի չնչին բան է: (Հրա-բեւոյն) Համեցէք,
նստեցէք, խնդրեմ: (Նստաւ էն:) Իսկ պ. Լեոնն ուր
է. չէ որ դուք խոստացաք միասին շնորհ բերել:

ԱՐՏԱՂԻՍ

Այո՛, տիկին, բայց նա գնաց զիւղը և դեռ երեւի
ուշ կը վերադառնայ:

ՀԵՂԻՆԷ

Գիտես, Մարգարիտ, պ. Արտաշէսը գնում է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Միթէ...

ԱՐՏԱՂԻՍ

Այո՛, տիկին, ես հէնց այսօր գնալու եմ. եկել եմ
ձեզ բարև-մնաք ասելու:

ՄԱՐԳԱՐԻՏ

Միթէ այդպէս շուտ... Եւ երկար կը տևի ձեր
բացակայութիւնը:

ԱՐՏԱՂԻՍ

Չգիտեմ, տիկին, աչդ կախուած է հանգամանքնե-
րից. գուցէ մի քանի շաբաթ ուշանամ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ ձեր նոր վէպը... Չարունակում էք արդեօք:

ԱՐՏԱՂԻՍ

Ինչպէս չէ, տիկին, բոլոր ազատ ժամանակս նը-
րան եմ նուիրում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ցանկանում եմ ձեզ յաջողութիւն... (Լսուելին:)
Այդպէս... Գնում էք ուրեմն... Աշխատեցէք շուտով
վերադառնալ. մենք կը սպասենք ձեզ:

ՀԵՂԻՆԷ, ԴԵՂԻՆԷ ԴԵՂԻՆԷ:

Ներողութիւն եմ խնդրում, պ. Արտաշէս, ստի-
պուած եմ, դասի եմ գնալու:

ԱՐՏԱՂԻՍ, ԴԵՂԻՆԷ:

Ա՛, խնդրեմ, օրիորդ:

ՀԵՂԻՆԷ, ՅԵՐՈՒՄԱՆ ԲԱՐՈՒՆԷՆ:

Ռարով գնաք, բարով գաք... Եթէ պ. Լեոնին
տեսնէք, ինձանից շատ բարև արէք, խնդրեմ:

ԱՐՏԱՂԻՍ

Անշուշտ, օրիորդ, ես նրա զիւղով եմ անցնելու:

Հեղինէ՛ն, ողջունում եմ և քնում եմ սէնեմը:

ՏԵՍԻՆԱ ԺԵ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐՏԱՂԻՍ

ԱՐՏԱՂԻՍ, ԴԵՂԻՆԷ:

Ճշմարիտ որ շատ համակրելի օրիորդ է... Ռարեկամս
ի դուր չէ այնպէս հրապուրուել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իրաւ... Ուրեմն պ. Լեոնը հաւանում է Հեղինէլու:

ԱՐՏԱՂԻՍ

Այո՛, տիկին, շատ է հաւանում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Հեղինէս էլ յաճախ է մտաբերում նրան... Փոխա-
դարձ համակրանք...

ԱՐՏԱՂԻՍ

Իսկ ես համոզուած եմ, տիկին, որ բարեկամս մին-
չև անգամ սիրում է օրիորդին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդպէս... Տաչ Աստուած, որ սիրեն միմեանց: Երկուսին էլ սրտանց երջանկութիւն եմ ցանկանում:

ԱՐՏԱՂԻՍ

Երբ երկու սիրտ իրար հասկանում են և զնահատում, երջանկութիւնն այնքան էլ հեռու չէ նրանցից...

ՄԱՐԳԱՐԻՏ, յոգնաց հոգեւոր:

Այո, եթէ միայն այդ սրտերը անյաղթելի արդելքներն չեն հանգիստում...

Աշխարհում է ճիշդ ծածկել յուզմունքը:

ՏԵՍԻՆ Ժ.Զ

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

ՄԱՐԳԱՐԻՏ

Ամուսինս...

ԱՐԿԱԴԻ, գլուխդ դրոշմ, առանցքին, դժգոհ:

Դարձեալ այն զինուորականը... (Առաջ գլուխդ) Ա, պ. Արամեան... (Արդարեւ որտե՞ն է հոգեւոր:) Ջատ ուրախ եմ... (Մի՞տեանց չեմք են պաշտոն:) Նստեցէք, խնդրեմ: (Նշանակում է:) Ինչպէս էք, ինչպէս է ձեր առողջութիւնը:

ԱՐՏԱՂԻՍ, առաջ չաղաքաւորութեամբ:

Ջատ շնորհակալ եմ, պարոն, դժբախտ ինչպէս էք:

ԱՐԿԱԴԻ

Ես միշտ լաւ եմ, փառք Աստուծոյ: Եթէ բժիշկներն իմ յոյսով մնային, քաղցած կը մեռնէին... Ջատ ուրախ եմ, շատ, ձեզ իմ տանը տեսներով... Ձեր

հայրենասիրութեան և քաջութեան մասին շատ գովասանքներ եմ լսում:

ԱՐՏԱՂԻՍ

Թողնենք այդ, պարոն:

ԱՐԿԱԴԻ

Օ, ես շատ եմ սիրում քաջ և մանաւանդ հայրենասէր երիտասարդներին: Արդարեւ ես ինքս ձեզ պէս քաջագործութիւններ արած չեմ, բայց իմ հայրենասիրական... զգացմունքներս ուրիշներից պակաս չեն, հաւատացէք... Ձեռքիցս եկածը ես չեմ խնայիլ իմ պաշտելի հայրենիքիս համար...

ԱՐՏԱՂԻՍ

Օ, պարոն, ես այդ մասին չեմ կասկածում:

ԱՐԿԱԴԻ

Եւ ատելով ատում եմ այն մարդկանց, որոնք միայն իրանց համար են ապրում... Ուտում են, խրմում, գուարճանում, իսկ Ժողովրդի բարօրութեան մասին բնաւ չեն էլ մտածում: Այդպիսիների համար երկրորդական բաներ են՝ ազգ, հայրենիք, մարդկութիւն... Կան նաեւ այնպիսիները, պարոն, որ ձեր առաջ ձեռնում են ամենաջերմ ազգասէր, ընտիր հայրենասէր, մարդասէր և էլ չգիտեմ թէ ինչասէր, միով բանիւ իբրեւ շատ և շատ բարձր գաղափարների տէր մարդիկ. բայց լաւ իմացած եղէք, պարոն, որ այդ բոլոր գեղեցիկ բառերը նրանք գործ են ածում որպէս գէշք՝ միայն միամիտներին շլացնելու համար: Մէկ կոպէկ շահի համար նրանք պատրաստ են տասն անգամ ծախել իրանց ազգն էլ, հայրենիքն էլ...

ԱՐՏԱՂԻՍ

Ջատ ճշմարիտ էք ասում, պարոն. բայց ինչպէս զանազանենք արդարը խաբեբայից, քանի որ խաբեբաների յատուկ սովորութիւնն է միշտ արդարի դիմակով երևալ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Եւ ամենավտանգաւոր մարդիկը հէնց զրանք են, որ իրանց արատները վարպետութեամբ ծածկում են առաքինութեան քողի տակ:

ԱՐԿԱԴԻ

Ախ, ազնիւ բնկերս, դու տկար էիր, մոռացայ հարցնել առողջութեանդ մասին... Ներիր, խնդրում եմ. ինչպէս ես այժմ, լաւ ես:

ՄԱՐԳԱՐԻՏ, հեղձորէն:

Իմ մասին մի նեղանար, խնդրեմ, ես շատ լաւ եմ:

ԱՐԿԱԴԻ

Ջատ ուրախ եմ. ես շարունակ քեզ վրայ էի մտածում, սիրելիս: (Արդարեւ...) Դուք եւս շատ ուղիղ էք դատում, պարոն: Այո, մի փոքր դժուար է խաբեբաներին իսկոյն ճանաչել... (Ծոյի ծածկոյցիցն հանելով, Մարգարիտ:) Հիանալի եղանակ է, սիրելիս, կամենում ես մի փոքր մաքուր օդ ծծել. կառքը պատրաստ է:

ՄԱՐԳԱՐԻՏ, հանգիստ:

Ջնորհակալ եմ. ես այսօր դիտաւորութիւն չունիմ տանից դուրս գալու:

ԱՐԿԱԴԻ

Բայց առողջութիւնդ, սիրելիս, առողջութիւնդ... Ես շատ ցաւում եմ, որ դու բոլորովին արհամարհում

եւ քո առողջութիւնը... Այսպիսի եղանակին քեզ հարկաւոր է բացօթեայ զբօսանք:

ԱՐՏԱՂԻՍ, Վերջին:

Ես ձեզ արգելք չիմնիմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ո՛չ, պ. Արտաշէս, նստեցէք, խնդրում եմ:

ԱՐԿԱԴԻ

Այո, պարոն, նստեցէք, նստեցէք, խնդրեմ... (Ինչպէս է խնդրում:) Տիկինը կարող է գնալ էլ, գալ էլ, իսկ մենք կարող ենք խօսել, դատել, վիճել, ինչքան կամենանք:

ԱՐՏԱՂԻՍ

Ջատ շնորհակալ եմ, պարոն, յատուկ պարտաւորեցնում էք ինձ... (Հեղձորէն:) ձեր առանձին ուշադրութեամբ, բայց ներողութիւն եմ խնդրում, ժամանակ է:

ԱՐԿԱԴԻ, հեղձորէն:

Ափսոսում եմ, շատ ափսոսում եմ, հաւատացէ՛ք ինձ... Ես գիտեմ որ դուք սաստիկ զբաղուած էք և բոլորովին ժամանակ չունիք ունայն աչցելութիւններով պարապելու, այնու ամենայնիւ, խնդրում եմ, երբ ազատ լինիք ձեր ծանր գործերից, երբեմն-երբեմն մեզ ևս մտաբերէք... Իմ տան դռները միշտ բաց են, պարոն, ազնիւ մարդկանց համար, մանաւանդ... կնոջս բարեկամների համար:

Մարգարիտ՝ այս ճիծոյն սաստիկ յաղաւած, խնդրեմ, ջանք եւ խնամ:

ԱՐՏԱՂԻՍ, Արդարեւ, հեղձորէն:

Չափից դուրս բարի էք... (Գնում է դեպի Մարգարիտ և հեղձորէն:) Մնա՛ք բարեաւ, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ, Արդարեւ չեմքը բռնած:

Յոյս ունիմ, պ. Արտաշէս, որ դուք դարձեալ կ'այցեիլէք մեզ...

Թողնում է չեմքը և ուղեցնում է:

ԱՐԿԱՂԻ, նոյնպէս ուղեցնելով:

Այո, այո, ես ևս խնդրում եմ:

ԱՐՏԱՂԻՍ, հեղձօքէն:

Օ, ձեր սիրալիր ընդունելութիւնը, պարոն, ես երբէք չեմ մոռանալ... (Մարգարիտ): Մ'նաք բարեաւ...

Դուք է գնում:

ՏԵՍԻՆԱ ՓԻ:

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐԿԱՂԻ

ԱՐԿԱՂԻ, երբոր լսում եմ յետոյ, ճիշդէն Մարգարիտը գլխով հարկաւորում էր նրան:

Ասա, խնդրեմ. ինչ է նշանակում այս բոլոր կատակերդ թիւնը:

ՄԱՐԳԱՐԻՏ, առաջ գալով:

Այդ հարցն ինձ է վերաբերում... ինձ:

ԱՐԿԱՂԻ

Այո, քեզ, քեզ. միթէ պարզել է հարկաւոր... Յանկարծ հիւանդանում ես, ամբողջ տունը տակնուվրայ է լինում, գործերս համարեա անկատար եմ թողնում. քեզ համար, վազում եմ տուն և ինչ եմ տեսնում. հիւանդս հանգիստ նստած՝ ամենասիրալիր ընդունելութիւն է ցոյց տալիս մի բազմախնդիր զինուորականի, որ ով իմանալ թէ ինչ է և ինչ մարդ է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա իմ մանկութեան բարեկամն է, ես արդէն ասել եմ քեզ:

ԱՐԿԱՂԻ

Բարեկամ, բարեկամ... Երևի բարեկամից էլ մէկ բան աւելի է, որ հիւանդութիւնդ անգամ մոռացել ես նրա համար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դուք ինձ վիրաւորում էք, պարոն, բայց ի դուր. ես արդէն այստեղ էի հեղինակէի հետ, երբ նա եկաւ:

ԱՐԿԱՂԻ

Եւ դու, տիկին, հարկաւոր համարեցիր ընդունել նրան, լաւ իմանալով, որ այդ ինձ դուր չի գալ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչ էք կամենում ասել:

ԱՐԿԱՂԻ

Նոր ոչինչ. այսօր բարեկամ, վաղը երկրպագու և վերջիվերջոյ խաչատուակութիւն... Միշտ այդպէս է լինում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Երկնքից չէք վախենում այդպիսի մեղադրանք բարձելով ինձ վրայ... Դուք անպատկում էք ինձ, պարոն:

ԱՐԿԱՂԻ

Օհ, առանց մեծ-մեծ խօսքերի, խնդրեմ... Ինձ խաբելը հեշտ չէ, ես շատ բան եմ տեսել իմ կեանքումը:

ՄԱՐԳԱՐԻՏ, դուք հեղձօքէն:

Եւ շատ բան էլ փորձել էք ի հարկէ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Սպանեցէք ու վերջացրէք, գոնէ մէկ անգամից կ'ազատուեն ես այս տանջանքներէից:

ԱՐԿԱՂԻ

Յո՛, այդ արդէն չափից դուրս է, տիկին... (Զայրացած ճան է գալիս:) Այս ամենը ես պարտական եմ այն անիծեալ զինուորականին... (Յանկարծ յարշուժուելով սեղանի զանգուղին, բոլոր ուժով զանգահարում է: Զանազան դռներից շարողով ներս են մտնում Սէսիլն ու սպասուորը:) Ես ձեզ խստիւ հրամայում եմ, որ այսուհետեւ չհամարձակուէք ընդունել այն բաղդախնդիր զինուորականին... միւսնոյն է՝ նա ինձ հարցնի, թէ տիկնոջը:

Սէսիլն ու սպասուորը շարունակում են:

ՄԱՐԳԱՐԻՏ, ըստելով իրան և բոլորովին գոռալաւ:

Այո, պարոնի հրամանը կատարեցէք իսկութեամբ, ես ևս հրամայում եմ... (Մէլ նշելով շեռքը դեպի դռները:) Հեռացէք... (Սէսիլն ու սպասուորը դուրս են գնում: Լուսնիկն: Սասիլն ընդունում և շարունակում է խոսելով:) Չատ շնորհակալ եմ, պարոն... Այս էր իմ այսքան տարուայ տանջանաց վարձատրութիւնը... Այսուհետեւ ես մի անարժան կին եմ ձեզ համար... Այս օրուանից ամենայն ինչ վերջացաւ մեր մէջ... Ահա... (Պարտադրից իջնում է մանեակը:) Առէք այն շղթան, որով ինձ կապել կաշկանդել էիք այսքան տարիներ... (Մանեակն շարունակում է:) Ո՛հ, Աստուած ամենակարող...

Պարսն է գնում իր սենեակը: Արշալույսն մտնում է սպանալով:

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ԵՐԱՐՈՒՄԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Միւսնոյն տեսարանը. պակասում է միայն պատկերակալն իր նկարով:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԱՐԿԱՂԻ, ԱՖԷԼ

ԱՐԿԱՂԻ, ճան գալով:

Ո՛հ, ո՛հ, պ. Աբել, խօսքս խօսք է, ես նրան գրել խաղիւր չեմ տալ, մինչև որ այդ թուղթը չստորագրի:

ԱՖԷԼ, մի ծալած լուռը չեմ տես:

Ձեր կամքն է, տէր, միայն թէ...

ԱՐԿԱՂԻ

Այո, այո, այդպէս... Տարէք այդ թուղթը և մի կերպ աշխատեցէք որ ստորագրէ:

ԱՖԷԼ, փոքր լուսնիկի շեղում:

Մինչև օրս, ձերդ վսեմութիւն, բոլոր ձեր հրամանները ես միշտ կատարել եմ սրբութեամբ, այժմս էլ պատրաստ եմ նոյն սրբութեամբ կատարել և ներելայ յանձնարարութիւնը. սակայն ես թույլ եմ տալիս ինձ նկատել, որ եթէ կարողանայիք մի կերպ հաշտուել տիկնոջ հետ, աւելի լաւ կը լինէր, ճշմարիտ:

ԱՐԿԱԴԻ

Անհնարին է, պ. Աբել, մեր մէջ հաշտութիւն չի կարող կայանալ. անունս ու պատիւս խաչատուակեց նա... չէ, թշուառական...

ԱՅԻԼ

Ի՞նչ արած, ձերդ վսեմութիւն, էլի դուք պէտք է ներողամիտ լինիք... Ձե՞ որ նա ձեր կինն է... Միթէ այս լաւ է, որ ահա երեք ամիս է ամբողջ քաղաքը ձեզ վրայ է խօսում:

Թուղիլը դուռն է հեղանի վրայ:

ԱՐԿԱԴԻ

Թող խօսեն, որքան կամենան:

ԱՅԻԼ

Դարձեալ ձեզ է վնաս, ձեր անուանն է վնաս, ձերդ վսեմութիւն... (Արշալույսի հոգի է նա գլուխը չէ՞ր հանում:) Ինձանից ձեզ խրատ չի հասնիլ ի հարկէ, բայց ձեր բարին ցանկանալով, ինչպէս և միշտ, ես համարձակվում եմ յայտնել իմ կարծիքը... Միայն չբարկանաք, ի սէր Աստուծոյ:

ԱՐԿԱԴԻ

Չարունակեցէք, շարունակեցէք, խնդրեմ:

Ձեռքի շշուուռ հրաւիրում է հոգի:

ԱՅԻԼ, հոգեւոր:

Այո, վսեմափառ տէր... Ի՞նչքան էլ կինը պակասութիւն ունենայ, ինչքան էլ մեղաւոր լինի նա, դարձեալ ամուսնու ոչ թէ սուրբ պարտաւորութիւնն է միայն, այլև նրա ամենամեծ արժանաւորութիւնը... լուել և միշտ լուել այդ մասին: Հակառակ դէպքում, նա իր սեպհական պակասութիւնը կը խոստո-

վանի իր մեղապարտութիւնը, իր թուլութիւնը... (Արշալույսի գլուխը համայն - համայն շարժելով, ճէշտի ծոցում է: Լուսինն:) Համարձակութեանս համար ներողութիւն եմ խնդրում ձեր վսեմութիւնից. միայն ես աններելի յանցանք կը համարէի, եթէ իմ սրտիս խորհուրդը ճաճկէի ձեզանից... (Արշալույսի, գլուխը չէ՞ր հանում, արձնով չէ՞ր հանում է հեղանի: Երբ որ լուսինն:) Ձեր մեծահոգութեանն եմ դիմում, ձերդ վսեմութիւն... Եթէ թույլ կը տաք, տիկնոջը ես շուտ կը համոզեմ, միայն թէ դուք համաձայնեիք հաշտուել հետը:

ԱՐԿԱԴԻ

Ի դուր կը լինի ձեր աշխատանքը, սիրելիս... (Ուրիշ է հանգիստ, Աբելը համայն է:) Եթէ ես ուզեմ էլ հետը հաշտուել, նա ինքը չի կամենալ. ես նրան լաւ եմ ճանաչում... Այն կապը, որ մեզ կապում էր, խորտակուած է չաւիտեան. այժմ մնում է մեզ ձեռքերակա մեր իրաւունքները և օրինական ընթացք տալ մեր ներկայ կացութեանը: (Աբելը վերցնելով լուսինը, համայն է: Խորհուրդ:) Տարէք, տարէք այդ թուղթը... այնտեղ կը կարդաք, տարէք:

ԱՅԻԼ

Ես իմ պարտքս կատարեցի, ձերդ վսեմութիւն. այժմ կ'անեմ, ինչ որ հրամայում էք:

Թուղիլը դուռն է լեզբապահի ճէջ:

ԱՐԿԱԴԻ

Աշխատեցէք շուտով վերադառնալ:

ԱՅԻԼ

Անպատճառ, ձերդ վսեմութիւն:

Մի քանի քայլ փնտրում է:

ԱՐԿԱԴԻ

Փառք Աստուծոյ: Հրամանքդ ինչպէս էք, տիկին:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ինչպէս տեսնում էք, լաւ եմ: (Յոյս արտաբերելով):
Ինչի էք կանգնած մնացել:

ԱՐԿԱԴԻ, հարեւոյ:

Այս ինչ բարեցաճող դէպք է, տիկին, որ շնորհ
էք արել ինձ մօտ գալ:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ինչի էք զարմանում, վսեմափառ պարոն, միթէ
ես գործ չեմ կարող ունենալ:

ԱՐԿԱԴԻ

Ի հարկէ կարող էք, հրաշալի իմ տիկին, բայց այդ-
ինչ տեսակ գործ է, որ դուք էք նեղութիւն կը-
րել. միթէ չէիք կարող հրամայել, որպէսզի ես ինքս
ձեզ մօտ գալի:

ՎԱՐԴՈՒՅԻ

Հաւատացած եմ, որ ձեր վսեմութիւնն ինձ շատ
է յարգում, բայց գործը խիստ կարեւոր է և շտա-
պողական, դրա համար էլ ինքս եկալ:

ԱՐԿԱԴԻ

Հրամայեցէք, տիկին. ինչ որ ձեռքիցս գալ, չեմ
խնայիլ ձեզ համար:

ՎԱՐԴՈՒՅԻ

Օ, այդ ես լաւ գիտեմ: Մէկ օր ինձ հաւատա-
ցնում էիք, որ ձեր կեանքն էլ չէք խնայիլ ինձ հա-
մար. բայց լեզուն շատ բան կ'ասի ի հարկէ:

ԱՐԿԱԴԻ

Սրտանց, սրտանց, տիկին, հաւատացնում եմ, սըր-

տանց... Եթէ ինձ հրամայէք գնալ ջուրն ընկնել,
իսկոյն կ'երթամ ջուրը կ'ընկնեմ:

ՎԱՐԴՈՒՅԻ, ծիծաղում է:

Ուրեմն հրամայում եմ. իսկոյն գնացէք, ջուրն ըն-
կէք:

ԱՐԿԱԴԻ, արդի խնդրելով:

Գնամ:

ՎԱՐԴՈՒՅԻ, ծիծաղում է:

Գնացէք, այո, գնացէք:

ԱՐԿԱԴԻ

Տեսէք, տիկին, կ'երթամ. հաւատացնում եմ ձեզ,
կ'երթամ:

ՎԱՐԴՈՒՅԻ

Հրամայում եմ:

ԱՐԿԱԴԻ

Ո՛հ, քարասիրտ... Ահա, մնաք բարեաւ յաւիտեան:
(Գնում է ծիծաղելով և արտաբերելով: յետոյ վերադառնալով): Բայց
ոչ, ես չեմ կարող ձեզ մենակ թողնել:

ՎԱՐԴՈՒՅԻ, արդի է բարեցաճում:

Նստեցէք, պարոն, նստեցէք... Ես ձեզ քանի-քա-
նի անգամ ասել եմ՝ մի արտասանէք այնպիսի խօսք,
որ կատարել չէք կարող:

ԱՐԿԱԴԻ

Ահա, դարձեալ չէք հաւատում ինձ, տիկին:

ՎԱՐԴՈՒՅԻ

Հաւատում եմ, հաւատում, պարոն, դիցուք թէ
շատ էլ հաւատում եմ. բայց ջուրն ընկնելու պէտք
չկայ... Իմ խնդիրքը ոչինչ զոհաբերութիւն չէ պա-
հանջում ձեզանից և նրա կատարելն էլ շատ հեշտ

է... Միայն մի խօսք է հարկաւոր ձեր կողմից... (Ձեռնի պայտաւոր բառերով) Բայց դուք ինչի էք այդքան հեռու նստել... Նստեցէք այստեղ... (Կարգաւորելով) Մօտիկ, մօտիկ... Մի վախենաք, ես ձեզ կուլ չեմ տալ:

ԱՐԿԱՂԻ, հարմարելով:

Ա՛խ, տիկին, խելքից հանում էք ինձ:

ՎԱՐԴՈՒՅԻ, հեռանալով:

Օհ, ոհ, ձերդ վսեմութիւն, մի փոքր հեռու, խընդրում եմ:

ԱՐԿԱՂԻ, օրհնաւոր նստելով:

Ահա, տիկին... հրամայեցէք, ինչ էք կամենում:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ձատ չնչին բան, ճշմարիտ, գոնէ ձեզ համար չընչին է... Ձեր խօսքն ամեն տեղ անցնում է, այնքան ծանօթ ու բարեկամ ունիք դուք... (Պայտաւորելով հանդիմանալով) Արտասահմանից մի քանի կտոր թաւիչ են ուղարկել ինձ և ահա, ինչպէս հեռագրում են թափումից, իմ արկղիկը պէտք է որ այս գիշեր այստեղ լինի... (Տալով հեռագիրը) Ինչպէս էլ լինի, պէտք է վաղը իմ ձեռքը հասնի այդ, էլ մաքսատանը երկար չպահեն:

ԱՐԿԱՂԻ, աչքի անցնելով հեռագիրը:

Իրաւ որ շատ չնչին բան է եղել... Ես էլ մտածում էի թէ ինչ կարող է լինել:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ներեցէք, անհանգիստ եմ անում ձեզ:

ԱՐԿԱՂԻ

Ա՛խ, ինչ էք ասում, տիկին, իմ բոլոր հանգստութիւնս ձեր չարը տանի, այդ ինչ բան է:

ՎԱՐԴՈՒՅԻ

Դուք մարմնացած քաղաքավարութիւն էք, պարոն:

ԱՐԿԱՂԻ

Օ, չափից դուրս բարի էք, տիկին:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ես ճշմարիտ եմ ասում: (Վեր կենալով) Ուրեմն վաղը կըստանամ:

ԱՐԿԱՂԻ, նշնակելով:

Անպատճառ, անպատճառ, աննման իմ տիկին:

Հոգ է հալել ելեգանտիկ հնազանդութիւն:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ձատ շնորհակալ եմ, շատ, պարոն Արկաղի. յատուկ պարտաւորեցնում էք ինձ: Ուղիղն ասեմ, ես ձեզ նեղութիւն չէի տալ այսպիսի մի չնչին բանի համար, բայց քոյրս էգուց անպատճառ զնալու է ճագու. ես շատ գոհ կըլինեի, եթէ կարողանայի անձամբ իրան յանձնել իր մասը:

ԱՐԿԱՂԻ

Հանգիստ եղէք, տիկին, ես ինքս կը բերեմ ձեր արկղիկը:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ինչի էք այդքան նեղանում, պարոն, կարող էք ուղարկել... Թէեւ ես շատ ուրախ կը լինեի ձեզ իմ տանը տեսնել:

ԱՐԿԱՂԻ

Ի՛նչ նեղութիւն... Այս րոպէիս ինձ պէս երջանիկ մարդ չկայ աշխարհումս:

Կրկին հոգ է հալել հնազանդութիւն:

ՎԱՐԴՈՒՆԻ

[illegible]

ԱՐԿԱՌԻ

Հաւատացէք, տիկին: (Աղաւթներն, որ ործաւելեայ Տէճ
նշահելով բերում է պարսկաբաժնի սահմանը և պահանջարկ, ցածր:) Ին-
չի՞ ուշացիր: (Վարդապետն, Տիկինն ու պարսկաբաժնի նշահողը
հետո՛ւ է հեղանի վրայ և բաժանելը նստիլ բերում:) Թող կը
տա՛նք ինձ, տիկին, մի բաժակ սուրճ առաջարկեյ ձեզ:

ՎԱՐԴՈՒՀԻ, հրահրուելով:

Զգիտեմ, ճշմարիտ, ինչ պատասխանեմ... Դուք աչնաբան բարի էք զէպի ինձ, որ մերժել չեմ վստահանում:

ԱՐԿԱՊԻ

Յատուկ երջանկացնում էք ինձ, տիկին: (Սպասու-
հարին): Լաւ, գնա, ես ինքս կը պատրաստեմ: (Սպասու-
հարս դուրս է գնում: Վարդապետն ուղի-
սաւորութիւնով հարձի-
հեղանի ծոխ): Համեղէք, խնդրում եմ:

ՎԱՐԴՈՒՀԻ, հասկենալով:

Ջնորհակալ եմ... Այս մի բաժակն ինչ գեղեցիկ է...
Երևի ձեր սովորական բաժակն է:

ԱՐԿԱԴԻ, ԿԱԿԵՐԱՍԿԵՆԼԵԼ ԽԱՐՃԸ:

Ո՛չ, տիկիհն, ես դրանով երբէք չեմ խմում:

ՎԱՐԴԱՆԶԻ

Երևելի բաժակ է... (Յանիբոլ): Այդպես չէ, պարոն,
այդպես չէ. թողէք ես պատրաստեմ: (Ուշի նահանգը):
Դուք նստեցէք, խնդրեմ:

ԱՐԿԱՌԻ

Ի՛նչքան բարի էք, տիկի՛ն:

Умнож. 4:

ՎԱՐԴՈՒՀԻ, ԿԵԺԵՐԷՆ:

Եւ միշտ աջդպլէս էք պատրաստում ձեր սուրճը:
ԱՐԿԱՆԻ

Ո՛չ, տիկին, սպասաւորն է հոգում:

ՎԱՐԴՈՒՆՆԻ, թագավորական արքայազն:

Սպասաւորը... Խէղճ մարդ, մեղքս գալիս էք, ճշմարիտ... Ահա, այդպէս իմացէք տանտիկնոջ արժէքը... (Տալով նրան իւր իրիկի խաչիկը) Համեցէք:

ԱՐԿԱՌԻ, աստուծոյ Բաժանիւն:

Օ, տիկին... (Հաճախում է Վարդանին չեղել և բռնել նրան առջուցով) Յատուկ խնդրում եմ:

ՎԱՐԴՈՒՆՅԻ, հասկենալով:

Ձնորհակալ եմ... (Արեւիկին իր համար վերցնում է Տեա-
հաճութիւնը) Այո, ես ձեզ խորհուրդ եմ տալիս, զնայէ՛ք,
ձեր կնոջ ձեռքը համբուրեցէ՛ք... Բաւական է ինչ-
քան խռով մնացի՛ք, խնդրեցէ՛ք, որ զաչ ձեզ տիրու-
թիւնն անէ։

ԱՐԿԱԴԻ

Ո՛հ, ո՛հ, տիկին, մեր մէջ ամեն բան վերջացած է:

ԿԱՐԴՈՒՆԻ

Ի՜հ, բարեկամ, այդ տեսակ թիւրխմացութիւններ շատ է պատահում մարդ ու կնոջ մէջ... Մի քանի ժամանակից յետոյ դարձեալ այնպէս կ'ապրէք միասին, ինչպէս ապրել էք... Հետևապէս՝ քանի վաղ, այնքան լաւ երկուսիդ համար էլ... Գնացէ՛ք, գնացէ՛ք, սիրտն առէ՛ք... Գուք լինձ լսեցէ՛ք, ես ձեզ վատ խորհուրդ չեմ տալիս:

ԱՐԿԱԴԻ

Ա՛խ, տիկին, ինչ է.ք հրամայում, ես հէնց այս
րոպէիս սպասում եմ նրա խոստովանութեանը:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ի՞նչ խոստովանութիւն:

ԱՐԿԱԴԻ

Որ նա է պատճառը մեր բաժանման և որ բոլոր
յանցանքը նա իր վրայ է առնում:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ի՞նչպէս... Չէ որ օրէնքով այդ գործում սեպհական
խոստովանութիւնը ոչինչ նշանակութիւն չունի:

ԱՐԿԱԴԻ

Այո, բայց երբ վկաները հաստատում են, հարցը
փոխվում է:

ՎԱՐԴՈՒՅԻ

Այդ ես բոլորովին չեմ հասկանում... Եթէ վկաներ
ևս կան, էլ ինչ հարկաւոր է մեղապարտի ջանձնա-
ւութիւնը:

ԱՐԿԱԴԻ

Քանն էլ այն է, տիկին, որ այս գործում վկայ
գտնելն անհնարին է, եթէ ինքը՝ յանցանք ընդու-
նողը, յօժար չէ... Յ, ես այս խնդիրը լիովին ու-
սումնասիրել եմ... Այս միշտ այսպէս էլ կատարվում
է ամենուրեք:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ուրեմն կատակ չէ այդ ամենը, ինչպէս երևում է:

ԱՐԿԱԴԻ

Ամուսինները մէկ որ բաժանուեն, էլ կատակը ո՞րն է:

ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ՍՊԱՍԱՆՈՐ

ԱՐԿԱԴԻ, ԳԵՆԵՐԱԼ ՍԿՈՒՄԻՆԻՆ, որ ճիւղային շէնքին, Վար-
դուհայ ծածուկ, նշան է տեսնում:

Ի՞նչ կայ: (Ի՛նչ է վարդուհայ) Ես քեզ ասացի, որ ոչ
ոքի չընդունես... (Վերջինիս շէնքին, ճիւղային) Ելի՛ր...
Մահ է շատուած:

ՍՊԱՍԱՆՈՐ

Չտապեցէք, ձերդ վսեմութիւն, մեծ աստիճանաւոր
է, սպասում է ձեզ ներքև նախասենեակում:

ԱՐԿԱԴԻ, ՍԿՈՒՄԻՆԻՆ, ցածր:

Անիծեալ: (Վերադառնալով է ԳԵՆԵՐԱԼ Վարդուհային) Ա՛խ, տի-
կին, չատուկ ներողութիւն եմ խնդրում, մի րոպէ
թող տուէք ինձ... Պաշտօնական ամենահարկաւոր
գործի են եկել:

ՎԱՐԴՈՒՅԻ

Խնդրեմ, ձերդ վսեմութիւն, ինձ համար մի նե-
ղանաք:

ԱՐԿԱԴԻ

Ա՛նչափ բարի էք, տիկին:

ԳԵՆԵՐԱԼ Վարդուհայ, ՍԿՈՒՄԻՆԻՆ, ԳԵՆԵՐԱԼ Վարդուհայ:

ՏԵՍԻԼ Գ

ՎԱՐԴՈՒՀԻ, Բենի. Կար շատ-լինելի յեղի, աջ յո-
ղաժար ճակատին արանելով:

Վարդուհի, զգո՛ւշ... (Յանձարժ սրտի է հանգնում, առանց
որեղի շարժումներ նայում հայելու ճեղ, գլխորդ ծառն է իջնի
նստում: Յեղի լույսի տեսիլ արան շայնը, որեղի վեր է լույսում,
վաղում է որեղի լուսամուտից և չէ՛ղի լույսի տեսիլ: Ո՛վ
էր... Ափսոս, չտեսայ:

Դրանով վերադառնում է իր որդի և առաջնայ արանի ըն-
դունում:

ՏԵՍԻԼ Ե

ՎԱՐԴՈՒՀԻ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, վերադառնալով, ճեղից:

Ո՛ւֆ, ազատուեցայ... (Վարդուհուն) Յատուկ ներո-
ղութիւն եմ խնդրում, տիկին... Հազիւ ազատուեցայ,
պաշտօնատէր մարդը ինքն իրան չէ պատկանում,
ինչ արած:

ՎԱՐԴՈՒՀԻ

Հասկանալի է... Միայն շատ եմ ցաւում, որ ձեր
թանկագին ժամանակը խլեցի և արգելք եղաջ ձեր
գործերին... (Վեր Բենի) Մնաք բարեալ:

ԱՐԿԱԴԻ

Ես այժմ բոլորովին ազատ եմ, հաւատացէք... Մնա-

ցէք մի փոքր ևս, խնդրում եմ... Մի խլէք ինձա-
նից այգիէս շուտ այս երջանկութիւնը... Աղաչում
եմ ձեզ, տիկին:

ՎԱՐԴՈՒՀԻ

Բաց ժամանակ է, պարոն:

ԱՐԿԱԴԻ

Գուցէ կը բարեհաճէք, տիկին, պարտեղը տեսնել...
Հազուադիւր ճաղիկներ կան:

ՎԱՐԴՈՒՀԻ

Ձատ շնորհակալ եմ, պարոն, մի ուրիշ անգամ:
(Հայելում հայելով) Ա՛խ, այս ինչպէս է ծոռել զլիարկս:
(Վերցնելով գլխորդ) Կը ներէք ինձ՝ մի փոքր ուղղեմ:

ԱՐԿԱԴԻ

Խնդրեմ, տիկին, համարեցէք թէ ձեր տանն էք:

ՎԱՐԴՈՒՀԻ

Բաց դուք այս կողմը չնայէք, խնդրեմ: (Ի՞նչ Բէ
վերադառնալով մտաւորում է: Յանձարժ երջար ու հանաւի ճա-
ղից լուսնում էն ուտելի վրայ:) Ա՛խ, ներողութիւն եմ
խնդրում, այս ինչ անբաղաբարութիւն է իմ
կողմից:

ԱՐԿԱԴԻ

Մարդասպանութիւն ասացէք, տիկին: (Վարդուհին
յեղ է նայում և հանգնում է սրտում: Եւ ճաղից) Ինչ կա-
մենաք, արէք. այլևս չեմ կարող դիմանալ...

Վրայ է ընկնում և որեղի-որեղ համբարում է հաշիւը:

ՎԱՐԴՈՒՀԻ

Պարոն, պարոն, ինչ էք անում, ինչ էք անում...
(Մտնելը Բենի յեղ է հանում:) Դուք ձեզ մոռանում
էք...

ԱՐԿԱԴԻ, շարունակելով համբարել մողերը և ուները:
Օ՛հ, իմ թագուհի, իմ սրտիս աստուածուհի...

ՎԱՐԴՈՒՅԻ

Ա՛խ, բաւական է, խնդրեմ...

ԱՐԿԱԴԻ

Ո՛հ, ո՛չ, էլ ձեռք չեմ վերցնիլ ես ձեզանից... Բաւական է ինչքան տանջեցիք ինձ... Այսուհետեւ դուք իմն էք, ես ձերը...

Գրեմ ձեռքերս եւ:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ա՛խ... (Իբր լէ աշխարհ եւ աղաքները) Թողէք, թողէք... Օգնութիւն կը կանչեմ... Ա՛... ան... ան...

Սոսք ուշախառնելով յէր եւ ընդունաւ Արեւոյի լեւի վրայ:

ԱՐԿԱԴԻ

Իմ հրեշտակ, իմ հոգի... (Համբարում է:) Այսուհետեւ պէտք է միասին ապրենք, միասին մեռնենք:

ՎԱՐԴՈՒՅԻ, իբր նոր ուշի գալով:

Ա՛խ, թողէք, թողէք... (Աղաքում է Արեւոյի գրեմը): Չանտ շնորհակալ եմ, պարոն... Այս անպատուութիւնը ես երբէք չեի սպասիլ ձեզանից... (Մողերը հաւաստելով): Լաւ դաս տուիք դուք ինձ... Այդպէս է ուրեմն... (Սոսք լաց լինելով): Մի օրինաւոր կին իրաւունք չունի ճանօթ մարդու մօտ գործի գնալ... (Գլխաւոր ծածկում է և իջն լացով): Օ՛հ, ես չիմարս...

Ընդունաւ եւ աշխարհ վրայ և հեղեղելով սոսք լաց եւ լինում:

ԱՐԿԱԴԻ, նստելով մօտը:

Հանգստացէք, տիկին, աղաչում եմ, հանգստացէք... Իմ գիտաւորութիւններս մաքուր են... Ես կամենում եմ կեանքս յաւիտեան կապել ձեզ հետ...

Ես կ'ամուսնանամ ձեզ հետ, վկայ է Երկինք... Միայն խոստացէք իմս լինել:

ՎԱՐԴՈՒՅԻ, աչքերը սրբում է և ընդունաւ հայացում նայում:

Արեւոյի: Երբեք չուշի:

Ամուսնանալ...

ԱՐԿԱԴԻ

Այո, օրինաւոր կերպով ամուսնանալ:

ՎԱՐԴՈՒՅԻ, սրբել բարձրացնելով:

Երեխայ եմ, ինչ է... Դեռ մէկից չազատուած միւսի վրայ ամուսնանալ էք կամենում:

Շարունակում է սրբել:

ԱՐԿԱԴԻ

Լսեցէք, տիկին, աղաչում եմ, լսեցէք... Ես ձեզ չեմ խաբում, ի դուր էք այդպէս զարմանում... Ես իմ կեանքումս մի անպատու քայլ անգամ չեմ արած... Երգվում եմ, որ պարզ սրտով եմ խօսում... Իմ ապահարգանի գործը առաջ է գնում իր կարգով, չուտով կը վերջանայ... Այսօր է թէ վաղը ես կըստանամ իմ ազատութեան վկայագիրը...

Ձախ հոգի երկրորդ խորքի գրեմը մօտ է Երկն, սրբել ծածկում, և լաւանում ծածկերն ու ծաղիկներն յէրեւել:

ՏԵՍԻԼ 2

ՆՐԱՆՔ, ԷԼԻԶ, ԼԱՐՆԱՄԱԾ:

ԱՐԿԱԴԻ, շարունակելով:

Մտադիր էի թուղթը ձեռքիս գալ ձեր ոտքերն ընկնել... Ես ազատ, դուք ազատ, մի երկու շաբաթ

չի տևիլ, ես կը տանեմ ձեզ եկեղեցի և աչնտեղ, Աստուծոյ տաճարում, սուրբ սեղանի առաջ, ես կը խոստանամ ձեզ իմ սիրտն էլ, իմ կեանքն էլ:

Հաճեալ է նրա շնորհ: Եւ եւր սարսափելի դրոշման ճշգրտ է:

ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՎԵՐ ԲԵՆԱՆՈՒՄ:

Այդ մասին մենք կը խօսենք, երբ ձեր ազատութիւնը ձեռք կը բերէք:

ԱՐԿԱՊԻ, ԿԱՆԱԿԱՆ:

Մի համբոյր, միայն մի համբոյր, տիկին, որպէս գրաւական մեր ամուսնութեան...

ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ո՛հ, ո՛հ, պարոն, ես իմ պատիւս ոտնակոխ չեմ անիլ... (Տալով շնորհ:) Մնա՛ք բարեալ... Մոռացէ՛ք բոլորը և խելօք կացէ՛ք:

ԱՐԿԱՊԻ, ՎԱՐԴԱՊԵՏԻ շնորհ ԲՆԱՆՈՒՄ:

Խղճացէ՛ք ինձ, տիկին... Այրվում եմ...

ՎԱՐԴԱՊԵՏԻ, ԺԱՊԱՆԱՆ:

Միթէ... (Բաժանում ջուր է ածում և հաղիւն խորանայում շնորհ էր ծննդաւ:) Համեցէ՛ք, վսեմափալ տէր: (Առաջարկում է բաժանել:) Ա՛խ, չէ՛ք կամենում... (Բաժանելով զնախնի վրայ:) Ուրեմն աչալէս... (Հովհարում է Արքային, որ լուս և աշխարհ հայում է նրան. յետոյ չքնիլ Բարձրացնելով:) Ի՛նչ զուարճալի էք աչալէս: (Հովհարելով զնախնի Արքային շնորհ:) Ահա, թողնում եմ չիշատակ ձեր բորբոքուած սիրտը հովացնելու... Յոյս ունիմ, որ արկղիկս վաղը կըստանամ...

Խորը ողջոյն [Révérence] է պալիւ և չքնիլով դուրս գնում:

ՏԵՍԻՆ Է:

ԱՐԿԱՊԻ, ԷԼԻԶ, ԿԵՆԵՐԱՆ ԼԱՎՈՐԱՆ:

ԱՐԿԱՊԻ, Տի հանի վայրկեան լուս և աշխարհ հայում յետոյ:

Մ, կանաչ... (Բարկայում ճան է գալիս:) Ուրեմն ես մարդ չեմ լինիլ, եթէ քեզ չաղթեմ: (Հովհարելով շնորհ է աշխարհ վրայ: Եւ եւր, որ զնախ ինչ առաջ էր եկել, հեգնորէն ծննդում է:) Ա՛խ...

Ձեռքը ծակարկն՝ հաճ է հարկայում:

ԷԼԻԶ, Բարկայում:

Ահա... չէիր սպասում... Ասա, ասա, որ ոչ ոք չկար աչտեղ, ասա... Քեզ համար սուտն ի՛նչ նշանակութիւն ունի... (Վերցնելով Վարդապետ հովհարելով:) Այս ի՛նչ է, այս. այս էլ նրանը չէ... (Վարդապետ է հովհարել և զնախ ածում. յետոյ յարձակուելով զնախ սուրճի շնորհ վերցնում է Վարդապետ բաժանելով:) Այս բաժակն էլ նրա ձեռքին չէր... (Շարժելով:) Ահա քեզ...

ԱՐԿԱՊԻ

Ելի՛ր, ելի՛ր, ուշքի արի, աղաչում եմ, ամօթ է, ծառաները կարող են տեսնել:

Փակում է նախասենեակի դուռը:

ԷԼԻԶ, Կոնկետիլ էր գլխի չող:

Ահա ամօթը... Ես իմ ամօթը վաղ թաղեցի:

Դէն է չգնում:

ԱՐԿԱՊԻ

Ի սէր Աստուծոյ, դադարիր... Ամուսինդ գալու է... Նա այս րոպէիս կը գայ:

ԷԼԻԶ

Թող դառ... Ես էլ ոչ ոքից չեմ վախենում... Թող
դառ տեսնե՛, որպիսի կին եմ եղել ես նրա համար...
Թող մաս-մաս անէ ինձ... Թող երեսիս մուր քսէ և
մազերիցն բռնած՝ փողոցէ փողոց ման անէ ինձ. ես
արժանի եմ...

ԱՐԿԱԴԻ

Ա՛խ, Աստուած...

ԷԼԻԶ

Ա՛յդ էր, ա՛յդ էր քո պաշտօնական հարկաւոր գործը.
աչդպէս էիր միշտ խաբում ինձ: Հէնց այս ըրպէիս
նախասենեակում... (Ներշնչանալով ինչպէս Լէրկաբլին խոսում
էր նրան նախասենեակում:) «Ա՛խ, Էլիզ, հոգիս, ներքի,
տունս պաշտօնեաներով լիքն է, սպասում եմ
նոյն իսկ նահանգապետին»... Եւ սրա հետ՝ տաք-
տաք համբույրներ... (Գլխի շարժումով ներշնչանալով
էր ինչպէս Լէրկաբլին նրան համբուրում էր նախասենեակում:) Ո՛հ,
Յուդայ... (Թաշկենալով սրբում էր երեսը:) Եւ դու կարծում
էիր, որ ես չգիտէի թէ ով էր այստեղ... (Հեգնաբեմ
ծիծաղում է:) Օ՛, վաղուց է որ ես քեզ չեմ հաւա-
տում... Ինձ փաստ էր հարկաւոր, փաստ, և ահա
այս անգամ բռնուեցար վերջապէս... Խօսիր, խօսիր,
պարոն... Ո՛ւր են քո երգումները, քո Աստուածը,
քո Երկինքը... Ո՛հ, ինչ ճաղրալի ես դու աչժմ...
Իրաւ խղճում եմ քեզ...

Ներքի ծիծաղում է:

ԱՐԿԱԴԻ, ճախնալով:

Հանգստացիր, Էլիզ, աղաչում եմ...

ԷԼԻԶ

Հեռու, հեռու... Դու ոչ Աստուած ունիս, ոչ հո-
գի... Այսուհետեւ չհամարձակուես ինձ դիպչել... մեր
մէջ ամենայն բան վերջացաւ... Գնա՛, գնա՛, աչժմ
քո գեղեցիկ Վարդուհու առաջը չօքիր, նրա ոտի հո-
ղը դարձիր... գնա՛, հարսանիքիդ պատրաստութիւն-
ները տես... (Հալիւ հաղ հարողանալով պահէլ լացը:) Կեանքս,
բարի անունս, պատիւս ես քեզ համար զոհեցի, իսկ
դու աչդպէս գնահատեցիր... (Ձեռնի պայտասիկը հանելով
մի բանալի և շարժելով:) Ահա՛, առ քո պարտիզի բանա-
լին... Մնաս բարեաւ յաւիտեան... Ես իմ պատիժը
կրեցի...

(Թաշկենալով աշէրին՝ լալով դուրս է գնում չափ իողմի երկրորդ
կարգի դռնից: Լէրկաբլին մտած է չարացած:)

ՏԵՍԻԼ Ը

ԱՐԿԱԴԻ, յեղոյ ՍՊԱՍԱՆՈՐ

ԱՐԿԱԴԻ, մենալ, երկար լուռութիւնից յեղոյ:

Ի՛նչ են կատաղել վրաս... (Բարկացած մահ է գալիս, յե-
ղոյ վերջնալով բանալին:) Դէն ձգեց... Չա՛տ հարկաւոր է.
դու չլինիս, ուրիշը կը լինի... (Հնչեցնում է պահալով: Լե-
ռութիւն: Նոյնի հնչեցնում է, յեղոյ բարկացած:) Է՛յ... (Լալով
որ նախասենեակի դուռը շարժւում է, գնում է, բայց տեսնում: Ներս
մտնող սպասաւորին:) Հաւաքիր աչդ ամենը... (Լուռ մահ
է գալիս, մինչդեռ սպասաւորը կարծում է հրամանը:) Անպի-
տան... Ես քեզ հրամայեցի ոչ ոքի չընդունել... Ի՛նչ-
պէս համարձակուեցար ասել, որ ես տանն եմ:

ՍՊԱՍԱՆՈՐ

Ես մեղաւոր չեմ, ձերդ վսեմութիւն, տիկին Վարդուհու կառապանն ասել էր արդէն:

ԱՐԿԱՂԻ, սարսափած:

Ի՜նչպէս... Ուրեմն նա էլ սրան գալը կ'իմանայ:

ՍՊԱՍԱՆՈՐ

Երևի...

ԱՐԿԱՂԻ, բարկացած:

Դժոխք... (Ման է գալիս): Զո՛ւտով, շո՛ւտով և կո՛րիւր աչքիցս:

ՍՊԱՍԱՆՈՐ

Իսկոյն, ձերդ վսեմութիւն:

Լըրիստին հասում է, բռնաբեր սեղանին խնամ է ցեղոյ, գլուխը երկու շեշի մէջ առնելով, արհեստներով յենում է սեղանին. ինչ սպասուողը հասնելով հովհարի իրարեւել, զարման է արհայայտում, յեղոյ վերցնելով էլեւել չողը, հոս է հաշում և ծոցում պահում: Լուռ-լիւռ:

ԱՐԿԱՂԻ, վեր լուռելով րեղից:

Ճաշին տուն չեմ գալ... Խոհարարին կ'ասես, որ լաւ ընթրիք պատրաստէ... Սեղանը պարտէզումը բաց կ'անես... Տես որ ամեն բան կարգին լինի:

ՍՊԱՍԱՆՈՐ

Քանի՞ հոգու համար, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱՂԻ

Քանի էլ կ'ուզես... չինգ, տասը, տասնուհինգ... Պէտք է բարեկամներիս հրաւիրեմ... մի փոքր զուարճանամ... Զամպայնը վաղօրօք սառուցի մէջ կը դնես:

ՍՊԱՍԱՆՈՐ

Կանաչք էլ կը լինին:

ԱՐԿԱՂԻ

Կանաչք, երգչուհիք, երաժշտութիւն... Ինչ կամենաս, միայն թէ այս դժոխքից ազատուեմ...

ՍՊԱՍԱՆՈՐ, սիրաբեւոյ յենին:

Այո, ձերդ վսեմութիւն, երկու կնոջ հետ միաժամանակ գործ բռնելը շատ վտանգաւոր է:

ԱՐԿԱՂԻ

Կորիւր, անպիտան... (Ման է գալիս: Սպասուողը գլուխը շարժելով դուրս է գնում): Աստուած իմ, այս ինչ չար աստղի տակ եմ ծնուել ես:

ՏԵՍԻԼ Թ

ԱՐԿԱՂԻ, ԱՅԷԼ

ԱՐԿԱՂԻ

Ա... Բերիք ստորագրութիւնը:

ԱՅԷԼ, շուքում:

Այո, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱՂԻ

Բերէք, բերէք, պէտք է վերջ դնել այս կացութեանը:

ԱՅԷԼ, անխոստ հանում է լեւրեւոյանից մի ծառած լուռը, որ արդարապէս բոլորովին հման է հանդիս լուռին:

Ահա, ձերդ վսեմութիւն... Միայն այս այն չէ: Տալիս է լուռը:

ԱՐԿԱՂԻ

Ի՜նչպէս թէ այն չէ... (Բռնաւել լուռը) Այս ինչ է... Այս ինչ էք արել:

ԱՅԻ

Վատ ոչինչ, ձերդ վսեմութիւն... (Մինչդեռ Վրկապեան չուսնաւ և զօրեղանքէն չարեւաճէր իւրեւրէն) Իմ կարծիքով այդ աւելի մեծ ապացոյց է. բոլորն էլ իր ձեռքով է գրած... (Թերթապետից հանում է ծիւց լուսնիկ և փոքրիկ ծրարը:) Իսկ այս՝ ինչքան էլ աշխատեցի, նա չկամեցաւ ստորագրել, ոչ էլ այս ստանալիքն ընդունեց... Ինձ ոչինչ ողորմութիւն հարկաւոր չէ, ասաց և սաստիկ բարկացաւ...

Ծրարն ու լուսնիկն արեւմտէն հեղանի վրայ:

ԱՐԿԱՂԻ, չեւոյն իսկույն լուսնիկ:

Նը, խորամանկ... Այս թուղթը մէկ կողմէ կարծէ: ԱՅԻ

Ինչի, ձերդ վսեմութիւն, չէ որ յանցանքը նա իր վրայ է վերցնում:

ԱՐԿԱՂԻ, հեղանի:

Դժոխքը կլանէ քեզ... (Վրկապեան) Ջարմանում եմ, պ. Արեւ, ձեզ վրայ... Այսքան տարի է ապրում էք աշխարհում և մինչև օրս ամենատարրական բաներն անգամ չգիտէք... Ո՞րտեղ է այստեղ յանցանքի խոստովանութիւնը, ձեզ եմ հարցնում, այն յանցանքի, որ օրէնքը պահանջում է, այսինքն՝ ամուսնական անհաւատարմութիւնը... Ի՞նչ է գրում այն օձն այստեղ, ինչ... (Արեւալուսնի) «Թողեցի ամուսնուս իմ յօժար կամքով, որովհետև չկարողացայ նրա հետ հաշտ ապրել... Ինչ մեծ գիւտ... Ի՞նչ իրաւունք կարող եմ ստանալ սրանով, ինչ... եթէ հարիւր վկայ անգամ ստորագրեն այս թուղթը...

Բարկացած ծրարն է լուսնիկ և զին չեւոյն:

ԱՅԻ

Այն միայն Աստուծուն է յայտնի, ձերդ վսեմութիւն, թէ ինչքան եմ աշխատել, որ կարողացել եմ գտնել այդ թուղթն առնել, այն էլ միայն այն պայմանով, որ դուք կը բարեհաճիք իր գլխագիրն ուղարկել շուտով:

ԱՐԿԱՂԻ

Ես նրան գլխագիր կը ցոյց տամ, թող սպասի դեռ... Դառն արտասուքով կը լացացնեմ ես նրան, քանի կենդանի է... Բարձրագոյն Ատեանը կը դիմեմ, որ քաշ տալով բերեն նրան այստեղ. տեսնեմ թէ ինչպէս չէ ստորագրում... Նը, թշուառական... (Վրկապեան հանում է հեղանի վրայ դրած լուսնիկ վերցնել:) Թողէք, թողէք այդ թուղթը... Դուք գնացէք, ուստիկանին և փաստաբանին իսկոյն այստեղ ուղարկեցէք, մնացածը ես գիտեմ... (Բարկացած:) Այս ինչ անիծեալ օր լուսացաւ ինձ համար...

Ապրաքած ման է գալիս հեղանի:

ԱՅԻ, լեւրթապետն չեւոյն, հեղանի, ցածր:

Յէ...

Սարսափից բռնումս գտնում է սրի պահանջի վրայ, ճանապարհից չեմ է հայտնում Վրկապեանի կողմնաւորութիւնը և դուրս գտնում. ինչ Վրկապեան հեղանի է իր հեղանի:

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ

Մարգարտի եւ Հեղինէի կացարանում հասարակ սենեակ՝ ճաշակով զարդարած: Սենեակը երկու դուռն ունի՝ մէկը ծախ կողմումը, իսկ միւսը բեմի խորքումը, որ եւ բացվում է դէպի նախասենեակը: Սեղան, գրասեղան, գրքերի պահարան, պատկերներ, արծանիկներ, գրքեր եւ նկարչութեան պարագաներ: Երկրորդ արարուածի այն նկարը, որ դրած էր պատկերակալի վրայ, կախուած է պատից:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԷ

ՄԱՐԳԱՐԻՏ, աջ կողմում, իր պարսկական առաջ, նկարչութեամբ
է պարսկական, որում:

Ապա, Հեղինէս, մէկ այս կողմը նայիր:
ՀԵՂԻՆԷ, որ, վարսդոյն բացուելու, չախ կողմում գրում էր պահարան գրքերի նայելով, հարեւում է:

Հիանալի է... Ես ի գուր չէի ասում, Մարգարիտ, որ դու մեծ տաղանդ ունիս... Օ, հրաշալի տեսարան...

ՄԱՐԳԱՐԻՏ

Հորիզոնը չաջողումս է:

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ

121

ՀԵՂԻՆԷ

Ձատ, շատ, անգին իմ Մարգարիտ:
ՄԱՐԳԱՐԻՏ, հեռուից զննելով իր նկարը:
Այո, ես գոհ եմ...

ՀԵՂԻՆԷ

Գիտես, Մարգարիտ, այս քո նկարը շատ նման է մեր դուրսեանը... Հորիզոնից այս կողմը ամեն ինչ մոլոր ու խաւարով պատած, իսկ այն կողմը, հեռուն, երկինքն արեւի մօտալուտ ծագումն է աւետում... Այդ կարծես այն յոյսն է, որով ապրում ենք մենք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛վ գիտէ, Հեղինէ, կարելի է, ճշմարիտ, մեր արեւն էլ ծագի մի օր... Յոյսը լաւ բան է և շատ անգամ աւելի քաղցր, քան թէ նրան իրագործուած տեսնելը:

ՀԵՂԻՆԷ, զննելով նկարը:

Ա՛խ, ա՛խ, ի՛նչ սքանչելի տեսարան է... Ի՞նչպէս էիր համբերում, զարմանում եմ, որ շարունակ այս արհեստով չէիր պարապում... Երջանիկ ես, ճշմարիտ, որ այսպէս գեղեցիկ վրձին ունիս:

ՄԱՐԳԱՐԻՏ, դառնալով:

Երջանիկ... Ա՛խ, իմ սիրունիկս, եթէ միայն այդ լինէր երջանկութիւնը... Ի՞նչ երջանիկ... ամենքից արհամարհուած, աստ, ամենքի աչքից ընկած... Ի՞նչ եմ ես հիմա իսկապէս. մի թշուառ կին, որ հասարակաց կարծիքի առաջ կորցրել է իր անունը, իր պատիւը...

ՀԵՂԻՆԷ

Ո՛վ կը համարձակուի քո պատուի վրայ մի ստուեր անգամ ձգել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ամենքը, ամենքը, թանկագին իմ հեղինէ, բացի քեզանից և մի քանի բարեկամներից, ամենքը... Ամուսնաթող կնոջ վերադիրը մեր հասարակութեան մէջ միայն ամօթն ու անպատուութիւնն է... Ախ, թողնենք, խնդրեմ... Աւելի լաւ է քո մասին, քո սրտի մասին խօսենք:

ՀԵՂԻՆԷ

Խօսենք, Մարգարիտ... Ինքս վաղուց է պատրաստ-վում եմ սիրտս բանալ, խոստովանուել քո առաջ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Պատմիր, պատմիր, հոգեակս:

ՀԵՂԻՆԷ

Ես... ես սիրում եմ, Մարգարիտ...

ՄԱՐԳԱՐԻՏ, յոգեպէտէ:

Սիրում ես...

ՀԵՂԻՆԷ

Այո, և սաստիկ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ ես գիտեմ, հեղինէ. վաղուց է որ ես այդ նկատում եմ:

ՀԵՂԻՆԷ

Դու գիտես, դու նկատում ես, և ինչպէս...

ՄԱՐԳԱՐԻՏ

Օ, հանգիստ եղիր, ինքն ըստ ինքեան երևում է:

ՀԵՂԻՆԷ

Ախ, Մարգարիտ, շատ էի կարգացել, շատ էի լըսել, բայց ես այժմ եմ միայն հասկանում, թէ ինչ զգացմունք է սէրը... Կատարեալ մի ցաւ, մի հի-

ւանդութիւն և միւսնոյն ժամանակ մի անսահման երջանկութիւն սրտիդ մէջ... Ես երբէք չէի փորձել այս զգացմունքը... Միշտ նա, միշտ նա աչքիդ առաջ, միշտ նրան ես տեսնում, նրա ձայնը լսում, նրա հետ խօսում...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչ... Աստուած ինքն է օրհնում քո սէրը... Դու ազատ, նա ազատ... (Յոգեպէտէ) Երկուսդ էլ կարող էք երջանիկ լինել... Նա շատ ազնիւ երիտասարդ է և լիովին արժանի քո սիրոյն:

ՀԵՂԻՆԷ

Լինում են ըստէներ, Մարգարիտ, որ ուզում եմ յանկարծ գիրկն ընկնել և ասել նրան բոլորը, բոլորը...

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա ինքն էլ անչափ սիրում է քեզ, հեղինէ:

ՀԵՂԻՆԷ

Ի՞նչպէս. դու անց էլ ես նկատել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Մի զարմանար, հոգիս... Մինչև օրս ես ոչինչ չէի ասում քեզ, որպէսզի խօսքերիս ազդեցութեան ներքոյ չզտնուիս, բայց այժմ՝ նամանաւանդ երբ դու ինքդ էլ խոստովանում ես ինձ քո զգացմունքները, ես կարեւոր եմ համարում չափնել քեզ, որ նա ևս տանջվում է քո սիրուց և այդ մասին շատ անգամ է խօսել հետս...

ՀԵՂԻՆԷ

Իմ բարի, իմ քնքոյշ Մարգարիտ, որքան երջանկացնում ես ինձ այս ըստիւն...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս քանի ժամանակ է, հեղինէ, ես նկատում եմ, որ դու գիշերներն էլ հանգիստ քուն չունիս... Երեւի ամբողջ ժամերով հէնց նրա վրայ ես մտածում աչքաբաց:

ՀԵՂԻՆԷ

Ա՛խ, ի՛նչ ես ասում, Մարգարիտ, քունս կորել է բոլորովին... Իսկ ցերեկով՝ ման գալիս, կարծում եմ օդի մէջ եմ շրջում. կարգալիս, գրելիս, ի՛նչ գործ էլ չինում եմ, միտքս յանկարծ թռչում է դէպի նա և գործը ձեռքիցս վաչր է ընկնում... Մարգարիտս...

Բնիւմ է քեզի:

ՄԱՐԳԱՐԻՏ, խոլը յոգեաց հանելով:

Այո, դու սիրում ես...

Պարզէր: Դրոյն լսում է Լեւոնի ջայնը: Տանն են:

ՀԵՂԻՆԷ

Նա է:

Լեւոնը որեւէ ժամ է դեպի իր տեղը և աշխատում է մի կերպ յաւանանք ծածկել, մինչդեռ լսում է Լեւոնի ջայնը՝ Տանն են, տանը, պ. Լեւոն:

ԱՆԱՀԻՏ, ներս գալով:

Պարոն Լեւոն է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խնդրիր:

Լեւոնի պատիւ է քեզի:

ՏԵՍԻԼ Բ

ՆՐԱՆՔ, ԼԵՒՈՆ

ԼԵՒՈՆ, Լեւոնի պատիւ, դռներում:

Կարելի է:

ՄԱՐԳԱՐԻՏ, դռնի կողմից նայելով և հաշտութեամբ:

Կարելի է, կարելի, մտէք, խնդրեմ: (Լեւոնի պատիւ Լեւոնի ջայնի ծածկում է դռնը) Ա՛, պ. Լեւոն, համեցէք, համեցէք, խնդրեմ:

ԼԵՒՈՆ, երկու փոքրիկ ծաղկեղենով չեւի:

Բարի օր ձեզ, տիկին. բարև ձեզ, օրիորդ:

Հեղինէն լուս աղջկանում է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բարև ձեզ, պարոն:

Տանն է չեւի:

ԼԵՒՈՆ, առաջարկելով մի փունջ:

Խնդրեմ, տիկին, այս ցատուկ ձեզ համար է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Չատ շնորհակալ եմ, պ. Լեւոն, դուք միշտ ուշադիր էք դէպի մեզ:

ԼԵՒՈՆ

Օ՛, տիկին... (Գնում է դեպի Հեղինէն և առաջարկում նրան մի փունջ) Օրիորդ, բարեհաճեցէք:

ՀԵՂԻՆԷ, փոքր ինչ շնորհակալ, ընդունում է փունջը:

Չնորհակալ եմ:

Ապրիլ լուսնի:

և շատ հաւանական է, որ նամակներս էլ ստացած չլինի...

Լուսնին: Սարգսիսը կամայ-կամայ փառափնայ լինելով, չաղարկեամբ յէր է նայում դուրս փողոս, մինչդեռ Լուսնը ուրիշ նայում է Հեղինէին, որ այդ միջոցին ջուր է ածում մի փեղեկի բաժակի մէջ:

ՏԵՍԻԼ Գ.

ՀԵՂԻՆԷ, ԼԵՒՈՆ

ՀԵՂԻՆԷ, առաջ փառով:

Գեղեցիկ ծաղիկներ են... Զատ շնորհակալ եմ, պ. Լեւոն:

Շաղկեփունջը բաժակով դնում է իր սեղանի վրայ և դիտարկում է իւր փայլուն բերքը:

ԼԵՒՈՆ

Անչափ ուրախ եմ, օրիորդ, որ կարողանում եմ գտնէ մի չնչին զուարճութիւն պատճառել ձեզ... Ձեք խանդարում ձեզ արդեօք:

ՀԵՂԻՆԷ

Ո՛հ, ո՛հ, պ. Լեւոն. ես արդէն վերջացրել եմ... Նըստեցէք, խնդրեմ:

Նայում է:

ԼԵՒՈՆ

Ձեր սովորական պարապմունքն է երևի:

ՀԵՂԻՆԷ

Այո, աշակերտներին դասերն են:

ԼԵՒՈՆ

Երեւակայել չէք կարող, օրիորդ, թէ ինչ հրճուանք եմ զգում, երբ տեսնում եմ, որ դուք այդքան սիրով շարունակում էք ձեր պարապմունքը:

ՀԵՂԻՆԷ

Դուք շատ բարի էք, պ. Լեւոն... Ես իմ փոքրիկներին համար կատարում եմ այն, ինչ որ դուք ա-նում էք ձեր գիւղի մեծերի համար... (Կարճ լուսնին) Ես ուր էք այսքան ժամանակ:

ԼԵՒՈՆ

Ուր որ միշտ, օրիորդ. անձամբ գիւղում, իսկ հոգ-ւով և սրտով այստեղ, ձեզ մօտ:

ՀԵՂԻՆԷ, չաղարկեամբ նայում է Լուսնին:

Եւ այդ էր պատճառն ի հարկէ, որ այս քանի օր է այցելութեան չեկաք մեզ:

ԼԵՒՈՆ

Հաւատացէք, օրիորդ, ես ամենաերջանիկ մարդը կը լինէի, եթէ միշտ ձեզ մօտ գտնուէի, ձեզ տեսնէի, ձեր ձայնը լսէի. բայց այս ամենը կախուած է ձեր կամքից և միմիայն ձեր կամքից... (Տեսնե՛ք Վէր է Կենում: Հեղինէն հրճվում է:) Ձեզ յայտնի են, օրիորդ, իմ զգաց-մունքները, իմ սրտի ամենախորին խորհուրդները, ինչպէս և ես գիտեմ, որ ձեր սրտումն էլ գտնէ մի փոքրիկ անկիւն կայ ինձ համար... Եւ ահա ես սպա-սում եմ այն երջանիկ օրին, երբ դուք կը տաք ինձ ձեր համաձայնութիւնը:

ՀԵՂԻՆԷ, ապա կանգնելով:

Իմ համաձայնութիւնը...

ԼԵՒՈՆ

Այո, ձեր համաձայնութիւնը, որից և կախուած է իմ երջանկութիւնը:

ՅԵՂԻՆԷ

Եւ դուք յիրաւի համոզուած էք, որ ես կարող եմ ձեզ երջանկացնել:

ԼԵՒՈՆ

Հաստատապէս:

ՅԵՂԻՆԷ

Եւ ինքս էլ երջանիկ լինել:

ԼԵՒՈՆ

Այո, այո, որովհետեւ ես ձեզ սիրում եմ... Դուք գիտէք, որ սիրում եմ... Սիրում եմ ձեզ անկեղծ, անդաւաճան, սուրբ սիրով, սիրում եմ այն զգացմունքով, որ ոչ մէկ բան չէ կարող խախտել... (Հեղինէն լռում է): Մի խօսք, միայն մի քաղցր խօսք, օրիորդ, և դուք կարող էք յաւիտեան երջանկացնել ինձ:

ՅԵՂԻՆԷ

Եւ միշտ կը սիրե՞ք ինձ այդպէս:

ԼԵՒՈՆ

Միշտ, միշտ, երդվում եմ:

ՅԵՂԻՆԷ

Ես ձեզ հաւատում եմ, Լեւոն:

Մէկտեղ է յետոյ:

ԼԵՒՈՆ, համբուրելով յետոյ:

Հաւատացէ՛ք, հաւատացէ՛ք, օրիորդ, որ ես ձեզ սիրում եմ բոլոր սրտով, հոգւոյս բոլոր զօրութիւնով:

ՅԵՂԻՆԷ, զիջելով յետոյ ընկնում է Լեւոնի գիրկը:

Լեւոն...

ԼԵՒՈՆ

Յեղինէս... (Համբուրում է): Վերջապէս դու իմն ես:

ՅԵՂԻՆԷ

Յաւիտեան...

Լեւոն, սիրում է:

ԼԵՒՈՆ

Յրեշտակս...

ՅԵՂԻՆԷ

Լսիր, Լեւոն. ես կարեւոր բաներ ունիմ քեզ հաղորդելու... (Նստում է): Այն օրից, երբ քեզ հետ ծանօթացայ ժողովարանում, քեզ հետ պարեցի, այն օրից սիրտս կաւա քեզ, այն օրից ես քեզ սիրեցի, Լեւոն:

ԼԵՒՈՆ

Ինչպէս... Ուրեմն էլ ինչի էիր հետս այնպէս սառը վարվում և ինձ տանջում... Օ՛, Յեղինէ, միթէ մեղքդ չէի գալիս:

ՅԵՂԻՆԷ

Հաւատացիր, Լեւոն, այդ վարմունքս նազ չէր իմ կողմից... Ես ինքս պակաս չէի տանջվում. բայց ես չէի համարձակվում սիրտս բանալ քեզ...

ԼԵՒՈՆ

Աննման իմ Յեղինէ...

ՅԵՂԻՆԷ

Մտնելով այժմ մի նոր ասպարէզ՝ հետդ կեանքի լուծը քաշելու, ես կամենում եմ նոյն իսկ առաջին քայլում խոստովանուել քեզ իմ զգացմունքները... Ես սիրում եմ քեզ, Լեւոն. սիրում եմ այն աստիճան, որ պատրաստ եմ կեանքս զոհել քեզ...

ԼԵՒՈՆ, համբարեցաւ յէսայ:

Հոգեակս...

ՀԵՂԻՆԷ

Հաւատում եմ որ նոյնքան էլ դու ես ինձ սիրում...

ԼԵՒՈՆ

Այո, այո, իմ սէրը դէպի քեզ երբէք չի սպառուել, երդվում եմ քեզ:

ՀԵՂԻՆԷ

Այսուհետեւ, Լեւոն, դու և ես մի ենք. քո կամքը՝ իմ կամքն է, քո սիրտը՝ իմ սիրտն է, քո կեանքը՝ իմ կեանքն է... Իմ մէջ դու կը գտնես քո հաւատարիմ ընկերակիցը, քո անձնուէր բարեկամը... Ինչ որ կարող եմ, ինչ որ ձեռքիցս գալ, քո բոլոր պահանջները միշտ կատարած համարիր... Միայն սիրիր ինձ, Լեւոն, միշտ սիրիր... Երբէք չդադարես ինձ սիրելուց, երբէք, դիտես... Գիտացիր, Լեւոն, եթէ մի ժամ, մի րոպէ դադարես ինձ սիրելուց, ինձ ուրանաս, լաւ է՝ եթէ իսկույն սպանես ինձ:

ԼԵՒՈՆ

Ամբողջ կեանքս՝ մինչև վերջին շունչս քո երջանկութեանը կը նուիրեմ, անգին իմ Հեղինէ:

ՀԵՂԻՆԷ

Օ՛, ես երջանիկ եմ... (Լեւոնը որբո՞ւմ է: Փոքր լուռ-լուռ-լուռ յէսայ:) Բայց դիտես ինչ կալ, Լեւոն... Մարգարտի դրութիւնը քեզ յայտնի է. նրան մեզանից երբէք չպիտի հեռացնենք:

ԼԵՒՈՆ

Դու էլ դիտես, հրեշտակս, որ տիկին Մարգարտին

եւ սիրում եմ որպէս իմ հարազատ քրոջս. ի հարկէ նա կը մնայ մեզ մօտ:

ՀԵՂԻՆԷ, հեղինէլ յէսայ:

Չնորհակալ եմ, Լեւոն:

ԼԵՒՈՆ

Իմ անգլին Հեղինէ:

Տեղից վեր էն կենում:

ՀԵՂԻՆԷ

Մի խնդիր ևս, Լեւոն... Ինչ դրութեան էլ հասնիս աշխարհիս մէջ, որքան էլ հարստանաս, ինչքան էլ մեծ դիրք ստանաս հասարակութեան մէջ, դու պէտք է թոյլ տաս ինձ՝ իմ պարապմունքը շարունակելու:

ԼԵՒՈՆ

Ես քեզ պաշտում եմ, իմ աննման Հեղինէ... Աշխատիր, աշխատիր, հոգիս, իմ ուզածս էլ հէնց այդ է... Դեռ դու սպասիր, մեր ապագայի մասին մտքումս անցավիսի բաներ են պտույտ գալիս, անցավիսի գեղեցիկ պատկերներ նկարվում... Քեզ համար ես առանձին ուսումնարան կը հիմնեմ մեր դիւղում, ուր երկուսս էլ լայն ասպարէզ ունինք գործելու... Դու քո ուսումնարանում գիտութեան լոյսը կը տարածես մեր ապագայ յոյս մանուկների մէջ, իսկ ես բաց երկնքի տակ կ'աշխատեմ նրանց ծնողների հետ և մենք մեր անձնական օրինակով կը խրախուսենք ու կ'առաջնորդենք նրանց:

ՀԵՂԻՆԷ

Ինչ գեղեցիկ ապագայ է սպասում մեզ... (Բանէլու՛ Լեւոնի յէսայ:) Օ՛, Լեւոն...

ԼԵՒՈՆ, Հեղինէի չեւոյն բռնած:

Այո, իմ անգին ընկերս. այսպէս ձեռք ձեռքի տուած առաջ ընթանալով, մենք կ'աշխատենք մշակել մեր փոքրիկ անդաստանը և գոլցէ կարողանանք՝ թէ ճառաջել ժողովրդին և թէ լիութիւն ու անդորրութիւն տարածել մեր շուրջը:

ՀԵՂԻՆԷ

Ի բոլոր սրտէ սիրում եմ քեզ, Լեւոն:

Մի՞շտնո՞ւ գիրքն էն ընկնում և համբուրում:

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, առանց գրգռողի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա, շնորհաւորում եմ...

ԼԵՒՈՆ

Ա՛խ, տիկին...

ՀԵՂԻՆԷ, ընկնելով Մարգարիտի գիրքը:

Ա՛խ, Մարգարիտ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Վերջապէս...

Համբուրում է Հեղինէին:

ԼԵՒՈՆ

Օրհնեցէք մեզ, տիկին... Ձեր բերանով օրհնուած մենք աւելի երջանիկ կը լինինք:

ՄԱՐԳԱՐԻՏ, մեկնելով չեւոյն, որ Լեւոնը համբուրում է:

Աստուած ինքն է ձեզ օրհնողը, բարեկամներս, որովհետեւ դուք սիրում էք միմեանց: Իսկ ես ցան-

կանում եմ, որ այդ սէրը ձեր մէջ միշտ անխախտ մնայ ձեր ամբողջ կեանքի ընթացքում... Ամուսինների համար ամենամեծ երջանկութիւնը փոխադարձ սէրն է: Երբ նրանք միմեանց սիրում են, էլ ուրիշ բան չէ պակասում նրանց: Իսկ եթէ սէր չկայ, ամենագեղեցիկ բարեմաղթութիւններն անգամ ոչինչ չեն տալիս... Թող իմ անցեալը, թող իմ ներկան օրինակ լինի ձեզ համար... Օգտուեցէք իմ կեանքի պատմութիւնից, այդ ձեզ լաւ չափնի է...

ԼԵՒՈՆ

Հաւատացնում եմ ձեզ, տիկին, որ իմ սէրը դէպի Հեղինէս կեանքիս հետ միայն կը վերջանայ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Լիովին համոզուած եմ:

ՀԵՂԻՆԷ

Ո՛րչափ աւելի երջանիկ կը լինէինք, Մարգարիտ, եթէ քեզ ևս բաղդաւոր տեսնէինք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իմ վիճակը վշտալի է, հոգիս, և ես համբերութեամբ պիտի տանեմ իմ խաչը:

ԼԵՒՈՆ

Մենք կ'աշխատենք թեթեւացնել այդ խաչի ծանրութիւնը... Մենք ձեզ սիրում ենք ինչպէս մեր հարազատ քրոջը... Դուք կը բնակուէք մեզ մօտ:

ՀԵՂԻՆԷ

Այո, այո, Մարգարիտս... (Լեւոնն) Իմ բարի, իմ ազնիւ Լեւոն:

ՄԱՐԳԱՐԻՏ, չեւոյն Լեւոնի մեկնելով:

Ազնիւ եղբայրս, այդ համակրանքն արդէն թեթե-

ւացնում է իմ լծիս ծանրութիւնը և մեծ սփոփանք է վիրաւոր սրտիս... Ամեն բան կախուած է Նախախնամութեան կամքից... Առ այժմ խնդրում եմ երկուսիդ էլ, որ ընդունէք այս նկարը որպէս գրաւական մեր բարեկամութեան:

ԼԵՒՈՆ, համբուրցի չեռք:

Ի սրտէ շնորհակալ եմ... Ձեր այդ պարզէն մեզ համար թանկ է և խորհրդաւոր:

ՀԵՂԻՆԷ, համբուրցի Մարգարիտ:

Այս, իմ անգին Մարգարիտս...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այսօր ձեր կեանքի համար նոր արշալոյս է բացվում. ի սրտէ ցանկանում եմ, որ ձեր օրով ծագի այն արեւը, որի մասին այնքան յաճախ և այնչափ շատ երազել եմ ես այս պատկերը նկարելիս...

ՀԵՂԻՆԷ

Ի՛նչ երջանկութիւն...

ԼԵՒՈՆ

Օ, մեր երջանկութեանը երջանկութիւն չի հասնիլ այն օրը...

ԱՆԱՀԻՏ, փոքրիկ սկոթլանդ քերտած է մի այցեհոսմ:

Տիկին, ձեզ եմ հարցնում:

ՄԱՐԳԱՐԻՏ, վերջին տարիներս:

Արտաշէս...

ԼԵՒՈՆ

Միթէ...

Շողոմոս է Գեղի դուռը, Մարգարիտ ստորին յուղում է:

ՀԵՂԻՆԷ

Այ ուրախութիւն:

ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, ԱՐՏԱՂԻՍ

ԼԵՒՈՆ, համբուրցի Լէրմանին հախաճեալում:

Արտաշէս...

ԱՐՏԱՂԻՍ

ԼԵՂՆ...

Գրիգոր է համբուրցի Էն. Կոնյա Գրիգոր է:

ԼԵՒՈՆ

Վերջապէս...

Լէրմանը շրջադարձ մտած է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Պարոն Արտաշէս...

ԱՐՏԱՂԻՍ

Ռարե ձեզ, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ, Կալու չեռք:

Ռարե ձեզ... Այդ դուք էք...

ԱՐՏԱՂԻՍ, համբուրցի չեռք:

Օ, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այս ինչպէս, այս երբ...

ԱՐՏԱՂԻՍ

Հէնց նոր... (Հեղինէն:) Ռարե ձեզ, օրիորդ:

ՀԵՂԻՆԷ, Կալու չեռք:

Ռարե, պ. Արտաշէս. գալուստդ բարի:

ԱՐՏԱՂԻՍ, Լեւոն:

Դարձեալ բարե, բարեկամս:

ԼԵՒՈՆ

Ռարև, բարև, եղբայր, աչքներս ջուր կտրուեց քեզ սպասելուց:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նստեցէք, խնդրեմ: (Նստած էն. Լեւոնի պարտէս է գլխին:) Դուք մեզ բոլորովին մոռացաք, պ. Արտաշէս:

ԱՐՏԱՂԻՍ

Մոռացայ... Ո՛չ, ո՛չ, տիկին, մի ըստէ անգամ ձեզ չեմ մոռացել:

ԼԵՒՈՆ

Ռայց այս ուր էիր կորել, ասն, խնդրեմ... Նամակներս ստացել ես:

ԱՐՏԱՂԻՍ

Ի հարկէ:

ԼԵՒՈՆ

Յետոյ ինչի՞ մի անգամ գոնէ չպատասխանեցիր:

ԱՐՏԱՂԻՍ

Է՛հ, եղբայր, առանց քո նամակների էլ ես շատ անգամ ուղեցել եմ մի երկու խօսք գրել քեզ, բայց ճանապարհորդութիւնս այնպէս դժուարին էր և արկածներով լի, որ համարեա հանգիստ չունէի... Իսկ նամակներդ միայն մի քանի օր կը լինի, որ բոլորը միասին լսանքեցին ինձ և ահա ես ինքս անձամբ եկայ, որպէս կենդանի պատասխան... Կը պատմեմ, կը պատմեմ, ամենայն ինչ կը պատմեմ քեզ, Լեւոն... Պատմելու բաներ շատ կայ և, տարաբաղաբար, շատ անմխիթար բաներ... Ինչեւիցէ, ես երջանիկ եմ, որ դարձեալ ձեզ հետ եմ և ձեզ ողջ և առողջ եմ տեսնում:

ԼԵՒՈՆ

Եւ միևնոյն ժամանակ տեսնում ես բարեկամիդ՝ իր կեանքի ամենաերջանիկ ընթացքի մէջ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, պ. Արտաշէս, կարող էք շնորհաւորել... Պ. Լեւոնն ու Հեղինէս հէնց այս ընթացքի պարզեցին միմեանց իրանց զգացմունքները:

ԱՐՏԱՂԻՍ

Ի՛նչ ուրախալի լուր... (Տեղից վեր լսուելով) Չնորհաւորում եմ, Լեւոն: (Գլխով էն և համբարում:) Դեռ չգնացած ես գուշակում էի, որ ձեր համակրութիւնն այդպիսի վախճան պիտի ունենայ... (Հեղինէին:) Չնորհաւորում եմ ձեզ, օրիորդ... քոյրիկս... (Համբարում չեւելով) Այսուհետեւ ինձ թոյլ կը տաք այդպէս անուանել ձեզ... Լեւոնի հարսնացուն չէ կարող ինձ օտար մնալ:

ՅԵՂԻՆԷ

Չատ ուրախ կը լինիմ, պ. Արտաշէս, ձեզ պէս եղբայր ունենալու:

ԱՐՏԱՂԻՍ, Հեղինէին գլուխ էր հարում, յետոյ համարում Լեւոնին:

Կրկին շնորհաւորում եմ, եղբայրս... (Հեղինէին:) Պէտք է իմանաք, քոյրիկ, թէ մինչև որ աստիճան զբաւած ունիք դուք Լեւոնի սիրտը... (Լեւոնին, չեւել ծայր հասնելով և խոսելով) Կ'ուզեմ բարձրաձայն կարդամ քո ճարտասանական դարձուածները...

Ծիծաղում է:

ԼԵՒՈՆ, Բնութ է Լեւոնին չեւել և խոսելով:

Ո՛չ, ո՛չ, մենք քեզ հաւատում ենք... Դու մէկ այս կողմը նայիր...

Յայն էր հարում Լեւոնին:

ԱՐՏԱԶԻՍ

Վահ, այս ի՛նչ սքանչելիք է...

Միտ է առաջ:

ԼԵՒՈՆ

Տիկնոջ գործն է այդ:

ՀԵՂԻՆԷ

Մարդարիտս հէնց այսօր վերջացրեց այդ պատկերը:

ԼԵՒՈՆ

Ես միանգամայն հիացած եմ սրանով:

ԱՐՏԱԶԻՍ

Սքանչելի է... (Մարգարիտ) Ջնորհաւորում եմ, տիկին... Դուք կատարելութեան էք հասցրել ձեր վրձինը:

Մարգարիտը լեւեւ գլուխ է առնում:

ԼԵՒՈՆ

Ջնորհաւորի՛ր և մեզ, Արտաշէս: (Մարգարիտն անցնում է շախ իրեն:) Այդ պատկերը մենք պարզ և ստացանք մի քանի ընկերացիներից և առաջ ի չիշատակ մեր երջանիկ նշանադրութեան:

ԱՐՏԱԶԻՍ

Ջնորհաւորում եմ, ի սրտէ շնորհաւորում եմ: Տալ Աստուած, որ այս պարզ և երջանկութիւն բերէ ձեզ... (Սեդուհի է Հեղինէին և Լեւոնի չեւալը) Տէս, տէս, Լեւոն, տէս թէ այս փոքրիկ կտաւի կտորը ո՛ր է տանում մարդու միտքը, մարդու հոգին... Հաւատա՛, Լեւոն, ինձ թվում է, որ ես հէնց այս ընկերացի դարձեալ այն սրբապաշտութեան եմ շրջում և մեր թշուառ եղբայրակիցներին տեսնում երկնքից օգնութիւն սպասելիս... (Լեւոն) Դուք չգիտէք, թէ ի՛նչ դրու՜թեան մէջ են այն խեղճերը: Պատիւ, կեանք, կայք,

ընտանիք, ոչինչ, ոչինչ ապահով բան չունին այն թշուառները: Բաց այդ մասին յետոյ... (Լեւոն) Դու ասա, տեսնեմ, ի՛նչ էք անելու, ինչպէս էք տուն ու տեղ սարքելու... Կարծում եմ, որ դու քո գիւղից ձեռք չես վերցնիլ:

ԼԵՒՈՆ

Ի հարկէ չէ... Ի՛նչը կարող է փոխարինել գիւղական կեանքի վայելչութեանը: Հեղինէյս հետ մենք իսկոյն որոշեցինք մեր բոլոր ոյժերը գիւղին նուիրել:

ԱՐՏԱԶԻՍ

Կատարեալ չաջողութիւն եմ ցանկանում ձեզ:

ԼԵՒՈՆ

Նոյնը և քեզ ենք ցանկանում:

ՀԵՂԻՆԷ

Ի բոլոր սրտէ:

ԱՐՏԱԶԻՍ, գլուխ է առնում անցնել և գնում դեպի Մարգարիտ:

Իսկ ձեզ, տիկին, չգիտեմ ի՛նչ ասեմ. լեզուս կաշկանդվում է... (Նստում են թէ՛ շախ իրեն, իսկ Հեղինէն ու Լեւոն ծիծաղում են իրարից) Ինձ այնպէս ապշեցրեց ձեր բաժանութիւնը...

ՄԱՐԳԱՐԻՏ

Վիճակս էր այդ, ի՛նչ արած... Դուք ինչպէս ճանապարհորդեցիք. վերջացրի՛ք արդեօք ձեզ տուած յանձնարարութիւնը:

ԱՐՏԱԶԻՍ

Այդպէս շուտ անկարելի էր, տիկին... Գործը դեռ չարունակվում է... Ընկերներս այնտեղ մնացին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստուած Ինքը յաջողի... (Աշխարհիս Գրուի է Կալիս: Լուսնիս:) Գիտէ՞ք, ես արդէն սկսել էի սաստիկ անհանգիստ լինել ձեր մասին... Ամբողջ երեք ամիս է գնացել էք և այսքան ժամանակ ձեզանից ոչ մի նամակ չէր ստացվում:

ԱՐՏԱՂԻՍ, յոյուած:

Ա՛խ, տիկին, եթէ գիտենայիք...

ԱՆԱՀԻՏ, Կրնից բերած է մի ծրար և Կալիս է Մարգարիտին:

Պատասխանի են սպասում, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛ւմից է:

ԱՆԱՀԻՏ

Չգիտեմ, տիկին, տանտիրոջ ծառան բերեց:

ՄԱՐԳԱՐԻՏ, Բանալով ծրարը:

Դարձեալ... (Աշխարհիս Գրուի և Կալիսի շարքում էլ է) Աստուած իմ...

Տեղից վեր է լուսնիս: Աշխարհիս էլ Կալիս է:

ԱՐՏԱՂԻՍ

Ի՞նչ է...

Հեղինե, միաշունչով:

Ի՞նչ կայ...

ԼԵՒՈՆ, Կոյնիս:

Ի՞նչ է պատահել...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չինչ, ոչինչ... (Աշխարհիս) Ասա, լաւ:

Աշխարհիս Կալիս է Գրուի:

ԱՐՏԱՂԻՍ

Ի՞նչ բան է, տիկին: Չէ՛ք կարող արդեօք պիտանի լինել:

ԼԵՒՈՆ

Ի հարկէ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ջնորհակալ եմ, բարեկամներս, դուք ոչնչով չէք կարող օգնել... Իմ վիճակս կախուած է մի անցակիսի մարդու կամքից, որ վաշելում է իր գիրքի բոլոր արտօնութիւնները, իսկ ես՝ թշուառս, նոյն իրաւունքից զուրկ, անօգնական և անպաշտպան, ստիպուած եմ նրա կամակորութեանը զոհ լինել ամբողջ կեանքիս ընթացքում: (Տալով Լուսնիս Կալիսին) Տեսէ՛ք, ահա՛ այս երրորդ անգամն է, որ ոստիկանութիւնը պահանջում է ինձանից իմ գլխագիրը, բայց մինչև օրս ես չեմ կարողանում ձեռք բերել այդ ողորմութիւնը իմ պարոն ամուսնուց...

ԱՐՏԱՂԻՍ

Ի՛նչ... Միթէ չէ տալիս նա ձեզ այդ թուղթը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, չէ տալիս: (Մինչդեռ Լուսնիս և Աշխարհիս Կալիսիս են լուսնիս, մեկուսիս) Կ'ազատուեմ արդեօք ես այս տանջանքներից...

ԱՐՏԱՂԻՍ

Հանգստացէ՛ք, տիկին, մենք կը կարգադրենք այս գործը... Ամենահասարակ քաղաքավարութիւնն իսկ պահանջում է, որ նա ապահովացնէ ձեր կացութիւնը գոնէ այդ կողմից:

ԼԵՒՈՆ, Լուսինը հալած շեղինքին, որ հոյնական հեղուկներով էր:

Այն, պետք է աշխատենք շուտով ձեռք բերել այդ գլխազիրը, ապա թէ ոչ, ինչպէս երևում է, ոստիկանութեան համբերութիւնը հատնում է արդէն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց ինչպէս ձեռք բերել. ո՞վ կը տայ ինձ իմ գլխազիրը, ո՞վ ունի այդ իրաւունքը բացի իմ ամուսնուց... Դուք լաւ գիտէք, որ այդ կախուած է միմիայն նրա կամքից, և ոչ մի զօրութիւն չէ կարող ստիպել նրան այդ արտօնազիրն ինձ տալու, եթէ ինքը չէ կամենում...

ԱՐՏԱՂԷՍ

Ի դուր էք այդչափ անհանգստանում, տիկին. այդ այնքան էլ դժուարին չէ, որքան կարծում էք:

ԼԵՒՈՆ, ասելով Լուսինը շեղինքին:

Այն, տիկին, ահա ես ու Արտաշէսը իսկոյն կ'երթանք ոստիկանատուն և կ'աշխատենք որ մի փոքր ժամանակ տան մեզ. իսկ այդ միջոցին, ի հարկէ, մի ելք կը գտնենք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչ, դուք մնացէք... Ես ինքս պետք է դնամ, ես ինքս պետք է դռնէ դուռն ընկնեմ, ազդականներին միջնորդութեանը դիմեմ, տեսնեմ թէ ինչ կարող եմ անել իմ սև ու մութ օրին համար... Դուք մնացէք, թող իմ անբաղդութիւնը չխանգարէ ձեր երջանկութեանը...

Դուք ե գնում չափ կողմի դռնից:

ՀԵՂԻՆԷ

Մտածեցէք, պարոններ, աշխատեցէք, ազատեցէք նրան... Ի սէր Աստուծոյ, ազատեցէք...

Դուք ե գնում Մարգարիտ յետին:

ՏԵՍԻՆԱ

ԱՐՏԱՂԷՍ, ԼԵՒՈՆ

ԱՐՏԱՂԷՍ

Եւ դու կարծում ես, որ մենք կարող ենք մի բան շինել այդ կերպով:

ԼԵՒՈՆ

Անշուշտ... Ոստիկանութեան պահանջը, երևի, ստորին պաշտօնեաների աւելորդ եռանդի հետևանքն է: Մեր ոստիկանապետը բարեկիրթ մարդ է և շատ էլ ազնիւ. հազիւ թէ նա կամենար հալածել մի կնոջ, որ հասարակութեան ընտիր դասակարգին է պատկանում:

ԱՐՏԱՂԷՍ

Գնանք, փորձենք, յետոյ ես գիտեմ իմ անելիքը:

ԼԵՒՈՆ, Լուսինը գնելով հեղինքի վրայ:

Արդէն գլուխդ տաքացաւ:

ԱՐՏԱՂԷՍ

Ես կը ցնորուիմ, Լեւոն, եթէ որ և է միջոցով ձեռք բերեմ Մարգարիտի գլխազիրը: Այդ ամենակարևոր մի թուղթ է. ոստիկանութիւնը պահանջի, չպահանջի, այդ միևնոյն է:

ԼԵՒՈՆ

Մի փոքր համբերութիւն, Արտաշէս... Զէ որ տիկ-

նոջը գլխագիրը տալը բացառապէս կախուած է մի-
միայն իր ամուսնու կամքից:

ԱՐՏԱՂԻՍ

Հաւատած ինձ, Լեոն, եթէ մեզ չհաջողուի մի բա-
նով օգնել, ես այդ գլխագիրը դէմ առ դէմ կ'առ-
նեմ հէնց նորին վսեմութիւնից... Ես նրա հետ հին
հաշիւներ ևս ունիմ... Ինչքան ցաւում եմ, որ ես
այն ժամանակ ոչինչ չգիտէի դրանց յարաբերու-
թիւնների մասին, ես նրան քաղաքավարութեան
դասեր կը տալի. բայց ինչ արած, Մարգարտի պա-
տուկ համար ես ստիպուած էի համբերութեամբ տա-
նել այն պարոնի վիրաւորեցուցիչ ակնարկութիւններն
ու կոպիտ վարմունքը:

ԼԵՈՆ

Խեղճ կին... Ինչպէս երևում է նա վաղուց տան-
ջուելիս է եղել իր շուաչտասէր ամուսնու ձեռքից:

ԱՐՏԱՂԻՍ

Օ, ես միանգամ ընդ միշտ կ'ազատեմ Մարգարտիս
այն բռնակալից: Ա՛խ, Լեոն, քո նամակներն ինձ
խելագարութեան հասցրին... Հէնց որ ստացայ այդ
նամակները, բոլոր գործերս բարձի թողի արի և
գլխապատառ ճանապարհ ընկայ... Ահա հինգ օր է,
մէկ րոպէ հանգստութիւն չեմ ունեցել. գիշեր, ցե-
րեկ սլանում էի անդադար՝ սար, ձոր, գետ, դաշտ,
կարծես գոյութիւն չունէին ինձ համար... Լեոն,
Լեոն, եթէ դու կարողանայիր երևակայել, թէ ինչ
կրակով է այրվում սիրտս, որպիսի սիրով եմ սիրում
ես Մարգարտին... Ես պատրաստ եմ ամեն բան ա-
նել, ամեն բան մոռանալ և ուրախութեամբ մենեւել

նրա ոտների տակ, եթէ միայն մի օր երջանիկ տես-
նէի նրան:

ԼԵՈՆ, փոքր լաւ-բիւնից յետոյ:

Ես քեզ հասկանում եմ, Արտաշէս... Եւ նա լիովին
արժանի է այդ սիրոյն:

ԱՐՏԱՂԻՍ

Գիտեմ, եթէ այս փոփոխութիւնը չպատահէր նրա
կեանքի մէջ, ես վճռել էի այլ ևս չերևալ նրա աչքին:

ԼԵՈՆ

Միթէ կարող էիր այդպէս խիստ լինել:

ԱՐՏԱՂԻՍ

Գնանք, Լեոն, գնանք, ուշանում ենք:

ԼԵՈՆ

Իսկոյն, Արտաշէս, թող նրանք էլ դուրս գան:

ԱՐՏԱՂԻՍ

Ա՛խ, այո, ես բոլորովին շփոթուեցայ... (Մահ է գա-
լիս, յանկարծ հանգ է առնում հիւսիսը...) Տես, Լեոն, կը
հաւատաս, այլ ևս ոչինչ չեմ որոշում, աչքերս մըթ-
նել է միանգամայն:

ՏԵՍԻՆ Է

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, գլխարկով և վերաբնակ,
ՀԵՂԻՆԷ

ՄԱՐԳԱՐԻՏ, բռն է գալիս Հեղինէի հետ:

Ներեցէք, պարոններ, որ ձեզ մենակ եմ թողնում,
ես շուտով կը վերադառնամ:

ԱՐՏԱՂԻՍ

Դուք սպասեցէք, տիկին, հանգստացէք, ի սէր

Աստուծոյ. մի կէս ժամ միջոց տուէք մեզ, մենք ահա գնում ենք ոստիկանատուն: Եթէ մեզ այնտեղ ոչինչ չյաջողուի, խօսք եմ ապրիս ձեզ, որ ես անձամբ կ'երթամ պ. Սամսոնեանի մօտ, կը խօսեմ նրա հետ և ինչպէս էլ լինի՝ կ'առնեմ նրանից ձեր գըլխագիրը:

ՄԱՐԳԱՐԻՏ, *սասորի շիրիւնէլով:*

Ի՛նչպէս... Դո՛ւք, դո՛ւք նրա մօտ կ'երթաք... Ո՛չ, ո՛չ, մի անէք այդ բանը, աղաչում եմ...

ԱՐՏԱՃԻՍ

Իսկ եթէ ուրիշ ելք չլինի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի գուր, ի գուր կը լինի այդ բոլորովին... Դուք դեռ ամենը չգիտէք... Նա զայրացած է իմ դէմ, նա պահանջում է, որ ես չանձն առնեմ մի չանցանք, որի չիշելն անգամ ինձ ամօթ է պատճառում... Աղաչում եմ ձեզ՝ մի գնաք նրա մօտ... Զարհուրելի չարիք կարող է առաջ դալ այդ տեսակցութիւնից:

ԱՐՏԱՃԻՍ

Դուք անհանգիստ մի լինիք, ոչինչ վտանգ չի կարող պատահել: (Լռանք:) Գնանք, Լեոն: (Մարգարիտին:) Ես չեմ հանգստանալ, տիկին, մինչև ձեռք չբերեմ ձեր գլխագիրը:

Դուք ե գնում:

ՄԱՐԳԱՐԻՏ, *այս ու այն կողմ ընկնելով:*

Օ՛, Տէր Աստուած, նա գնաց... Ի՞նչ պէտք է անեմ ես...

ԼԵՈՆ

Մի յուսահատուիք, տիկին, ես նրանից չեմ հեռանալ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ջտապեցէք, շտապեցէք, աղաչում եմ. արգելեցէք մի կերպով:

ԼԵՈՆ

Դուք անհոգ եղէք, տիկին:

Դուք ե գնում:

ՀԵՂԻՆԷ

Տէր Աստուած, ի՛նչ կը լինի արդեօք...

ՄԱՐԳԱՐԻՏ

Եւ այս ամենն ինձ համար... ինձ համար... Օ՛, ես թշուառս...

Այսպիսով, մեք ե վաղուհի հեռանանք, վերջում ե Լեոն եւ արագ արագ գնում ե դեպի դուռը:

ՀԵՂԻՆԷ

Մի փոքր որ սպասէիր...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ո՛չ, ես պէտք է գնամ, ես պէտք է չարչարուիմ...

Դուք ե գնում. Հեղինէն, դուռը յետեւում, անշարժ նայում ե նրա յետեւից:

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Միեւնոյն տեսարանը:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԱՀԻՏ

ՄԱՐԳԱՐԻՏ, գլխարկով և վերաբերում հարած է նախասենեակից:

Ոչ ոք չի եկել, Անահիտ:

ԱՆԱՀԻՏ, որ հեռու-հեռ էր նրան:

Ոչ ոք, տիկին, միայն տանտիրոջ ճառան գլուխս տարաւ. շուտով պատասխանն, ասում է:

ՄԱՐԳԱՐԻՏ, յոգոյ հանելով:

Պատասխան...

Ոտքիսնում-լեռն լուռ-լուռ չգործ է սեղանի վրայ:

ԱՆԱՀԻՏ

Այո, տիկին. ասացի, որ տանը չէք:

ՄԱՐԳԱՐԻՏ, վերջելով վերաբերում և գլխարկը:

Լաւ... Տաք աչք ամենը:

ԱՆԱՀԻՏ

Իսկոյն, տիկին... Բաց դուք տխուր էք, երեւի ձեզ էլի վշտացրել են:

ՄԱՐԳԱՐԻՏ, չէր-չէր վատարանին:

Ձանտ...

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

151

ԱՆԱՀԻՏ

Խեղճ իմ տիկին:

Վերջում է Մարգարիտ վերաբերում և գլխարկը և դուրս գնում... չափ կողմից: Արդար լուռ-լուռ, որից չեղոյ Մարգարիտը լուռ-լուռ գնում է ասեղին:

ՏԵՍԻԼ Բ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԷ

ՀԵՂԻՆԷ, հանելով նախասենեակից գլխարկով և վերաբերում չեղ-
վին մի րեպրիզ:

Մարգարիտ, գործերը լաւ. ես գնում... (Մարգարիտը ծածկում է արդաստանը): Ճանապարհից վերադարձաւ, որ քեզ ուրախացնեմ... (Տեղադրել չգործ է սեղանի վրայ և վերաբերում հարած): Այս րոպէիս հանգիպեցաւ ես Արտաշէսին ու Լևոնին, ոտտիկանատնից նոր էին գուրս գալիս... Բանից երևում է, որ ոտտիկանապետը շատ լաւ է ընդունել նրանց և խոստացել է օգնել, ինչ-քան կարելի է:

ՄԱՐԳԱՐԻՏ, դառնալով:

Ինչքան կարելի է... Ընտրահալով եմ, հոգիս... Յետոյ ձեր գնացին նրանք:

ՀԵՂԻՆԷ

Իսկոյն աչքս եղ կը գան:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, Հեղինէ, ո՛չ, նրանք ոչինչ չեն յաջողեցնել ոտտիկանատանը:

ՀԵՂԻՆԷ

Է՛հ, ի՛նչ ես ասում. աչգպիսի երկու մարդ աշխատում են, անկասկած մի ելք կը գտնեն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ ոք, ո՛չ ոք չի կարող գտնել այդ ելքը, Հեղինէ: Ոչ ոք իրաւունք չունի ո՛չ զլիսագիր և ո՛չ անցագիր տալ ինձ՝ առանց իմ ամուսնու համաձայնութեան, քանի որ ես նրա կինն եմ համարվում... Հասկացիր վերջապէս... Զատ, շատ մի քանի օր, ասենք հէնց մի քանի շաբաթ ժամանակ տուին ինձ, իսկ այնուհետեւ:

ՀԵՂԻՆԷ

Այնուհետեւ գիւղումը կ'ապրենք, պրծաւ գնաց. այնտեղ ո՞վ է զլիսագիր հարցնում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Հաւատա՛, որ այնտեղ ևս հանգստութիւն չեն տալ ինձ... Օ՛, այս ամենը ամուսնուս գործն է. ես լաւ գիտեմ:

ՀԵՂԻՆԷ, փոքր շուռ-լիւնիկ յէփոյ:

Իսկ դու ի՛նչ շինեցիր. տեսնո՞ւ արդեօք ազգականներիդ:

ՄԱՐԳԱՐԻՏ, յոստահար:

Այո՛, տեսայ... Խոստացան խօսել նրա հետ... Վրաս այնպէս են նաչում, կարծես մի մահապարտ լինիմ. համարեա ոչ ոք չի էլ ուզում հետս խօսել... Եւ ինչի՞, ի՛նչ եմ արել, ի՛նչ ջանքանք եմ գործել... Ես թողել եմ ամուսնուս, որի հետ ապրելն ինձ անտանելի էր... Նա ինքը շատ ուրախ է, որ ազատուեցաւ ինձանից. նա երջանիկ ապրում է իր հա-

մար... Նա հասարակութեան կողմից վաչելում է յարգանք, պատիւ, մեծարանք... Նրա առաջ բաց են ամենքի դռները... Իսկ ես՝ քանի որ կենդանի եմ, քանի շունչս բերանումս է, պէտք է տանջուիմ, շարունակ տանջուիմ՝ ամենքից արհամարհուած...

ՀԵՂԻՆԷ

Մի յուսահատուիր, Մարգարիտ, դեռ էլի ժամանակ կայ, տեսնենք ի՛նչ է լինում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, Հեղինէ, եթէ դու կարողանայիր թափանցել իմ սրտիս խորքը, եթէ դու կարողանայիր տեսնել, թէ ի՛նչ է կատարվում այստեղ... Ա՛խ... ես ինձ համար չեմ մտածում, Հեղինէ, թող պատահի, ինչ որ պատահելու է... Ես պատրաստ եմ ամեն նեղութիւններ, ամեն զրկանքներ կրելու, բայց իմ պատճառով ինչի՞ ուրիշները վտանգի ենթարկուին... Մինչդեռ ես՝ թշուառս, հնար չունիմ արգելել այդ վտանգը... (Բռնելով գլուխը:) Ես այլ ևս չեմ հասկանում ի՛նչ եմ ասում. միտքս շփոթվում է, գլուխս պտոյտ է գալիս, ես խելագարվում եմ...

ՀԵՂԻՆԷ

Հանգստացիր, ի սէր Աստուծոյ... Ինչի՞ ես չափազանցութեան հասցնում գործը...

ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ, հոգիս, լաւ, դու գնա, գործդ վերջացրու. ժամանակ է, չուշանաս:

ՀԵՂԻՆԷ

Այո՛, Մարգարիտ. միայն այս տետրակը հասցնեմ ուսումնարան... (Վերցնում է գրքակէշը) Ես շուտով կը

վերադառնամ... (Գրգռեցի՛ւ Մարգարէն:) Մի յուսահատուիր, հոգիս, աղաչում եմ քեզ, մի յուսահատուիր. Աստուած ողորմած է: (Մէկտես) Խեղճ, խեղճ իմ Մարգարիտ...

Վերցնում է վերադարձի և դուրս գնում:

ՏԵՍԻԼ Գ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՏԵՍԻԼ:

Աստուած իմ, Աստուած... Ի՛նչ անեմ, ի՛նչ անեմ... էլի հում գիմեմ...

Յոռաւոր մահ է գալիս: Յէտայ ծառանայր իմը իմարին [Արշալոյս], լուսն և անշուք նայում է նրան երկար ժամանակ: Այն դրութեան ժամը սկսում է հեղեղաւ, վերջն ընկնում է աւազանի վրայ և աղիւթը լայ ընկնում:

ՏԵՍԻԼ Դ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ, Տրտնելով նախասենեակից:

Տիկին, այն օրուայ մարդն է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՛նչ մարդ:

ԱՆԱՀԻՏ

Ա՛յ, այն հաստ-հաստ մարդը, անցեալ շաբաթ որ այստեղ էր:

ՄԱՐԳԱՐԻՏ

Վերջապէս... Խնդրիր:

Տեղից վեր է կենում, աշխարհում ծածկել էր արդարաւոր:

ԱՆԱՀԻՏ, նախասենեակի դռներում:

Համեցէք, պարոն:

Ներսէս լսելով լէզէլին՝ ինքն դուրս է գնում:

ՏԵՍԻԼ Ե

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՅԷԼ

ՄԱՐԳԱՐԻՏ, ՏԵՍԻԼ:

Օ՛, սոսկալի մարդ...

ԱՅԷԼ, լեւադռնը շեռնի:

Քարի լոյս ձեզ, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ, "աւ":

Քարե, պարոն: (Հրաւիրելով նստել) Համեցէք... Վերջապէս շնորհ բերիք, պարոն... (Նստելով) Գլխագիրս բերի՛ք արդեօք:

ԱՅԷԼ, լեւադռնը բանալով:

Այդ հեշտ է, տիկին, միայն թէ կարողանամ մի կերպ համաձայնութիւն կայացնել ձեր մէջ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՛նչ... Միթէ դեռ էլի չէք բերել. ամբողջ շաբաթ է սպասում եմ... Ձե՛ որ դուք ինձ խոստացաք:

ԱՅԷԼ

Այո, տիկին, բայց ես մեղաւոր չեմ. գիտէ Աստուած, որ մեղաւոր չեմ: (Նստելով) Նորին վսեմութիւնը, այսինքն ձեր ամուսինը, տեղեկացաւ ուր

հարկն էր... Այն ստորագրութիւնը, որ դուք ինձ յանձնեցիք անցեալ անգամ, բաւարար չէ, այսինքն... օրինական ամեն ձևերը չունի... Նրա փոխարէն պէտք է այս թղթի տակ ստորագրէք:

Հանձն է լեւրբապետից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ իմ գլխագիրը, պարոն, իմ գլխագիրը... Ոստիկանութիւնը պահանջում է, հասկանո՞ւմ էք դուք: (Յոյց է առելն «եղանի վրայ դրած ոտքիսմոռ-լեռն լեռ-ըլը»): Ահա...

ԱՅԻԼ

Այո, տիկին. բայց նորին վսեմութիւնը բացորոշ յայտնեց, որ նա ձեզ գլխագիր չի տալ, մինչև դուք չստորագրէք այս թուղթը...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ դարձելի թուղթը ես երբէք չեմ ստորագրել, ես ձեզ ասացի արդէն:

ԱՅԻԼ

Ո՛չ, ոչ տիկին, մի բարկանաք, այս այն չէ... Այս թուղթը բոլորովին նոր է գրած: Նորին վսեմութիւնը իր ձեռքով մեղմացրեց դարձուածները... Գործի էութիւնը նրանումն է միայն, որ յանցանքը դուք ձեզ վրայ պիտի առնէք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Աստուած էլ գիտէ, մարդիկ էլ գիտեն, որ ես ոչինչ չանցանք չունիմ և չեմ էլ կարող ճանաչել... Ինչ որ գրեցի անցեալ անգամ, այն էլ բռնի հարկադրեցիք ինձ գրելու:

ԱՅԻԼ, շարունակ:

Այս էլ թեթեւ է գրած, տիկին:

Տաքսիստիկա տաքսիստիկա է լեռ-ըլը:

ՄԱՐԳԱՐԻՏ, «ստիկա լեռ-ըլը և աչի անցնելով, փռնալափում

է և տեղից վեր լեռ-ըլը»:

Երբէք, երբէք... Երբէք չեմ ստորագրել ես այս թուղթը... (Չէ՛ր է լեռ-ըլը «եղանի վրայ»): Դարձեալ նոյն խաչտառակութիւնը, նոյն դարձելի գրապատու-թիւնը... Ի՛նչ կայ այստեղ փոփոխած:

ԱՅԻԼ, որի է անգնելով:

Բայց, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի դուր էք աշխատում, պարոն... Աշխարհիս ոչ մէկ բարիքի համար ես չեմ տալ այդ զգուշի ստորագրու-թիւնը... Հասկանո՞ւմ էք դուք՝ աշխարհիս ոչ մէկ բարիքի համար...

ԱՅԻԼ

Սակայն...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այլ ևս ոչ մէկ խօսք, խնդրում եմ... Այդ տեսակ խաչտառակութիւն ես երբէք չեմ ընդունիլ ինձ վրայ, ես ձեզ արդէն անցեալ անգամ ասացի... Ի՛նչն է փոխած այստեղ, ի՛նչ... Անհաւատարիմ եմ եղել ես իմ ամուսնուն, արատաւորել եմ ես նրա անունը, նրա պատիւը. ուրիշ էլ ի՛նչ մնաց... (Զարթոյցած): Ո՛հ, Աստուած, Աստուած, ինչի՞ ամօթից գետինը չեմ մըտ-նում ես այս րոպէիս:

ԱՅԻԼ

Մտածեցէք, տիկին, նա ձեր օրինաւոր ամուսինն

է... Նա զայրացած է ձեր դէմ, նրա խօսքն ամեն տեղ անցնում է... Նա շատ չարիք կարող է բերել ձեր գլխին: (Խառնաշփոթ:) Եւ ուղիղն ասեմ ձեզ, տիկին... Նա արդէն դիմել է Բարձրագոյն Ատենին... Հետեւանքը դուք ինքներդ գիտէք, տիկին... Ո՛վ կարող է օրէնքին ընդդիմանալ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Պիտեմ, գիտեմ, պարոն, և դրա համար էլ օգուտ էք քաղում ձեր իրաւունքներից... Պիտեմ... Այստեղ օրէնքները ձեր օգտին են խօսում, ձեզ են պաշտպանում: Ի՞նչ կարող եմ անել... Բաց կաշ և երկնային դատաստան, որի առաջ պատասխան էք տալու դուք մէկ օր:

ԱՅԻՆ

Երկնային դատաստանը վկայ, տիկին, որ այսօր է թէ վաղը՝ ձեզ Ատենան կը հրաւիրեն, եթէ չէք ստորագրել այս թուղթը, և ձեզ կը հարկադրեն ձեր ամուսնու մօտ ապրել... Օ՛, դուք երբէք չէք ազատուիլ նրա հալածանքներից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Թող անէ, ինչ կամենայ... Եթէ ելք չկայ ինձ ազատուելու, մահը կ'ազատէ ինձ նրանից:

ԱՅԻՆ, փոքր լուսնիկից յետոյ վերցնում է իր բերած լուսնիկը:

Տիկին, լսեցէք դուք իմ բարեկամական խորհուրդը, անկեղծ սրտով եմ ասում, հաւատացնում եմ ձեզ... Կատարեցէք ձեր ամուսնու ուղածը և այն ժամանակ ամեն ինչ կարգին կ'երթայ... Նա կը վերջացնէ գործը հաշտութեամբ... դուք հանգիստ կ'ապրէք ձեզ համար... ձեզ ոչ ոք չի նեղացնիլ...

ՄԱՐԳԱՐԻՏ, ԸՆԴՈՒՆՈՒՄ:

Թողէք ինձ, խնդրեմ:

ԱՅԻՆ

Ի դուր էք բարկանում, տիկին. չէ՞ որ այս մի դատարկ ձևականութիւն է, որով ձեր խիղճը չի արատաւորուիլ երբէք... Ի՞նչ կը պակասի ձեզ, եթէ ստորագրէք այս թուղթը:

ՄԱՐԳԱՐԻՏ, ԽԱՌՈՒՄ:

Դուք կամենում էք խելագարութեան հասցնել ինձ... (Յոռաշփոթ խոսում է:) Անահիտ...

ՏԵՍԻՆ Զ

ՆՐԱՆՔ, ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ, ԸՆԴՈՒՄ:

Ի՞նչ կը կամենաք, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ, ԸՆԴՈՒՄ:

Անց այստեղ, Անահիտ, ես նուազում եմ... (Յածք:) Այս մարդը...

Թորոշում է Լուսնիկին, աշխարհ է իշխել իրան:

ԱՆԱՀԻՏ, ԸՃԵՄ:

Ի՞նչ էք ուզում մեզանից, պարոն, թողէք տիկնոջը հանգիստ, ի սէր Աստուծոյ:

ԱՅԻՆ, Մարգարին:

Ներողութիւն, տիկին... Ես աշխատում էի որ գործը խաղաղութեամբ վերջանայ, բաց դուք ինձ չհասկացաք... Այժմ ես անպարտ եմ... Մնաք բարեալ... (Վերցնում է Լուսնիկին:) Այն միայն Աստուծուն է յայտ-

նի, թէ ինչ վիշտ է պատճառում ինձ ձեր դրու-
թիւնը... (Մէլուսի:) Փառք Քեզ, Աստուած, որ ինձ
էս հանգին կնիկ չես տուել...

Դուք է գիտէ:

ՏԵՍԻԼ Է

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԱՀԻՏ

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, սիրտս...

ԱՆԱՀԻՏ

Հանգստացէք, տիկին... Ա՛խ, ինչքան չարչարում
են ձեզ այդ մարդիկը:

ՄԱՐԳԱՐԻՏ

Պէտք է տանջուիմ այսպէս, քանի որ կենդանի
եմ: (Լճիկուստի պատճառով) Գնան տես, դռները բաց չմնան:

ԱՆԱՀԻՏ

Ճշմարիտ, ես կը հրամայեմ դռնապանին, որ այ-
սուհետեւ բնաւ չընդունի այդ պարոններին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ուժով ներս կը թափուեն, Անահիտ. ո՛վ է ինձ
պաշտպանողը:

ԱՆԱՀԻՏ

Աստուած ողորմած է, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Երանի Աստուած հոգիս առնէ ու պրծնեմ ես այս
աշխարհից:

Լճիկուստի պատճառով է:

ԱՆԱՀԻՏ

Խնայեցէք ձեզ, տիկին, մեղք էք:

Տխուր դուք է գիտէ հախուհիւ:

ՏԵՍԻԼ Ը

ՄԱՐԳԱՐԻՏ, ՏԵՍԻԼ, ԿԱՌԱՐԱՆԵԼԵԱՏԷ:

Խնայեցէք ձեզ... Ամբողջ կեանքս փշրած է, այլ
ևս ինչ մնաց խնայելու... (Փոքր լուսնիկի շերտի՝ յան-
կարծ եւ յառաջարկ:) Մ, աւելի լաւ է ջուրն ընկնեմ,
քան թէ կրկին նրա ձեռքի տակը լինիմ...

Գիտէ է քեզի յախ ԿԱՌԱՐԱՆ:

ՏԵՍԻԼ Թ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԼԵՒՈՆ, ԱՐՏԱԶԷՍ

ԼԵՒՈՆ, չեւի՛ն ՏԻ ԾԻՐԱ:

Վերջապէս կարող եմք ձեզ շնորհաւորել, տիկին...
Ահա, ոստիկանապետը պատուիրում է թաղապետին,
որ անհանգիստ չանէ ձեզ, մինչև ձեր գործը օրինա-
կան ընթացք կը ստանայ:

ԾԻՐԱՐ ԿԱՌԱՐԱՆ Է ՆԵՂԱՆԻ ՎԵՐԱՅ:

ՄԱՐԳԱՐԻՏ, ՆԵՂԱՆԻ ԿԱՌԱՐԱՆ:

Չնորհակալ եմ, բարեկամներս... Չատ, շատ շնոր-
հակալ եմ... Նստեցէք, խնդրեմ:

Նստում է:

ԼԵՒՈՆ, հարեւոյ:

Ուղիղն ասած, տիկին, եթէ Արտաշէսի աջակցութիւնը չլինէր, ես մենակ ոչինչ չէի կարող անել:

ԱՐՏԱՂԷՍ, որ հեռու է որդի վրայ:

ԼԼՈՆ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Կրկին շնորհակալ եմ, բարեկամներս... Այդ հրամանագիրն էլ մեծ ողորմութիւն է... Փնուք Աստուծոյ, այժմ գոնէ մի փոքր ժամանակ հանգիստ կը թողնեն ինձ, թէև այն բռնակալը, ասում են, դիմել է արդէն Բարձրագոյն Ատենին, (Գրան Ժողովոյ): որ քաջ տալով տանեն ինձ նրա դուռը:

ԼԵՒՈՆ

Օ, տիկին...

ԱՐՏԱՂԷՍ

Ջարմանալի ոչինչ չկայ, ԼԼՈՆ. օրէնքը տալիս է նրան այդ իրաւունքը... (Մարգարիտ): Այնուամենայնիւ դուք հանգիստ եղէք, տիկին. մենք ինքներս ճանապարհ կը գտնենք գործելու...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչքան վիշտ ու չարչարանք եմ պատճառում ես իմ բարեկամներին:

ԱՐՏԱՂԷՍ

Ախ, ի՞նչ էք հրամայում...

ԼԵՒՈՆ

Միթէ պարտաւոր չենք...

ՏԵՍԻԼ Ժ

ՆՐԱՆՔ, ՀԵՂԻՆԷ

ՀԵՂԻՆԷ, հարսանեալի դռնէն, վերադառնալու հանելով:

Ի՞նչ արիք, պարոններ, ի՞նչ շինեցիք: (Վերադառնալու հանելով, որ հեռու է որդի վրայ): Կարողացա՞ք մի ճար անել արդեօք:

ԼԵՒՈՆ, վեր կենալով:

Ուրախացիր, հրեշտակս, ուրախացիր. ահա ոստիկանապետի հրամանը, իսկոյն տանելու եմ թաղապետի մօտ: Տիկնոջը հանգիստ կը թողնեն:

ՀԵՂԻՆԷ

Ի՞նչպէս, միթէ... Օհ, այ ուրախութիւն... (Մարգարիտ): Ջնորհաւորում եմ, հոգիս... (Վրայ ընկնելով համբուրած է Մարգարիտ): Սրտանց շնորհաւորում եմ...

ՄԱՐԳԱՐԻՏ, համբուրելով Հեղինէին:

Ջնորհակալ եմ, Հեղինէս...

ՀԵՂԻՆԷ

Չասացի՞ քեզ, որ Աստուած ողորմած է... Ահա վերջապէս...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո...

ՀԵՂԻՆԷ, վերջնէնով գլխարկը, առաջ է Լեւոնին, որ վերադառնալու հետ միասին դուռն է հեռու է որդի վրայ:

Իսկ գլխազգիւրը... Չէ որ նորին վսեմութիւնը չէ համաձայնում:

ԱՐՏԱԶԻՍ

Այդ մասին դուք երկիւղ մի կրէք, քոյրիկս, դա մեր գործն է:

ԼԵՒՈՆ

Օ՛, այժմ մենք ժամանակ շատ ունինք... (Ծրարաբար) Քանի որ այս կայ, գլխագիր պահանջող չի էլ լինիլ այստեղ:

ՀԵՂԻՆԻ

Տար, Լեւոն, տար այդ ծրարը. թող այսուհետեւ էլ ոստիկանի երես չտեսնենք մենք այստեղ:

ԼԵՒՈՆ

Միամիտ եղիր, էլ ոչ ոք չի նեղացնիլ մեզ:

ՀԵՂԻՆԻ

Փառք Աստուծոյ, վերջապէս հանգստացանք: Այժմ ես զնամ և ճաշի պատրաստութիւն տեսնեմ:

ԼԵՒՈՆ

Ինձ էլ կը թողնես, հոգիս, որ օգնեմ քեզ, այնպէս չէ:

ՀԵՂԻՆԻ

Կարող ես: (Ժպտալով) Ձէ՛ որ մեր նշանաբանն է՝ միասին աշխատել:

Մարգարեիւր Էփրէմեանի որդւո՛ւ է:

ԼԵՒՈՆ

Անշուշտ... (Աշխատելով, որ այս միջոցին իսնձեմ է նկարի-ստեղծել) Դու այսօր մեր հիւրն ես ի հարկէ:

ՀԵՂԻՆԻ

Ի հարկէ... Յոյս ունիմ որ մեր եղբայրը կը համա-ձայնի մասնակից լինել ընդհանուրիս ուրախութեանը:

ԱՐՏԱԶԻՍ

Մե՛ծ յօժարութեամբ, բայց մի կէս ժամից յետոյ պարտական եմ գնալու... Կարեւոր գործ կայ և խոստացել եմ:

ՀԵՂԻՆԻ

Վնաս չունի, մենք ձեզ կը սպասենք թէկուզ մինչև երեկոյ: (Աշխատելով գլխին և պաշտին: Դիմելով Մարգարեին:) Իսկ դու, հոգիս, ինչի՞ այդպէս տխրեցիր... Բաւական է, խնդրեմ, մի փոքր էլ ուրախանա՛նք... Դեռ տես թէ ի՛նչ օրեր ենք անցկացնելու գիւղում... (Աշխատելով) Գիտէ՛ք, եղբայր Արտաշէս, Լեւոնս այնքան բարի է, որ կամենում է յատկապէս ինձ համար ուսումնարան հիմնել մեր գիւղում:

ԱՐՏԱԶԻՍ

Հրաշալի գաղափար, հրաշալի ասպարէզ գործու-նէութեան...

ԼԵՒՈՆ, Աշխատելով:

Այդ մասին դեռ ևս շատ բան ունինք կարգա-դրելու...

ՀԵՂԻՆԻ, շարունակելով:

Կարող էք երեւակայել, պ. Արտաշէս, թէ որքան ուրախ եմ ես, ինչքան երջանիկ, որ ապրելով սիրած մարդու հետ՝ միևնոյն ժամանակ պարապ չեմ մնալու և որ ես ևս մասնակից եմ լինելու ժողովրդի չառաջադիմութեան գործին:

ԱՐՏԱԶԻՍ

Ես լիովին ըմբռնում եմ, քոյրիկս, ձեր զգացմունքը:

Հեղինէն գլխին և պաշտին:

ԼԵՒՈՆ

Գիտէ՞ք ինչ, պարոններ... Եկէ՛ք՝ ուղղակի քշենք
գնանք մեր գիւղը, հէնց իսկոյն: Համաձայն է՞ք:

ՀԵՂԻՆԷ

Հիանալի է:

ԼԵՒՈՆ Մարգարիտ:

Ի դէպ, տիկին, ձեզ վրայ մի փոքրիկ պարտք էլ
կայ. չիշո՞ւմ է՞ք... Կը ճաշենք այնտեղ, կ'ուրախա-
նանք և երեկոյեան դարձեալ կը վերադառնանք
միասին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես համաձայն եմ:

ՀԵՂԻՆԷ, հրճուած:

Հրաշալի է, հրաշալի:

ԼԵՒՈՆ, ԼՂԴՊԱՅԻՆ:

Իսկ դու ի՞նչ կ'ասես... Կարող ես գործդ վերջա-
ցնել և հասնել մեզ ուղղակի կայարան:

ԱՐՏԱՂԷՍ

Կ'աշխատեմ:

ՀԵՂԻՆԷ

Աշխատեցէ՛ք, եղբայրս, ձեզ հետ միասին մենք
աւելի ուրախ կը լինինք...

ԱՐՏԱՂԷՍ

Ես ամենայն միջոց գործ կը գնեմ, որ չգրկեմ ինձ
ձեր ընկերակցութիւնից:

ԼԵՒՈՆ, վերջնա՞հ է ծրարը:

Իսկոյն կը վերադառնամ: (Կանաչ): Դուք էլ, տիկ-
նայք, պատրաստ եղէ՛ք: (ԼՂԴՊԱՅԻՆ:) Տէս, մենք կը
սպասենք քեզ. շուտով արի, խնդրեմ... Քէֆը, քէֆ է...

ՀԵՂԻՆԷ

Ա՛յ թէ կ'ուրախանանք...

ԼԵՒՈՆ, ՀԵՂԻՆԷՆ, որ նրան ճանապարհ է գցում:
Հոգեմկոս... (Համբարձում է չեւալը:) Ես իսկոյն կը գամ...
Դուք է գնում:

ՀԵՂԻՆԷ

Իսկ ես կ'երթամ, կը պատրաստեմ ամեն բան և
յետոյ՝ բարի ճանապարհ. (Դիմելով ԼՂԴՊԱՅԻՆ:) Բայց ան-
պատճառ ձեզ հետ միասին, պարոն Արտաշէս: (Գլու-
նելով Մարգարիտ:) Ինչքան ուրախ եմ, ինչքան երջա-
նիկ եմ ես, իմ անգին Մարգարիտս...

Դուք է վաղու՞ չափ հոգնեց:

ՏԵՍԻԼ ԺԱ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐՏԱՂԷՍ

ԱՐՏԱՂԷՍ, կարճ լուրերից յետոյ, հարեւոյ:

Երջանիկ գոյգ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, ես հաւատում եմ, որ հեղինէս երբէք զղջա-
լու տեղիք չի ունենալ:

ԱՐՏԱՂԷՍ

Անկասկած... Լեւոնը թեթեւամիտ մարդ չէ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, ճանաչում եմ: (Փոքր լուրերից յետոյ յոգեաց հա-
նելով:) Եթէ ամենայն ամուսնութիւն այդպէս կա-
տարուէր, Կուցէ այն ժամանակ ինձ նման թշուառ
կանայք սակաւ լինէին... (ԼՂԴՊԱՅԻՆ հեռանալով:) Ներեցէ՛ք,

պ. Արտաշէս, ներեցէք իմ արտասուքները: Ի՛նչ արած՝ բաղդս այնպէս բերեց, որ ես այս օրին հասայ... Իրաւունքներից զո՛ւրկ, անուկից զո՛ւրկ, ազատութիւնից զո՛ւրկ...

ԱՐՏԱՂԻՍ

Հանգստացէք, տիկին, աղաչում եմ ձեզ, հանգրտացէք: Ձեր դրութիւնն աննկարագրելի ցաւ է պատճառում ինձ, ձեր արտասուքներն այրում են սիրտս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Քիտեմ, պ. Արտաշէս, գիտեմ՝ թէ որչափ կարեկից էք ինձ:

ԱՐՏԱՂԻՍ, վեր կենալով:

Կարեկից եմ, և միմիայն կարեկից... Ո՛չ, տիկին, ո՛չ, աւելի խորին զգացմունք է ալէկոծում իմ սիրտը: Հաւատացէք, տիկին, ես պատրաստ եմ յանձն առնել ամեն տեսակ զոհաբերութիւն, ամեն տեսակ տանջանք, միայն թէ կարողանամ թեթեւացնել ձեր դրութիւնը, բարեփոխել ձեր վիճակը:

ՄԱՐԳԱՐԻՏ, վեր կենալով:

Բարեկամս... (Մէկնելով չեւառ:) Իմ անգլին, իմ հաւատարիմ բարեկամս...

ԱՐՏԱՂԻՍ, բռնելով չեւառ:

Ա՛խ, Մարգարիտս, իմ մանկութեան Մարգարիտս...

Սիրով ղառաւած՝ սրբող - սրբող համբուրում ե չեւառ:

ՄԱՐԳԱՐԻՏ, յենդուլեւած ժողովելով չեւառ:

Արտաշէս...

ԱՐՏԱՂԻՍ, շարունակելով, կրկին բռնում ե չեւառ:

Այսուհետեւ միայն մահը կարող է բաժանել ինձ քեզանից:

ՄԱՐԳԱՐԻՏ, հաղորդելով:

Բարեկամս... Արտաշէս... Խնդրում եմ...

ԱՐՏԱՂԻՍ, բորբոքում և սկսում Մարգարիտ չեւառ բռնած:

Լսիր, լսիր, Մարգարիտս, աղաչում եմ քեզ, լսիր ինձ... Թո՛ղ տուր պապանձուած լեզուս բանալ, թո՛ղ տուր ասել քեզ այն, ինչ որ այսքան տարի չեմ համարձակուել արտասանելու... Թո՛ղ տուր ինձ ասել, որ ես սիրում եմ քեզ, սիրում եմ այն օրերից, երբ դեռ երեխայ միասին խաղում էինք, միասին զուարճանում... Ո՛հ, Մարգարիտս, իմ անգլին Մարգարիտս, ես քեզ սիրում եմ հոգոյս բոլոր զօրութիւնով, սիրում եմ այնքան, որքան բնութիւնը մարդուս ոյժ է տուել սիրելու... Աստուած քեզ ինձ համար էր ստեղծել, մարդիկ խլեցին ինձանից...

ՄԱՐԳԱՐԻՏ, սկսելով:

Արտաշէս, Արտաշէս, դու ինձ տարար բոլորովին մի ուրիշ աշխարհ... Կարճես թէ այս ամենը ցնորք է, լուսազարդ մի ցնորք... Այո, դու ինձ սիրում ես... Վաղուց է որ զգում եմ ես այդ սէրը, վաղուց է որ հասկանում եմ ես դրան... Հաւատա՛ ինձ, Արտաշէս, որ նոյն անսահման սիրով ես ևս քեզ եմ սիրում և ամբողջ աշխարհում ես ամենաերջանիկ կինը կը լինէի, եթէ կարողանայի քեզ պատկանել յաւիտեան...

ԱՐՏԱՂԻՍ, հրճում:

Մարգարիտս... Ուրեմն բոլորը կորած չէ ինձ համար: Ուրեմն դեռ ևս երջանակութեան յոյս կայ ինձ համար:

ՄԱՐԳԱՐԻՏ, յենդուլ:

Ո՛հ, որքան ապաբաղդ եմ ես... (Լինելով մի քանի րոպէ) որքան ապաբաղդ...

ԱՐՏԱՂԷՍ, Դժբէնալով:

Մարգարիտա...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛խ, Արտաշէս, խորին անդունդը բաժանում է մեզ միմեանցից... Մեր մէջ կանգնած է մի դարաւոր պարիսպ, որը քանդելու համար գուցէ մեր ամբողջ կեանքը բաւական չլինի:

ԱՐՏԱՂԷՍ

Ոչինչ, ոչինչ արգելք մեզ չի կարող բաժանել այսուհետեւ. մենք սիրում ենք միմեանց:

ՄԱՐԳԱՐԻՏ

Դեռ երեխայ՝ ես քեզ սիրում էի, չհասկանալով այդ սէրը... Ծնողներս այնպէս արին, որ ես մի անարժան մարդու կին դարձայ... Չատ աշխատեցի, շատ տանջանքներ կրեցի, շատ պատերազմեցի ինքս ինձ հետ, որ սիրեմ նրան, բայց չկարողացայ... Նա իր վարմունքով սիրտս չաւիտեան կտրեց իրանից... Նս համբերեցի, որքան հնարաւոր էր համբերել... Այժմ մենք բաժանուած ենք, ես նրանից ազատուել եմ, նա իրաւունք չունի արգելք դնել իմ երջանկութեանը, որովհետեւ ինքն ապրում է, ինչպէս կամենում է... Բայց հասարակութիւնը իր պահանջներն ունի, իր սահմանած կարգ ու կանոնը, որի առաջ ես պարտաւոր եմ խոնարհուել... Նս երջանիկ կը լինէի միայն քո անունը կրելով, Արտաշէս, միայն արժանաւոր ամուսինդ լինելով...

ԱՐՏԱՂԷՍ

Երկնային հրեշտակս, ես հասկանում եմ քո զգացմունքը, քո արդարացի պահանջը... Այդ մասին ես

հէնց այսօրուանից կ'աշխատեմ, դու միամիտ եղի՛ր. ես մի րոպէ անգամ չեմ հանգստանալ, մինչև ազատութիւնդ ձեռք չբերեմ... Բայց մինչև այդ երջանիկ օրը, մինչև որ մեր ամուսնութեան իրաւունքն ստանանք, մինչև որ կարողանանք մեր միութեան ձեւը կատարել մարդկանց առաջ, միթէ մենք արդէն ամուսիններ չենք Աստուծոյ առաջ... Մենք սիրում ենք միմեանց, մեր երջանկութիւնը միայն քեզանից է կախուած, իմ աննման Մարգարիտա... Տո՛ւր ինձ այդ երջանկութիւնը, աղաչում եմ քեզ, Մարգարիտ, մենք չաւիտեան երջանիկ կը լինինք... Դու գիտես, որ չաւիտեան կը սիրեմ քեզ, և այս սէրը միայն մահը կարող է դադարեցնել... (Լաւա՛նք...) Մարգարիտա...

ՄԱՐԳԱՐԻՏ

Հաւատացիր, Արտաշէս, ես ևս պակաս չեմ սիրում քեզ, որովհետեւ երբ կամենաս, երբ հարկաւոր լինի, կեանքս կը զոհեմ քեզ, քեզ համար, քո երջանկութեան համար... Բայց որ քեզ պատկանեմ և միեւնոյն ժամանակ ուրիշի ամուսինը համարուիմ, այդ ես չեմ կարող. մեր բոլոր երջանկութիւնը թունաւորուած կը լինի... Նս անչափ սիրում եմ քեզ, Արտաշէս, ինչպէս և դու ինձ ես սիրում, ուստի և ցանկանում եմ ազատ իրաւատէր լինել իմ անձիս և բարձրիզուելու համարձակ նայել ամենքի երեսին:

ԱՐՏԱՂԷՍ

Այդ մասին անհոգ եղի՛ր, իմ թանկագին Մարգարիտ. մենք կը դիմենք հոգեւոր Ատենին և ամենը կը կարգադրուի, ինչպէս պէտքն է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ախ, Արտաշէս, չէ որ այնտեղ էլ հարկաւոր կը լինի ապացուցանել, որ նա յանցաւոր է... Ի՞նչպէս կ'ապացուցանենք... Եւ ի՞նչ հարկաւոր են մեզ այդ ապացոյցները... Ազատութիւնը ես որոնում եմ սկզբունքով... Երեւակայիր, թէ որքան անբաղդ կանայք կան, որոնք ինձ նման իրանց ամբողջ կեանքը անց են կացնում ցաւով և արտասուքով, որոնք անկարող լինելով տանել իրանց տառապանքները, անձնատուր են լինում կեանքի հոսանքին, կորցնում են իրանց անունը, իրանց պատիւը և նախատինք եւ կրում այն հասարակութիւնից, որը միակ պատասխանատու է նրանց վարք ու բարքի համար... Ե՛լ բաւական է. պէտք է վերջ ունենայ այս ամենը... Քո սիրուց դրդուած, իմս Արտաշէս, ինձ նման թշուառ կանանց սիրուց և կարեկցութիւնից դրդուած, ես հէնց այսօրուանից, բազմաթիւ տրտունջներն ու խոչընդոտներն արհամարհելով, բարձրացնում եմ իմ ձայնը իմ անձիս և ինձ նման տառապեալների պաշտպանութեան համար... Թող մեր տառապանքները ապացոյց լինին մեր դատի ճշմարտութեան... Դու ինձ սիրում ես, Արտաշէս, դու պիտի օգնես ինձ, որ կարողանամ ձեռք բերել մեր անկախութիւնը... Ազատութիւն, ազատութիւն նախ և առաջ և այնուհետեւ ես չաւիտեան քոնը կը լինիմ...

ԱՐՏԱՂԻՍ

Ո՛րքան վեհ ես դու այս վայրկեանիս, որքան պաշտելի...

ՄԱՐԳԱՐԻՏ

Երկուսս էլ թշուառ ենք, Արտաշէս... Երկուսս էլ պիտի տանջուինք...

ԱՐՏԱՂԻՍ

Ես ամեն բան կը տանեմ, միայն թէ դու երջանիկ լինիս...

ԱՆԱՀԻՏ, Բէրում է Բարչրաֆոյն Աշտին Էրկու ծանուցաբեր:

Երանցիկ Տէրին կցած էն և ուրիշ լռելէր:

Բարձրագոյն Ատենիցն է, տիկին:

Տալիս է Մարգարիտ:

ՏԵՍԻՆ ԺԲ

ՆՐԱՆԻ, ՀԵՂԻՆԷ, յեպոյ ԼԵՒՈՆ

ՄԱՐԳԱՐԻՏ, աշխատանքի ծանուցաբեր:

Ահա, այս էր սպառնալիքը...

Ծանուցաբերը չգում է չափ կողմի սեղանի վրայ:

ՀԵՂԻՆԷ, Գլխարկով, չեսին Բարձրագոյն Տէրին աշխատանքի վրայ:

Մարգարիտ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինձ դատարան են կանչում...

ՀԵՂԻՆԷ

Աստուած իմ... Յետոյ...

Աշխատանքի վերջում է կցած լռելիւր ծանուցաբեր և աշխատանք:

ՄԱՐԳԱՐԻՏ

Յետոյ... Օրէնքը շատ պարզ է... Ինձ կամենում են իմ ամուսնու ոտների տակ ձգել... (Վերցնում)

է Գրեշէ: Նորին վսեմութիւնը գործեց և այս ստորութիւնը...

Հեղինէն Գրեշէ և Կարապետ:

ԼԵՒՈՆ, Գրեշէն՝ Գրեշէն՝ Մարգարէի ապրումները և Գրեշէ Կարապետի:

Ի՞նչ է պատահել կրկին...

Մարգարէի ապրումները Կարապետի ապրումները և Լեւոնի, որ ինչոյն դուրս է գալիս:

ԱՐՏԱՂԻՍ, Լեւոն, Կարապետ:

Նորին վսեմութիւնը դիմել է Բարձրագոյն Ատենին, որ տիկնոջն ստիպմամբ ենթարկեն նրա իշխանութեանը...

ԼԵՒՈՆ

Օ՛հ, անիրաւ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա աւելի շուտ իմ դիակը կը տեսնի իր իշխանութեան ներքոյ, քան թէ ինձ կենդանի...

ԱՐՏԱՂԻՍ, Կարապետի ապրումները և Կարապետի ապրումները և Կարապետի:

Մարգարիտ, [ներքի, ես խօսում եմ մեր սրտակից բարեկամների առաջ], մինչև օրս քո սիրով եմ ապրել, մինչև օրս դու ես եղել միշտ ինձ առաջնորդող փառուս աստղը... Այժմ երգվում եմ քեզ մեր սուրբ սիրով, երգվում եմ քո արևով, Մարգարիտ, որ կեանքիս միակ նպատակն այսուհետև քո ազատութիւնը կը լինի...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, բարեկամս, դա է միակ ճանապարհը, որին մենք պէտք է դիմենք...

ԱՐՏԱՂԻՍ

Օ, հաւատացած եղիր, հոգիս, ես ամենայն միջոց գործ կը դնեմ... Մնաս բարեաւ, ես գնում եմ... (Համբուրում է չեւի: Յետոյ դիմելով Հեղինէին և Լեւոնին:) Մնաք բարեաւ... (Ձեռք է քաշում:) Բաղդաւոր եղէք... (Վերջինով լեւելել, նորից Կարապետի և Մարգարիտի:) Ես գնում եմ, պահապան հրեշտակս, և կը վերադառնամ քեզ մօտ միմիայն այն ժամանակ, երբ ազատութիւնը ձեռք բերած կը լինի... (Լեւոն է չեւի:) Թո՛ղ տուր ինձ միայն համբուրել քո անարատ ճակատը, և այս համբուրը թող առաջինն ու վերջինը լինի մինչև մեր պսակման օրը... (Մարգարիտ գլուխը խոնարհեցնում է:) Մնաս բարեաւ... (Համբուրում է Կարապետը:) Այժմ մահ կամ ազատութիւն...

Դուրս է գալիս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, մահ կամ ազատութիւն... (Հեղինէին, Կարապետի և Կարապետի:) Օ, հեղինէ...

Գրեշէ է Հեղինէին: Լեւոն Կարապետի և նրանց: Այժմ Գրեշէ և Կարապետ: Պարտի:

Վ Ե Ր Ջ

Ծ Ա Ն Օ Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ամենգլխալիս ներկայացման ժամանակ եթէ դերասանուհիները պակասութիւն լինի, առաջին գործողութեան Զ-դ, Է-դ, Ը-դ և Թ-դ տեսիլները կարելի է դուրս ձգել և 14—34 երեսները փոխարինել հետևեալով:

[Երէ՛ 14]

ԱՏԻԼ

Ի՞նչպէս թէ իմ կնոջ... Աստուած մի արասցէ, էլ մէկ օր տանը չէի պահել... Զգո՛յշ եղէք, ձերդ վսեմութիւն: Մի ինչ որ նոր զինուորական է եկել, էլ պոկ չեն գալիս մէկ մէկուց. հա խօսում են ու խօսում...

ԱՐԿԱՂԻ

Այո՛, ես մի անձանօթ սպայ տեսայ կնոջս հետ:

ԱՏԻԼ

Բայց միթէ կարելի է մի օտար մարդու հետ այդքան երկար զրոյց անել... Այս զիշեր ամենքն էլ նրանց վրայ դարձրին իրանց ուշադրութիւնը. իսկ դուք, ո՛վ գիտէ, ինչ կարևոր խնդիրների մասին էիք մտածում այստեղ... Զգուշացէք, ձերդ վսեմութիւն, ապա թէ ոչ, կինարմատը եթէ մտքումը մի բան գնի, էլ ոչ ոք նրա հախիցը չի կարող գալ. նա իր ուզածը կ'անէ, անպատճառ կ'անէ... Այս էր, եղբայր, իմ բարեկամութիւնը, և յոյս ունիմ, որ ձերդ

վսեմութիւնը չի նեղանալ ինձանից... Ես աւելի լաւ համարեցի աչքիցդ ընկնել, քան վաղը միւս օրը ձեր խայտառակութիւնը տեսնել... չիմա դուք գիտէք, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱՂԻ

Չատ, շատ շնորհակալ եմ, սիրելիս: (Ձեռքն առնելով):
Յատուկ պարտաւորեցրիք:

Երաւոյն փնտ՛ է դէպի առօրին:

ԱՏԻԼ, առանցիկ:

Խեղճ մարդ... Ձեր կնոյ, ասում է... Նրա համար է ասած, որ մարդ իր աչքի դերանը չի տեսնիլ է...

Գլուխը շարժելով՝ փնտ՛ է խոսնում ի խոսք մարդուն հետ: Ես անյայտաբան:

ՏԵՍԻԼ Ե

ՎԱՐԴՈՒՅԻ, ԱՐԿԱՂԻ

ՎԱՐԴՈՒՅԻ, գալով յախ կողմից, կանգնում է Արկաղիին, յինչպէս նա բարձրանում է առօրին առիճաններով:

Պ. Արկաղի, պ. Արկաղի... Սպասեցէք, սպասեցէք:

ԱՐԿԱՂԻ

Ա՛խ, դուք էք... Բարեւ ձեզ, աննման իմ տիկին:

ՎԱՐԴՈՒՅԻ

Այդ ուր էք շտապում այդպէս:

ԱՐԿԱՂԻ

Ուզում էի կնոջս գտնել:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ի՞նչ է պատահել... Ահա, նայեցէք, նա այնտեղ
կանանց շրջանի մէջ նստած խօսում է:

ԱՐԿԱՂԻ

Այո, ճշմարիտ էք ասում:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ի՞նչպէս թէ ճշմարիտ եմ ասում. ես երբ եմ սուտ
խօսել:

ԱՐԿԱՂԻ

Ո՛չ, հրաշալի տիկին, ինձ այնպէս ասացին, որ իբր
կինս շարունակ մի զինուորականի հետ է խօսում, և
յանկարճ զարմացալ, երբ կանանց մէջ տեսալ նրան:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ի՞նչ կալ այստեղ զարմանալու... Հէնց ասենք թէ
շարունակ մի զինուորականի հետ է խօսում, ձեզ
ի՞նչ փոյթ. չէ՞ որ դուք շարունակ ասում էք, թէ
նրան չէք սիրում: (Քննաւորական Կոմիտէի անդամներէն է:)
Նախանձոտ:

ԱՐԿԱՂԻ

Ի հարկէ չեմ սիրում, սակայն այստեղ պատուի
խնդիր է:

ՎԱՐԴՈՒՅԻ, ծիծաղում է:

Ինչի՞դ է պէտք նրա պատիւը, երբ իրան չէք սիրում:

ԱՐԿԱՂԻ

Ես իմ պատիւն եմ ասում:

ՎԱՐԴՈՒՅԻ, աւելի է ծիծաղում:

Հիանալի է, հիանալի... Ահա այդպէս էք տղա-
մարդիկդ, ամենքդ էլ այդպէս էք... Ձեզ ամեն բան
ներելի է. խօսել՝ ունի հետ կամենաք, ժամանակ անցկա-

ցնել՝ ինչպէս կամենաք, բայց հէնց որ խեղճ կինն սկսի
մէկի հետ խօսել, իսկոյն ձեր աչքերը վառվում է
Օթէլլօյի նախանձով... Պատիւս, ասում է... Թողէք
խնդրեմ, մենք ձեր ստրուկներն ենք, ի՞նչ է:

ԱՐԿԱՂԻ

Օ՛հ, աննման իմ տիկին, ո՛չ թէ ստրուկ, դուք
երկնային հրեշտակ էք ինձ համար:

ՎԱՐԴՈՒՅԻ

Դարձեալ... Ես ձեզ քանիցս անգամ արգելել եմ
ինձ հետ այդ ձևով խօսել:

Լալու՞մ է երաժշտութիւն, որ շուրջով բարբարոս է:

ԱՐԿԱՂԻ

Ի՞նչ անեմ, տիկին, որ չեմ գիմանում... Ես ձեզ
սիրում եմ, դուք գիտէք, որ սաստիկ սիրում եմ ձեզ:

ՎԱՐԴՈՒՅԻ, հարեալով աջ կողմէ:

Լռեցէք, խնդրեմ, ես ձեզ չեմ հաւատում և կա-
րիք էլ չունիմ հաւատալու... Սիրել ուզում էք, սի-
րեցէք ձեր կնոջը, նա ըստ ամենայնի արժանի է
ջերմ սիրոյ. բայց դուք նրան գնահատել չէք իմանում:

ԱՐԿԱՂԻ, հարում է հարմար:

Միթէ մեղաւոր եմ, տիկին, որ ես ձեզ եմ սիրում:

ՎԱՐԴՈՒՅԻ

Ա՛խ, բաւական է, խնդրեմ. դուք ինձ ձանձրա-
ցնում էք վերջապէս:

ԱՐԿԱՂԻ

Բարկացէք, տիկին, բարկացէք, բայց ես դարձեալ
յոյս ունիմ, որ մի օր քաղցր աչքով կը նայէք վրաս:

ՎԱՐԴՈՒՅԻ, հեգնաւորական:

Ի՞նչպէս չէ, հաստատ պահեցէք այդ յոյսը:

ԱՐԿԱԴԻ

Յոյսը լաւ բան է, տիկին:

ՎԱՐԴՈՒՅԻ, *աւելի մէջ կենալով:*

Դուք անուղղելի էք, պարոն:

ԱՐԿԱԴԻ, *նայեալ:*

Ես կ'ուղղուիմ, տիկին, երբ դուք սկսէք մի փոքր սիրել ինձ:

ՎԱՐԴՈՒՅԻ, *հաղորդեալ:*

Հաւատացէք, պ. Արկադի, ես ձեզ վերջին անգամն եմ ասում, որ եթէ չէք դադարել այդ լեզուով խօսել հետո, դուք յաւիտեան կը զրկուիք իմ բարեկամութիւնից:

ԱՐԿԱԴԻ

Տէրը մի արասցէ, աւելի հեշտ է ինձ գլխիցս զըրկուիլ, գոնէ այն ժամանակ կը խղճաք ինձ: (Վարդուհին ծիծաղում է:) Ծիծաղեցէք, ծիծաղեցէք, տիկին, իսկ ես հաւատացած եմ, որ դուք այն ժամանակ դառնապէս լաց կը լինիք, թէ ինչո՞ւ ինձ այսքան տանջեցիք:

ՎԱՐԴՈՒՅԻ, *աւելի է ծիծաղում:*

Սա՛ էլ կը հագնեմ, այնպէս չէ:

Շարունակում է ծիծաղել:

ԱՐԿԱԴԻ

Ի հարկէ կը հագնէք:

ՎԱՐԴՈՒՅԻ

Լաւ, լաւ, վերջ դնենք այս կատակներին... (Թանաջանալով:) Բարեհաճեցէք ինձ ուստի կողմը տանել: Ի դէպ, դուք կամենում էիք ձեր կնոջը տեսնել:

ԱՐԿԱԴԻ

Ա՛խ, տիկին, խելքից հանում էք մարդու և դարձեալ ինձ էք մեղադրում:

ՎԱՐԴՈՒՅԻ, *լռանալով Արկադիի լռելի:*

Ուրեմն ցտեսութիւն:

Ծիծաղելով հեռանում է:

ԱՐԿԱԴԻ

Տիկին, տիկին... Աղաչում եմ, լսեցէք... (Վարդուհին ծիծաղում է խորում և լռում է երկրորդական ժամանակ: Նայելով հեռու, անհայտանում է բէճի շաւի կողմից:) Այս կինը խելագարութեան կը հասցնէ ինձ...

ՏԵՍԻՆ Զ [Թ]

ՄԱՐԳԱՐԻՏ, *պարանոցին մարգարաշար մանեալ, ԱՐԿԱԴԻ*

ՄԱՐԳԱՐԻՏ, *դուրս գալով սանդուղից:*

Ա՛հ, դու այստեղ ես... Ի՞նչպէս է որ մենակ ես մնացել:

ԱՐԿԱԴԻ

Ասա, խնդրեմ, ո՞վ է այն զինուորականը, որի հետ դու ամբողջ երեկոյ այնպէս երկար ու չափշտակուած խօսում էիր:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա մեր չայտնի վիպասան Արտաշէս Արամեանն է, որ նոր վերադարձել է ճանապարհորդութիւնից:

ԱՐԿԱԴԻ

Ո՛րտեղից ծանօթացար դու նրան:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա իմ վաղեմի ճանօթն է:

ԱՐԿԱԴԻ

Վաղեմի ճանօթ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, դեռ քեզ չէի էլ տեսել, որ նրան ճանաչում էի:

ԱՐԿԱԴԻ

Ինձ զարմացնում ես, սիրելիս:

ՄԱՐԳԱՐԻՏ

Միամիտ եղիր, այստեղ զարմանալու ոչինչ չկա...
Պ. Արամեանը մեզ դրացի էր, երեխայ ժամանակ միասին ենք մեծացել և ես դեռ տասնուհինգ տարեկան հասակում ուսումնառումս շարունակում էի, որ նա իր ուսման ընթացքն այստեղ աւարտելով՝ գնաց համալսարան...

ԱՐԿԱԴԻ, *հիշելով:*

Եւ չկարողանալով շարունակել համալսարանական ուսումը, հարկաւ վճարեցաւ այնտեղից և մտաւ զինուորական ծառայութիւն:

ՄԱՐԳԱՐԻՏ

Սխալվում ես, պարոն, սխալվում, դու միայն քեզ ես ընդունակ կարծում... Եթէ դու փոքրիշատէ ընթերցասէր լինէիր ու մէկ անգամ գոնէ աչքի անցնէիր նրա գեղեցիկ հեղինակութիւնները, էլ այդպէս չէիր խօսիլ... Ինչեւիցէ, տասը տարի կը լինի, որ մենք բաժանուել ենք և ահա այսօր առաջին անգամն ենք տեսնում միմեանց:

ԱՐԿԱԴԻ

Չատ բարի, բայց ի՞նչ էիք խօսում իրար հետ ծանր ու բարակ այսքան բազմութեան մէջ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Առանձին ոչինչ, ես իմ անցկացրած օրերն էի պատմում նրան, նա էլ իրանը: Նա եկել է այստեղ մի ինչ որ աշխարհագրական, թէ ազգագրական ժողովի յանձնարարութեամբ... Նա շատ ազնիւ մարդ է:

ԱՐԿԱԴԻ

Հաւատում եմ, բայց այնքան երկար խօսելով նրա հետ, դու ամենքի ուշադրութիւնը քեզ վրայ դարձրիր:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛ւմ ինչ գործն է, որ ես իմ բարեկամի հետ խօսում եմ:

ԱՐԿԱԴԻ

Բարեկամ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այո, բարեկամ. զարմանում ես թէ նախանձում, չզիտեմ:

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ զարմանում եմ, ոչ նախանձում. ես նեղանում եմ միայն, որ հասարակութեանն ի զուր առիթ ես տալիս վրադ խօսելու:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛վ է ինձ վրայ խօսողը:

ԱՐԿԱԴԻ

Երևի խօսողներ կան, որ ասում եմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛վ, ո՛վ. ասան, խնդրեմ, ո՛վ է խօսում:

ԱՐԿԱՂԻ

Ես քեզ ասում եմ, որ խօսում եմ. իսկ եթէ ինձ չես հաւատում, կարող ես բարեկամիս հարցնել, տես ինչ է ասում:

ՄԱՐԳԱՐԻՏ

Այսինքն:

ԱՐԿԱՂԻ

Պ. Աբէլին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Խնդրեմ, խնդրեմ. նա թող իր գլխին տիրութիւն անէ:

ԱՐԿԱՂԻ, գոյնը նշարած:

Դրանով ինչ ես ուզում ասել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչինչ...

Այսինքն հայտնի է թանձրան:

ԱՐԿԱՂԻ, առանցին:

Միթէ կասկածում է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ ինչ կը վերաբերի քո նախանձելուն, կամ աւելի ճիշդն ասած՝ նեղանալուն, ինչպէս ինքդ ես ասում, այդ, չիրաւի, ինձ զարմացնում է... Որպէս թէ ես քեզ համար սրեւնէ նշանակութիւն ունիմ և կամ սիրելի եմ քեզ:

ԱՐԿԱՂԻ, որտեղից որտեղ:

Ի հարկէ որ սիրելի ես:

ՄԱՐԳԱՐԻՏ, հեգեգեհ:

Եւ շատ ես սիրում ինձ:

ԱՐԿԱՂԻ

Չատ, այո, շատ:

ՄԱՐԳԱՐԻՏ, որտեղից:

Եւ բացի ինձանից էլ ուրիշ ոչ ոքի չես սիրում, ի հարկէ:

ԱՐԿԱՂԻ

Ոչ ոքի, վկայ է Երկինքը:

ՄԱՐԳԱՐԻՏ, լուրջ շարժում է գլուխը և խորին դառնութիւն:

Նայիր վերև. Նայիր և տես, թէ քանի վկայ կայ այնտեղ... Նայիր, Նայիր, մի վախենար, աստղերը ձայն չունին. նրանց լեզուն ամեն մարդ միայն ինքն է հասկանում, և եթէ մի բան ասեն այժմ, մենակ քեզ կ'ասեն:

ԱՐԿԱՂԻ

Ինչքան ես ասում, ես ոչինչ չեմ հասկանում: Եթէ բան գիտես, կամ մի մարդ սուտ լուրեր է հաղորդել քեզ իմ մասին, այն ասա:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ոչ ոք ինձ բան չէ ասել և ոչ էլ ես ուրիշի խելքով կամ խօսքով եմ ման գալիս: Ինչ որ գիտեմ, ինձ ու ինձ գիտեմ և հաստատ էլ համոզուած եմ, որ դու իմ մասին այնքան ես մտածում, որքան Ձինաստանի մասին:

ԱՐԿԱՂԻ

Ուրիշ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ուրիշ ոչինչ... (Առանցին և հեգեգեհ:) Ես քեզ սիրում եմ, ասում է...

ԱՐԿԱԴԻ, *առանձին*:

Աստուած այս կնոջը կատարեալ պատիժ է ստեղծել ինձ համար:

Դուք եւ Գեորգի չափ կողմնակից:

ՏԵՍԻԼ Է [ԺԱ]

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԷ

ՄԱՐԳԱՐԻՏ, *առանձին* Հեղինէին, որ շատուրդ առաջ է գալիս*աջ կողմից, դարձապես հանգիստ է առնում:*

Այս հիմն եմ տեսնում:

ՀԵՂԻՆԷ

Մարգարիտա...

ՄԱՐԳԱՐԻՏ

Իմ հեղինէ, դու ես...

ՀԵՂԻՆԷ

Հոգիս...

ՄԱՐԳԱՐԻՏ, *Հեղինէին չեռն է հանած եւ առաջ է գալիս:*

Այս ինչպէս, այս երբ:

ՀԵՂԻՆԷ

Այսօր, հէնց այսօր եմ եկել:

ՄԱՐԳԱՐԻՏ

Առաւօտուայ գնացքով, ի հարկէ:

ՀԵՂԻՆԷ

Այո:

ՄԱՐԳԱՐԻՏ

Յետոյ միթէ չէիր կարող իմաց տալ, որ գալիս քեզ զիմաւորելու:

ՀԵՂԻՆԷ

Հէնց դրա համար էլ չուզեցի իմաց տալ, որ քեզ անհանգիստ չանեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ինչէր ես ասում, հեղինէ, ինչպէս թէ անհանգիստ չանես: Միթէ այդպէս է:

ՀԵՂԻՆԷ

Գիտեմ, գիտեմ, անգին իմ Մարգարիտ, որ դու էլ ինձ այնպէս ես սիրում, ինչպէս ես քեզ, և պատճառն էլ հէնց այդ մեր սէրն է, որ ես չուզեցի առաւօտեան անուշ քունդ խանգարել... Ա՛խ, իմ հրեշտակ Մարգարիտ, վերջապէս նորից արժանացայ

[Եւ այն էրէն 35]

«ԱՄՈՒՍԻՆՆԵՐ» Կօմէդիայի առաջին ներկայացումից
գոյացած գումարը, 822 ռ. (Առ 1-ն Յունուարի 1899 թ.
1227 ռ. 67 կ.), յանձնուած է Կովկասեան Հայոց Բարեգոր-
ծական Ընկերութեան Խորհրդին ի պահպանութիւն մին-
չև որ Դրամատիքական Ընկերութիւնը մի օրինական՝ իր
յարատեւութիւնն ապահովացնող կազմակերպութիւն ու-
նենայ: (Տես 1890 թ. „Արձագանք“ շաբաթաթերթի № 32
և „Մշակ“ լրագրի № 125:)

1769X
17698
17699
17700
17701
17702
17703

2013

